

ԼՐԱՏՈՒ  
ՀԵՅԿԼԿԸՆ  
ԳՐԱԳԵՐԱՆԵՅԻՆ  
ԼՍՈՑԻԼՑԻԼՑԻ

1(5)



2025

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ARMENIAN LIBRARY ASSOCIATION

**ԼՐԱՏՈՒ**

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

*Կիսամյա գիտա-տեղեկատվական հանդես*

**HERALD**

OF THE ARMENIAN LIBRARY ASSOCIATION

*A Biannual Scientific-Informative Journal*

**2025**

**1(5)**

ԵՐԵՎԱՆ- YEREVAN

2025

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից  
տարին երկու անգամ (էլեկտրոնային)  
The journal has been published since 2023  
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է  
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից  
Publication is recommended by  
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ղ ո Ւ Ր Ղ

Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*

Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*

Անդամներ՝ *Գևորգ Բարդակչյան, Լևոն Ավդոյան, Արա Ղազարյան,*

*Ալբերտ Խառատյան, Տիգրան Զարգարյան, Վահե*

*Թորոսյան, Գագիկ Սուքիասյան, Վիկտորիա Խուրշուդյան,*

*Արարատ քին. Պողոսյան, Ավագ Հարությունյան,*

*Համո Սուքիասյան, Միհրան Մինասյան, Ռաֆիկ Ղազարյան*

#### Editorial Board

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Gevorg Bardakchyan, Levon Avdoyan, Ara Ghazaryan, Albert  
Kharatyan, Tigran Zargaryan, Vahe Torosyan, Gagik Sukiasyan,  
Viktoria Khurshudyan, Priest Ararat Poghosyan, Avag Harutyunyan,  
Hamo Sukiasyan, Mihran Minasyan, Rafik Ghazaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

## **ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ**

### **ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ**

Հարգելի՛ ընթերցող

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայկական գրադարանային ասոցիացիայի «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի 2025 թ. առաջին համարը, ուր հոդվածները խմբավորված են «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մարզային և համայնքային գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Հայկական գրադարանային ասոցիացիա», «Կրթական հաստատությունների գրադարաններ», «Փաստեր և իրադարձություններ» խորագրերի ներքո:

Վերջին մեկ տարին նշանակալի էր գրադարանային բնագավառում տեղի ունեցած մի շարք կարևոր գործընթացներով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գրադարանավարների վերապատրաստման և ատեստացիայի համակարգի ներդրումը: Այս գործընթացը նորություն է Հայաստանի համար, սակայն միջազգային փորձը վկայում է, որ նման համակարգերը նպաստում են գրադարանի աշխատակազմի մասնագիտական կարողությունների բարձրացմանն: Միջազգային փորձի տեղայնացումը կարևոր քայլ է ոլորտի զարգացման ճանապարհին:

21-րդ դարի գրադարանները այլևս միայն գրքերի պահոցներ չեն: Այսօր դրանք կոչված են ապահովելու տեխնոլոգիապես հագեցած միջավայր, ապահով ու արագ տեղեկատվական հոսք, ինչպես նաև ուսումնագիտական ու հաղորդակցման հարթակ: Մասնավորապես՝ ուսանող-ընթերցողների պահանջները հստակ են և արդիական՝ բազմաբովանդակ թվային շտեմարաններ, թեմատիկ հասանելիություն և բաց համակարգեր: Այս համատեքստում էլեկտրոնային շտեմարանների ստեղծումը դառնում է ժամանակի հրամայական:

## ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Մշակութային ժառանգության պահպանությունը և հանրահռչակումը մնում են մեր ուշադրության կենտրոնում: Այս համարում ևս տեղ են գտել նյութեր՝ նվիրված նորանուն հայերեն տպագրությունների բացահայտմանը, որոնք նոր լույս են սփռում հայ գրատպության պատմության վրա: Կարևորվում ենք նաև թեմատիկ վերլուծությունները, այդ թվում՝ «Բազմավէպ» ամսագրում դաստիարակության վերաբերյալ քննարկումները, որոնք կարող են կիրառվել նաև արդի շրջանում:

Մարզային և համայնքային գրադարանների թեման մշտապես արդիական է: Դրանք համայնքային մշակութային կյանքի զարկերակներն են, որոնք նպաստում են ընթերցանության մշակույթի ձևավորմանը և կրթական գործընթացների խթանմանը: Նույնիսկ փոքր համայնքներում գրադարանն այսօր կարող է դառնալ գիտելիքի կենտրոն: Առանձնակի կարևորություն ունեն նաև դպրոցական գրադարանները, որոնք կարող են ամրապնդել ուսումնական համակարգի շարունակականությունն ու երեխայի ընթերցողական կարողությունների զարգացումը:

Ներկայացվող համարում ընդգրկված են նաև տեղական ու միջազգային գրադարանային նորություններ, ինչպես նաև անդրադարձ այն անհատներին, որոնց նվիրված և հետևողական աշխատանքը նպաստել է գրադարանային ոլորտի կայուն զարգացմանը: Նրանց փորձն ու օրինակելի նվիրվածությունը ներշնչանքի աղբյուր կարող են լինել նոր սերնդի մասնագետների համար:

Հուսով ենք, որ այս համարը ևս կլինի օգտակար և կնպաստի մասնագիտական խնդիրների կարգավորմանը: Շնորհակալություն ձեր ընթերցողական հավատարմության և ոլորտի զարգացման գործում ունեցած ներդրման համար:

---

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

---

# ՈՒՍԱՆՈՂ- ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ Ընթերցանության տեսանկյուն\*

ՀՏԴ: 024+004

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-5

**ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
**Հայաստանի պետական տնտեսագիտական**  
**համալսարանի գիտական գրադարան**

ORCID: [0009-0007-2579-1346](https://orcid.org/0009-0007-2579-1346)

Հոդվածի նպատակն է պարզաբանել ուսանող-ընթերցողների կողմ-  
նորոշիչները գրադարանային միջավայրում արդի ժամանակահատվածում:  
Ուսումնասիրության շրջանակը ներառում է ուսանողության ընթերցողական  
առաջնահերթությունները՝ ընդհանուր ընթերցանության և ակադեմիական  
գրադարանի ռեսուրսների օգտագործման համատեքստում: Հոդվածում  
վերլուծվում են վիճակագրական տվյալներ, որոնք տվյալ ժամանակահատ-  
վածում հասանելի են եղել թեմայի վերաբերյալ, եղել են ստույգ և լիարժեք:

Ուսումնասիրության շրջանակում վերլուծության են ենթարկվել հայե-  
րեն և օտարալեզու գիտական հոդվածներ, ինչպես նաև էլեկտրոնային գիտա-  
տեղեկատվական հրատարակումներ, որոնք առնչվում են ուսանողության  
ընթերցողական վարքագծի և գրադարանային ռեսուրսների օգտագործման  
խնդիրներին: Դիտարկումների հավաքման համար կիրառվել է անանուն  
հարցման մեթոդը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևաչափով:  
Հարցման արդյունքները ներկայացվել և մեկնաբանվել են հոդվածի երրորդ  
բաժնում՝ տեքստային վերլուծության և գրաֆիկական պատկերների միջոցով:

---

\* Հոդվածը ներկայացվել է 23.05.2025, գրախոսվել է 12.06.2025, ընդունվել է  
տպագրության 23.06.2025:

The article was submitted on 23.05.2025, reviewed on 12.06.2025, accepted for  
publication on 23.06.2025.

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Վերլուծվել են վիճակագրական տվյալներ, որոնք ստույգ են, լիարժեք և հասանելի: Օգտագործվել է «Statista»<sup>1</sup> վիճակագրական շտեմարանը, որը տրամադրում է հուսալի վիճակագրական տեղեկատվություն:

*The purpose of this article is to clarify the orientation and behavioral tendencies of student-readers within the library environment in the contemporary period. The scope of the study includes the reading priorities of students in the context of general reading practices and the use of academic library resources. The article analyzes statistical data that were accessible, accurate, and complete at the time of the research and directly related to the topic under investigation. Within the framework of the study, both Armenian and foreign-language scholarly articles, as well as electronic scientific publications, were examined and analyzed. These sources focus on student reading behavior and issues related to the use of library resources.*

*To collect empirical data, an anonymous survey method was employed in both electronic and paper formats. The results of the survey are presented and interpreted in the third section of the article through textual analysis and graphical illustrations. Particular emphasis is placed on the use of statistical data as a foundation for practical analysis. The global statistics platform Statista.com was utilized as one of the main sources, providing reliable and comprehensive statistical information relevant to the study.*

**Բանալի բաներ**<sup>1</sup> Թվային միջավայր, թվային կողմնորոշիչներ, գրադարանային միջավայր, թվային և ակադեմիական ռեսուրսներ, ուսանող-ընթերցողներ, ընթերցանության վիճակագրական վերլուծություն:

**Ինչպես հղել**<sup>1</sup> Հովհաննիսյան, Ա. (2025), Ուսանող-ընթերցողների կողմնորոշիչները թվային դարաշրջանում. ընթերցանության տեսանկյուն, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 5-28.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-5)

---

<sup>1</sup> <https://www.statista.com/> (23.06.2025)

**How to cite (APA style):** Hovhannisyán, A. (2025). Orientations of Student-Readers in the Digital Age: A Reading Perspective, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 5-28.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-5)

### **Ներածություն**

«Գիրքը–դա արտաքին ճանաչողություն է: Այսօր մարդկային սուբյեկտիվություն հասկացությունը փոխվում է: Ճանաչողության և գիտակցության բազմաթիվ ավանդույթներ և ուսումնասիրություններ պետք է վերակառուցվեն: Դա վերաբերում է և ընթերցանությանը» (ՄԵՕՒՈՅ 2020, 77-83): Ընթերցանությունը, որպես կարևոր բաղադրիչ, ներառվում է կրթական ամենատարբեր գործընթացների մեջ:

Որպես գիտելիքների ժառանգման և տեղեկատվության տարածման կարևոր միջոց՝ ընթերցանությունը կարևոր դեր է խաղում մարդկային քաղաքակրթության զարգացման գործընթացում: Ընթերցանության էությունը անընդհատ փոխվում է միջավայրի փոփոխությունների հետ մեկտեղ: «Մարդկային քաղաքակրթության զարգացման գործընթացին նայելով՝ կարող ենք տեսնել, որ տեխնոլոգիաների գրեթե յուրաքանչյուր առաջընթաց որոշակի նորարարություն է բերել անհատի ընթերցելու վարքագծի և սովորությունների մեջ» (PEGGY NZOMO 2019, 831):

Ժամանակաշրջանի պահանջներին համահունչ՝ ընթերցանությունն աստիճանաբար ստանում է «թվային» բնույթ՝ դառնալով գերակայող ձևաչափ: Տեխնոլոգիական առաջընթացը ևս խթանում է թվային ընթերցանության պահանջարկը: Վերջին տարիներին ընթերցման ի հայտ եկած նոր ու հարմար ձևերը նպաստում են էլեկտրոնային ընթերցանության աճին՝ միաժամանակ վերացնելով ժամանակի, տարածության և միջավայրի սահմանափակումները:

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Թվային այս հարափոփոխ դարաշրջանում, երբ միասնական համընդհանուր ընդունելի սահմանում չկա «թվայնացում» տերմինի վերաբերյալ, ավելի հաճախ այն դիտարկվում է որպես «Մեծ տվյալներ»-ի<sup>2</sup> դարաշրջան: Ամերիկացի փիլիսոփա, սոցիոլոգ և ֆուտուրիստ Էլվին Թոֆլերը տեղեկատվական հասարակությունը ձևակերպում է որպես քաղաքակրթական զարգացման երրորդ մակարդակ<sup>3</sup>:

Տեխնոլոգիաների ներդրումը կյանքի բոլոր ոլորտներում, դրանց արագ քայլերով փոփոխությունները ստիպում են ոչ միայն հարմարվել առաջընթացի դիմին, այլև ձեռք բերել նոր որակներ, հմտություններ, գործիքակազմ աշխատատեղու համար այսպես կոչված «Z» սերնդի հետ: Դա մարտահրավեր է մի շարք ոլորտներին, այս պարագայում նաև գրադարաններին և գրադարանավարներին: Վերջերս հետազոտողները հաճախ են դիմում այսպես կոչված սերունդների տեսությանը, որը 1991 թ. առաջարկել են ամերիկացի պատմաբաններ Ն. Հոուն և Ու. Շտրաուսը (HOWE, STRAUSS 1991, 538): Դա հիմնված է որոշակի սոցիալ-մշակութային համատեքստում ձևավորված մարդկանց արժեքային կողմնորոշումների վրա (ԱԹՈՅԱՆ, ՕՀԱՆՅԱՆ, ՄՈՎՍԻՍՅԱՆ 2024, 89):

Թվայնացումը փոխում է մտածելակերպը, սոցիալական վարքը, ընկալման հնարավորությունները: Գրադարանները, մասնավորապես ակադեմիական գրադարանները, աշխատելու են 21-րդ դարի

---

<sup>2</sup> BIGdata <https://bigdata.com/> (23.06.2025)

<sup>3</sup> Aivazow, A., Belikov, V. (2023), A. Toffler's Civilization Waves and Cycles of Economic Development' <https://www.sociostudies.org/almanac/articles/a-toffler-s-civilization-waves-and-cycles-of-economic-development/>

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

երկու սերունդների Y / 1982-2004 թթ. ծնվածներ<sup>4</sup>, Z՝ այսինքն 2003-ից հետո ծնվածների հետ<sup>5</sup>:

Ինչու՞ է դա կարևոր: Առանց հասկանալու այն ընթերցողին, որի հետ պիտի աշխատեն գրադարանները, հնարավոր չէ սահմանել գրադարանների աշխատանքների կողմնորոշիչներ, ձևակերպել երկարաժամկետ պլաններ, ընտրել աշխատակազմ և այլն: Այսօրվա երիտասարդ ընթերցողների արժեքային կողմնորոշիչների վրա մեծապես ազդում է թվային հեղափոխությունը՝ հիբրիդային հարթության ձևով. թվային տիրույթը դառնում է ուսանողի սոցիալական միջավայրի բնութագրիչներից մեկը: Այն փոխում է իրական և վիրտուալ աշխարհների սահմանագիծը, թույլ տալիս միաժամանակ գոյատևել երկու աշխարհներում: Իսկ թե որքանով է այսօրվա ուսանող-ընթերցողը ճիշտ օգտագործում այս հնարավորությունը, հարցի մյուս, ավելի կարևոր կողմն է: Այստեղ գրադարանը և գրադարանավարը «մտնում են մարտի մեջ»:

«Ժամանակակից աշխարհում գրադարանի տեղի հետ կապված կարծրատիպերի հաղթահարումը անմիջականորեն կապված է այս հաստատության պատրաստակամության հետ՝ անցնելու շարունակական փոփոխություններին հարկադիր հարմարվողականության հաստատված ավանդույթներից դեպի սեփական զարգացման հանգամանքների և պայմանների վրա նպատակային ազդեցության համակարգի կառուցմանը» (ЛОПАТИНА, ГРУШЕВСКАЯ 2023, 2):

Քանի որ սույն հետազոտության նպատակը չէ խորապես բացահայտել ընթերցողի սոցիալական վարքագիծը, ներկայացնենք

---

<sup>4</sup> Հաճախ կոչվում է նաև հազարամյակի սերունդ:

<sup>5</sup> Strauss-Howe Generational Theory <https://www.cdamm.org/articles/strauss-howe> (23.06.2025)

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

ինչպիսին են ընթերցանության վիճակագրական ցուցանիշները աշխարհում և Հայաստանում:

### ***Ընթերցողական կողմնորոշիչները աշխարհում***

Գիտատեխնիկական առաջընթացը, տեխնոլոգիաների զարգացումները հանգեցրին նրան, որ ընթերցողները «իրացնում են» իրենց գործառույթները նոր միջավայրում: Այդ միջավայրը կարելի է բնութագրել մի քանի հատկանիշներով.

➤ Առաջին - ընթերցողը գտնվում է երկու աշխարհներում՝ իրական և թվային: Դրանց միջև սահմանները հաճախ անհետանում են:

➤ Երկրորդ - Տեղեկատվության առատությունը ընդհուպ մինչ անսահմանափակություն: Դրական կողմի հետ մեկտեղ պետք է նշել՝ միշտ չէ, որ այդ տեղեկատվությունը զուգորդվում է հավաստիության, գիտականության, արժեքավորության հետ:

➤ Երրորդ - տեղեկատվության առատությունը ընթերցողին տալիս է տարբեր հարթակներում ինքնարտահայտվելու, տեղեկատվությունը փոխանակելու և այլ հնարավորություններ:

➤ Չորրորդ - տեղեկատվության ազատ ընտրության հնարավորություն:

Եզրահանգումը հետևյալն է. իրական և թվային աշխարհներում գործող ընթերցողի կողմնորոշիչների իմացությունը չափազանց կարևոր է գրադարանավարների համար՝ ընթերցանությունը կազմակերպելու, վարելու, գրադարանները ճիշտ համալրելու և այլ հարցերի համար:

Ներկայացնենք որոշ վիճակագրական ցուցանիշեր, որոնք բնութագրում են ընթերցանության արդի վիճակն աշխարհում: Նշենք, որ 18-25 տարիքային խմբին, մասնավորապես՝ ուսանողների ընթերցանությանը նվիրված համապարփակ վերլուծություններ գրեթե չկան.

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

դրանք վերաբերում են առավելապես ընթերցանության ընդհանուր ցուցանիշներին: Տարբեր երկրներում ընթերցանության ցուցանիշների վրա ազդող գործոնները նույնպես տարբեր են. սկսած երկրների կրթական քաղաքականությունից մինչև մարդկանց սոցիալական պայմանները, ավանդույթները, կրթական հաստատությունների քանակը և բազմաթիվ այլ գործոններ:

2025 թ. տվյալները ցույց են տալիս ուսանողների և մեծահասակների ընթերցանության վիճակն աշխարհում: Չինաստանում հարցվածների 73%-ն օրական առնվազն 30 րոպե անցկացնում է գրքեր կարդալով: Աուդիոգրքերն այստեղ ձեռք են բերել ժողովրդականություն, չինացի հարցվածների 38.29%-ը ամեն օր լսում է ավելի քան 30 րոպե:

2025 թ. երեք ամսվա տվյալներով, Մեծ Բրիտանիայում մարդկանց 75%-ը կարդացել է առնվազն մեկ գիրք, իսկ 7%-ը՝ 12 կամ ավելի: Աուդիոգրքերի օգտագործումը համաշխարհային մասշտաբով տարբեր է. Չինաստանը, Հնդկաստանը և Նիգերիան առաջատար են՝ յուրաքանչյուր երկրի համար հարցվածների 43%:

### ***Ընթերցանությունը ԱՄՆ-ում***

Համաձայն 2024 թ. “Ranking Consultancy Group”-ի արդյունքների՝ աշխարհի վարկանիշային աղյուսակում ընդգրկված համալսարաններից լավագույն 30-ի մեջ ընդգրկված են Միացյալ Նահանգների 19 տարբեր համալսարաններ: Կանխատեսումների համաձայն, մինչև 2032 թ. ԱՄՆ-ում տարեկան կշնորհվի գրեթե հինգ միլիոն բարձրագույն կրթական աստիճան: Նշանակու՞մ է արդյոք սա, որ համապատասխանաբար մեծանալու է ընթերցողների թիվը: Պատասխանը միանշանակ չէ: ԱՄՆ Կրթության նախարարության Կրթության վիճակագրության ազգային կենտրոնի կողմից 2022 թ. հրապարակված զեկույցը (REPORT 2022) արձանագրում է կրթության վրա համավարակի

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

ազդեցության, համապատասխանաբար ընթերցանության վիճակի վատթարացման միտումներ: Մասնագետները ենթադրում են, որ համավարակի հետևանքները դեռ զգացվում են: 2021 թ. դրությամբ համալսարանական կրթություն ունեցողների 88%-ը նախորդ տարում կարդացել կամ լսել է աուդիոգիրք: Էլեկտրոնային ընթերցողների թիվը նույնպես աճել է. կանխատեսումների համաձայն՝ 2029 թ. ԱՄՆ-ում էլեկտրոնային օգտատերերի թիվը կհասնի 75.4 միլիոնի: Կրթական մակարդակը զգալիորեն ազդում է ընթերցանության սովորույթների վրա. բարձրագույն կրթություն ունեցողների 88%-ը վերջին մեկ տարվա ընթացքում կարդացել է գիրք, ի տարբերություն միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեցողների՝ 59%:

2022 թ. վերջին անցկացված հարցման արդյունքների համաձայն՝ ամերիկացի գրքասերներն ու ընթերցողները դեռևս ամենաշատը կարդում են տպագիր գրքեր, որոնց 50%-ը կարդացել է փափուկ կամ կոշտ կազմով գիրք: Kindle-ը և այլ էլեկտրոնային ընթերցիչները գրավիչ տարբերակ են, հարցվածների 36%-ը նախընտրել է դրանք:

### ***Ի՞նչ են կարդում եվրոպական և ասիական երկրներում:***

Ընթերցանության նախասիրությունները տարբեր են եվրոպական երկրներում: 2025 թ. դրությամբ Իսպանիան և Լեհաստանը առաջատարներն են ընթերցանության առումով. երկու երկրներում էլ հարցվածների 48%-ը կարդում է: Էլեկտրոնային գրքերը գնալով ավելի նախընտրելի են դառնում ուսման համար. Բելգիայի ֆրանսախոս մասի ուսանողների 44%-ը 2019 թ. նախընտրել է էլեկտրոնային գրքերը տպագիր գրքերի փոխարեն: Շվեյցարիայում ուսանողների 24%-ը կարդում է ամեն օր կամ շաբաթը մի քանի անգամ:

Այնուամենայնիվ, Եվրոպայում ընթերցանության մեջ կա սոցիալ-տնտեսական անհավասարություն: Լյուքսեմբուրգում գրանցվել է ամենաբարձր անհավասարությունը. վճարունակ ուսանողները 2018

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

թ. 122 միավորով ավելի բարձր հնարավորություններ են ունեցել, քան անապահով ուսանողները:

Եվրամիության 27 երկրներում գրքերի, ամսագրերի և էլեկտրոնային ուսուցման նյութերի առցանց գնումները աճել են՝ 2019 թ. հասնելով 23%-ի: Այս միտումը վկայում է եվրոպացի ուսանողների և ընթերցողների շրջանում թվային ընթերցանության նյութերի նկատմամբ հետաքրքրության աճի մասին:

Չնայած ամբողջ աշխարհում համալսարանական գրադարաններում կարդացող ուսանողների թվի վերաբերյալ համապարփակ տվյալներ չկան, մի քանի վիճակագրական տվյալներ հնարավորություն են տալիս պատկերացում կազմել գրադարանների օգտագործման և ուսանողների շրջանում ընթերցանության մասին: Հարավային Կորեայում ակադեմիական գրադարաններից օգտվողների թիվը զգալիորեն նվազել է. 2023 թ. գիրք է ձեռք բերել մոտ 840,000 մարդ, ինչը 87,5%-ով պակաս է 2008 թվականից վեր: Անգլիայում 2019-2020 թթ. ուսանողների 61,2%-ը հանրային գրադարան է այցելել, ինչը 2008-2009 թթ. 75,3%-ի համեմատ նվազել է: Ճապոնիայում համալսարանական գրադարանները 2021 թ. ուսանողներին տրամադրել են մոտ 9,86 միլիոն գիրք, ինչը զգալի նվազեցնում է 2020 թ. 21.8 միլիոնի համեմատ: Այս անկումը կարող է պայմանավորված լինել COVID-19 համավարակով:

Շվեյցարիայում 2019 թ. Յյուրիխի կենտրոնական գրադարանը համալսարանական գրադարանների շարքում ունեցել է ակտիվ օգտատերերի ամենամեծ թիվը՝ 48,249 օգտատեր: Բազելի համալսարանական գրադարանը 2022 թ. հայտնել է մոտ 15,000 ակտիվ օգտատիրոջ մասին, ինչը նվազում է նախորդ տարիների համեմատ:

Ընթերցանության վերաբերյալ Գերմանիայում 2021 թ. անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ ուսանողների 34,1%-ը

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

շաբաթական մի քանի անգամ գիրք է կարդում, համեմատած ընդհանուր բնակչության 20,4%-ի հետ: Սա ենթադրում է, որ ուսանողները հակված են ավելի հաճախ կարդալ, քան միջին վիճակագրական անձը, չնայած պարտադիր չէ, որ դա անեն համալսարանական գրադարաններում: Այս թվերը ցույց են տալիս, որ չնայած գրադարանները շարունակում են կարևոր ռեսուրսներ լինել ուսանողների համար, օգտագործման ձևերը փոխվում են, հնարավոր է՝ տեղեկատվության թվային հասանելիության աճի և ուսումնառության սովորությունների փոփոխության պատճառով:

Ինչ վերաբերում է ընթերցանության սեռային տարբերություններին, ապա վերջին սովյալները ցույց են տալիս, որ իգական սեռի ներկայացուցիչները հակված են ավելի շատ կարդալուն, քան արական սեռինը: Մեծ Բրիտանիայում, 2025 թ. մարտի դրությամբ, կանանց 11%-ը հայտնել է, որ նախորդ երեք ամիսների ընթացքում կարդացել է 12 կամ ավելի գիրք՝ գրեթե եռապատկելով տղամարդկանց տոկոսը: Նմանապես, Գերմանիայում 2024 թ. աղջիկների 47%-ը գիրք է կարդում ամեն օր կամ շաբաթական մի քանի անգամ, համեմատած տղաների 28%-ի հետ:

Այս միտումը նկատելի է նաև Շվեդիայում, որտեղ իգական սեռի ներկայացուցիչները ավելի հակված են եղել գրքեր կարդալուն, քան տղաները, չնայած երկու սեռերն էլ 2008 թվականից ի վեր ընթերցանության նվազեցման միտում են ցուցաբերել: 2024 թ. դրությամբ կանանց 28,9%-ը շաբաթական գրքեր է կարդում, համեմատած տղամարդկանց 18,6%-ի հետ: Իսլանդիայում աղջիկների գրեթե 30%-ը ընթերցանությունը համարել է սիրելի հոբբի, համեմատած տղաների 20%-ից պակասի հետ: Ընթերցանությունը տարածվում է ոչ միայն գրքերի վրա: Գերմանիայում ուսանողների 28,7%-ը շաբաթական մի քանի անգամ թերթ է կարդում, համեմատած ընդհանուր

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

---

բնակչության 53,1%-ի հետ: Չինաստանում ընթերցանության տարածված ժամերը ներառում են հանգստյան օրերը, տոները՝ 53,94%, և քնելուց առաջ՝ 52,07%: Տեխնոլոգիաների ազդեցությունը ընթերցանության միավորների վրա (տեքստի այն նվազագույն հատվածն է, որը ընթերցողն ընկալում է որպես ամբողջություն՝ մեկ անգամ կարդալու ընթացքում) տարբեր է. Հյուսիսային Ամերիկայում ըստ PISA<sup>6</sup> տվյալների, ընթերցանության միավորները / Միջազգային ուսանողների գնահատման ծրագիր/ բարձրացրել են 39 միավորով:

### ***Ինչ է ընթերցանությունը ուսանողների համար***

Ուսանողների համար ընթերցանությունը հետապնդում է մի քանի նպատակ: Ըստ 2024 թ. տվյալների՝ Մեծ Բրիտանիայում 8-18 տարեկան պատանիների և երիտասարդների շրջանում ընթերցանության հիմնական պատճառը հաճույքն է (56,6%), որին հաջորդում են նոր բառեր սովորելը (51,8%) և նոր գիտելիքներ ձեռք բերելը (50,9%):

Չինաստանում կարծում են, որ ընթերցանությունը բարելավում է դատողականության և տրամաբանության հմտությունները (76,8%), զարգացնում է գործնական կարողություններ (57,5%) և ընդլայնում է գիտելիքները (53,5%): Ավելին, չինացի ընթերցողները նշում են, որ ընթերցանությունը ընդլայնում է հորիզոնները և բացում մտքերը (79,7%), հարստացնում է ներքին էությունը (64%) և ամրապնդում է բնավորությունը (57,1%): Չինացի ուսանողները 2024 թ. միջինում կարդացել են մոտ 12 գիրք:

Վերջին տվյալների հիման վրա՝ ուսանողների ընթերցանության նախասիրությունները տարբերվում են ըստ տարիքի և տարածաշրջանի: Չինաստանում, 2025 թ. ապրիլի դրությամբ, բիզնեսի կառավարման գրքերը ամենատարածվածն էին հարցվածների շրջա-

---

<sup>6</sup> Programme for International Student Assessment

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

նում՝ 34,2%, որին անմիջապես հաջորդում էին մշակութային ուղղվածության գրքերը՝ 33%:

ԱՄՆ-ում 2022 թ. դեկտեմբերի դրությամբ ուսանողներն ամենաշատ ընթերցել են պատմական գրքեր՝ 41%, որին հաջորդել է դեպտեկտիվը՝ 40%: Ճապոնիայում էլեկտրոնային գրքերի ընթերցողների շրջանում 2024 թ. փետրվարի տվյալներով հարցվածների 66,5%-ը կարդացել է մանկական գրականություն:

Ուսանողները ընթերցանությունն օգտագործում են՝ տարբեր տեսակետներ, մշակույթներ կամ խնդիրներ հասկանալու համար: Նրանց գրադարան այցելելու պատճառները տարբեր են՝ սովորել, աշխատել և օգտվել ռեսուրսներից: Գրադարանները կարևոր դեր են խաղում ակադեմիական հետազոտությունների աջակցման գործում. ակադեմիական գրադարանների տնօրենների 96,5%-ը շեշտում է ուսանողների մոտ հետազոտելու, քննադատական վերլուծություն ձևավորելու հմտություններ զարգացնելու և տեղեկատվական գրագիտության մակարդակը բարձրացնելու կարևորությունը: 2022 թ. դրությամբ շատ ուսանողներ շարունակում են ընդունվել բարձրագույն կրթական հաստատություններ բացառապես կամ մասամբ առցանց: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում բարձրագույն հաստատություններում հասանելի կրթական տեխնոլոգիաների գործիքների միջին քանակը մեկ շրջանում կազմել է ավելի քան 2700 միավոր, ինչը զգալիորեն աճել է 2018 թ. մեկ շրջանում հասանելի 895 կրթական տեխնոլոգիաների գործիքների համեմատ:

### ***2. Ընթերցանությունը Հայաստանում: Ակադեմիական/բուհական/ գրադարանների տվյալների վերլուծություն***

Հայաստանում ուսանողների ընթերցանության վիճակի մասին հարցման համապարփակ տվյալներ չկան: Այնուամենայնիվ, մենք կարող ենք որոշակի տեղեկություն ստանալ ընթերցանության սովորությունների մասին վիճակագրական կայքից:

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

Ըստ Statista կայքի տվյալների՝ Հայաստանում ուսանողների ընթերցանությունը զարգանում է ավանդական և թվային ձևաչափերի համադրությամբ: Կանխատեսվում է, որ գրքերի վաճառքի շուկան 2025 թ. կհասնի 31,19 միլիոն ԱՄՆ դոլարի, որտեղ բնակչության 37,7%-ը կլինեն ընթերցողներ: Ֆիզիկական գրքերը մնում են գերիշխող: Աուդիոգրքերը նույնպես ավելի են տարածվում. 2025 թ. կանխատեսվում է դրանց օգտագործման 13,7% աճ:

Թվային ձևաչափերին անցնելու այս միտումն արտացոլում է հայ ուսանողների շրջանում թվային գրագիտության և մատչելի գրականության նկատմամբ աճող հետաքրքրությունը: Ամսագրերը շարունակում են մնալ արդիական. 2025 թ. կանխատեսվում է օգտագործման 16,9% ցուցանիշ:

Ֆիզիկական գրքերի շուկան Հայաստանում խոստումնալից է. 2029 թ. կանխատեսվում է 1.01 միլիոն օգտատեր: Չնայած այս թվերը հատուկ ուսանողներին չեն վերաբերում, սակայն դրանք վկայում են Հայաստանում ընթերցանության մշակույթի աճի մասին: Սա ենթադրում է, որ բնակչության զգալի մասը զբաղվում է ընթերցանությամբ, աճում է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Կանխատեսվում է, որ Հայաստանի էլեկտրոնային գրքերի շուկայում ընթերցողների թիվը մինչև 2029 թ. կկազմի 360.8 հազար օգտատեր:

Դժբախտաբար, որոնման արդյունքները կոնկրետ վիճակագրական տեղեկություններ չեն տրամադրում հայ ուսանողների գրադարաններ այցելելու մասին: Տվյալները հիմնականում կենտրոնանում են գրքերի շուկայի կանխատեսումների, էլեկտրոնային գրքերի օգտագործման և այլ երկրների գրադարանային հաճախելիության վիճակագրության վրա: Հայ ուսանողների գրադարանային այցելու-

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

թյունների վերաբերյալ հարցին ճշգրիտ պատասխանելու համար անհրաժեշտ կլինի ավելի կոնկրետ և տեղայնացված հետազոտություն:

### **3 Բուհական ընթերցանության վիճակագրություն**

Ուսանողության շրջանում ընթերցանության ընդհանուր պատկեր և վիճակագրական թվեր ստանալու նպատակով մեր կողմից ընտրվել է լայնամասշտաբ հարցման եղանակը՝ քանակական վերլուծության արդյունքով: Հարցումը վերնագրվել է «Ուսանող-ընթերցողների կողմնորոշիչները թվային դարաշրջանում: Գրադարանային տեսանկյուն»: Հարցաթերթիկը կազմվել է երկլեզու՝ հայերեն և ռուսերեն հաշվի առնելով նաև ռուսալեզու ուսուցմամբ բուհերի ընդգրկվածությունը: Կազմվել է 22 հարցից բաղկացած հարցաթերթիկ: Հարցաթերթիկում ընդգրկված այսպես կոչված «ֆիլտրող» հարցերի միջոցով ավելի ենք մանրամասնել պատկերը:


Հարցումն իրականացվել է հայաստանյան հինգ (ՀՊՏՀ, ՀՌՀ, ՀՊՄՀ, ԵՊՀ, ԲՅՄ երևանյան մասնաճյուղ) բուհերում սովորող 300 ուսանողների շրջանում: Նշենք, որ հարցմանը մասնակցել են եռաստիճան համակարգում ներառված ուսանողներ: Հարցման մասնակիցները ընտրվել են ոչ թիրախային, պատահական ընտրության սկզբունքով: Մասնակցել են տարբեր տարիքային խմբեր, ընտրվել է 18-25 տարիքային խումբը, որը կազմում է ընդհանուր հարցվածների 79.3% կամ 238 մարդ: Հարցվածների 87,3 % կամ 208 անձ՝ իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 12,7 % կամ 30 անձ՝ արական :

Վերլուծելով հարցման արդյունքները ստանում ենք հետևյալ պատկերը.

Հարցվածների 146 անձ կամ 61,3% դրական պատասխան է տվել ընդհանուր ընթերցանության հարցին՝ «երբեմն կարդում են»՝ 89 մարդ կամ 37,3 %, «ընդհանրապես չեն կարդում»՝ 1,4% կամ 3 անձ:

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

«Ի՞նչ է ընթերցանությունը» ընտրովի հարցին առավելագույնը ընտրվել է «հորբի» տարբերակը՝ 54,6% կամ 130 անգամ, նվազագույնը՝ «պարտադրանք» 3,7% կամ 9 անգամ: (տե՛ս գծապատկեր 1)




Գծապատկեր 1. Ի՞նչ է ընթերցանությունը ձեզ համար

92,8% նախընտրում է կարդալ գիրք, 40,7 % նախընտրում է սոցիալական ցանցերի գրառումները, 15,5%՝ հոդվածներ:

Տարեկան առավելագույնը կարդում են մինչև 5 գիրք՝ 106 դրական պատասխան: (տե՛ս գծապատկեր 2)

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ




Գծապատկեր 2. Տարեկան ընթերցված գրքերի քանակը

90,7 % նախընտրում է թղթային տարբերակը, իսկ 9,3% կարդում է էլեկտրոնային տարբերակով: Հեռախոսով կարդում է 42 անձ, էլեկտրոնային գրքով՝ 8, համակարգչով՝ 35, պլանշետով՝ 5:

### ***Որքան ժամանակ եք տրամադրում ընթերցանությանը***

Ընթերցանությանը օրական տրամադրվող ժամանակի պատկերը հետևյալն է՝ մինչև 1 ժամ՝ 15,5 %, 1-2 ժամ – 26,8%, 2-3 ժամ – 10,9%, իսկ մնացյալ 46,8% նշել է երեք ժամից շատ: Ժանրային նախապատվության ընդհանուր պատկերը հետևյալն է՝ գեղարվեստական գրականություն՝ 89,07%, գիտական-մասնագիտական՝ 10,13%, մոտիվացիոն՝ 0,8%: (մանրամասները՝ տես գծապատկեր 3)

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ




Գծապատկեր 3. Նախընտրելի ժանրեր

«Համադրելի՞ են Ձեզ համար գրքերը և արհեստական բանականության տեքստերը» հարցին բացասական է պատասխանել 52,5%, դրական՝ 17,2%, և չի կողմնորոշվել՝ 0,67 %: 29,63% ընդհանրապես չի պատասխանել հարցին: «Ի՞նչն է կարևոր գրադարաններում» հարցին 82,3%-ը կարևոր է անհրաժեշտ նյութի առկայությունը, 15,9% մատնանշում է թվային ռեսուրսի անհրաժեշտությունը, 5,8% -ը՝ գրադարանի ֆոնդի թիվը, 4,6%-ը՝ գրադարանային միջավայրը:

«Ի՞նչ միջավայրում են նախընտրում կարդալ» բազմակի ընտրության հարցին առավելագույն պատասխանը՝ «լռության մեջ» - նշվել է 69 անգամ, իսկ նվազագույնը՝ 2 անգամ (տե՛ս գծապատկեր 4):

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ



Գծապատկեր 4. Ընթերցանության պայմաններ

Վերջում, որպեսզի սրանանք ընթերցողների հավաքական հոգեբանական պատկերը, փորվել է ամփոփիչ հարց՝ «Բնութագրեք ձեզ՝ որպես ընթերցող»: Ունենք հետևյալ պատկերը՝ «հեղաքրքասեր, զգացմունքային, վերլուծող, գրքասեր, անհամբեր ընթերցող, ում համար ընթերցանությունը ասոցացվում է գրադարանի հետ»:

### 4. Գրադարանային ընթերցանության խթանման մոդել

Ընթերցանությունը ամենակարևոր միջոցն է սոցիալական գիտելիքները անձնական գիտելիքների վերածելու համար: Որպես ավանդական հասարակությունում սոցիալական գիտելիքի պահպանման և բաշխման հիմնական կենտրոն՝ գրադարանի դերն ու նշանակությունը ընթերցանության կազմակերպման գործում դժվար է գերազնահատել: Ընթերցանությունը կարող է պահպանվել և հարստացվել գրադարանի շնորհիվ:

Թվային դարաշրջանում մարդկանց ընթերցանության վարքագիծը մեծ փոփոխությունների է ենթարկվում՝ գիտելիքների կրիչի և հաղորդակցման եղանակի փոփոխությունների հետ մեկտեղ: Կարդա-

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

լու չորս գործոնները՝ ռեժիմը, օբյեկտը, կառուցվածքը և մասշտաբը, վաղուց փոխվել են: Թվային ընթերցանությունը, տարբեր տեխնիկական միջոցներով, մասնատված և սոցիալական ընթերցանությունը դարձել են միտում:

Մի կողմից գրադարանը պետք է շարունակի պահպանել մարդկության պատմության մեջ արժեքավոր գրական ժառանգությունը և մնա ավանդական ընթերցանության վայր, մյուս կողմից՝ ձգտի դառնալ թվային ընթերցանության հանրահռչակման կենտրոն: Ներկայում առցանց ընթերցանության, թվային և սոցիալական ընթերցանության հետ կապված եղանակների աճը թույլ է տալիս փաստել, որ ավանդական գրադարանը դեռևս հարուստ է, անփոխարինելի և մրցունակ թվային դարաշրջանի համար: Գրադարանը պետք է ընթերցանությունն ավելի հետաքրքիր դարձնի: Վերլուծելով ստացված արդյունքները ժամանակակից ընթերցողի կերպարի առումով՝ կարող ենք սահմանել ընթերցողական վարքագծի փոփոխություն թվային դարաշրջանում:

➤ Ընթերցանության ոճ. ֆիքսված տեղից ընթերցանության անցում թվային ընթերցանության՝ ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում:

➤ Ընթերցանության օբյեկտ. թղթային ընթերցանությունից անցում թվային և մուլտիմեդիա նյութերի ընթերցանություն:

➤ Ընթերցանության կառուցվածք. ամբողջական գրքերի և պարբերականների ընթերցանությունից անցում դեպի մասնատված և հոսքային մեդիա ընթերցանության

➤ Ընթերցանության տեխնիկական կողմը. ընթերցանության միջոցների բազմազանություն

Ընթերցանության խթանումը կարելի է սահմանել՝ որպես հաղորդակցման գործունեության մի տեսակ, որը, ըստ էության, հա-

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

մապատասխանում է հաղորդակցման ընդհանուր սկզբունքներին: Գրադարանային ընթերցանության խթանման համար կարող են օգտագործվել հաղորդակցման բազմաթիվ տեսություններ, ինչպիսիք են Լյուինի «դարպասապահի» տեսությունը (ALBAR 2018), երբ տեղեկատվության տերը դարպասապահն է, և նա է որոշում՝ ինչ տեղեկատվություն մտնի դարպասը:

Հայտնի է նաև Լասվելի հինգ W մոդելի տեսությունը. «Ո՞վ, ի՞նչ է ասում, ի՞նչ ուղիով, ո՞ւմ է ասում, ի՞նչ ազդեցությամբ» (Who, Says What, Through what channel, to whom, with what effect) (ՍԱՐԳՍՅԱՆ 2022, 84): Այս տեսությունը ոչ միայն հաղորդակցման բազմաթիվ մոդելների հիմքն է, այլև կարող է օգտագործվել գրադարանային ընթերցանության խթանման ամբողջ գործընթացը ամփոփելու և բացատրելու, ընթերցանության հանդեպ հետաքրքրությունը բարձրացնելու, ընթերցանության մակարդակը բարելավելու համար:

Ավանդական գրադարանների ընթերցանության խթանման գործունեությունն ունի հարուստ փորձ և ձևեր, ինչպիսիք են ընթերցանության փառատոնը, ընթերցանության ակումբը, գիտելիքների մրցույթը, ընթերցանության ֆորումը, գովազդային ցուցահանդեսը, հայտնի մասնագետների մեկնաբանությունը, եռաչափ ընթերցանությունը, գրքերի տարածումը, ընթերցանության մասնագետների ընտրությունը, և այլն: Այս ձևերը կարող է օգտագործվել ընթերցողների հետ աշխատանքում, ընթերցանության վերլուծության և բարելավման համար:

Թե ինչպիսի մոդել ավելի ճիշտ կլինի կիրառել կոնկրետ գրադարանի ու ընթերցողի համար, որոշում է գրադարանը: Կարելի է կազմել դասընթացներ «Ինչպես հասնել ձեր գրադարանային համայնքի Z սերնդի անդամներին» և «Ինչպես հասնել ձեր գրադարանային համայնքի հազարամյակի անդամներին», որոնք կսովորեցնեն

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

արդյունավետ ռազմավարություններ՝ ընթերցողներին ներգրավելու տարբեր ուղիների, ներառյալ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային փոստի և անձնական շփումների վերաբերյալ: Դուք պատկերացում կկազմեք նրանց ընթերցանության սովորությունների, հաղորդակցման նախընտրելի մեթոդների և գրադարանային ծրագրերի ու ծառայությունների տեսակների մասին:

Գրադարանային ծրագրերը, մասնավորապես բուհական գրադարանի ընթերցողի, ուսանողի համար, հաճախ չեն ներառում անհատական մոտեցումը, կամ ընթերցողական կազմի հարմար կոնտենտի պատրաստումը: Օրինակ՝ այս կամ այն մասնագիտության համար ընտրել համապատասխան բազա և այլն: Պետք է հաշվի առնել, որ ընթերցանության տեքստի տեսակները տարբեր կերպ են ազդում ընթերցողի մոտիվացիայի վրա. օրինակ առաջին կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներին առաջարկած գրքերը միանման ազդեցություն չեն թողնի նրանց կարդալու մոտիվացիայի վրա: Ընթերցանության ծրագրերը պետք է դիտարկեն գիտելիքներ տաբեր ոլորտներից (օրինակ՝ էկոլոգիա, տնտեսություն, վիճակագրություն):

Ակադեմիական գրադարանները պետք է հավասարակշռեն ավանդական ծառայությունները թվային նորարարությունների հետ՝ միաժամանակ ցուցադրելով դրանց արժեքը ակադեմիական համայնքի համար: Թվային միջոցների և տեխնոլոգիաների ներառումը նույնպես կարող է բարձրացնել մոտիվացիան: Մասնավորապես, գրադարանային էլեկտրոնային քարտարաններում արհեստական բանակալության մոդելների օգտագործումը, որը կբարձրացնի անհրաժեշտ ռեսուրսների որոնման արագությունը և արդյունավետությունը:

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

### ***Ամփոփում***

Տեքստի էլեկտրոնայնացումը և ցանցային ընթերցանությունը ծնում են առցանց ընթերցանության նոր միտումներ: Մարդկությունը մտնում է ընթերցանության նոր դարաշրջան, այսինքն՝ «Ինտերնետային ընթերցանության դարաշրջան»: «HOMO LEGENS» (կարդացող մարդ) արտահայտությանը փոխարինելու է գալիս «HOMO INTERNETICUS» («համացանցում ապրող մարդ») հասկացողությունը: Հոմո սապիենսը սկսում է կարդալ այլ կերպ: Ավանդական ընթերցանության համեմատ թվային դարաշրջանում ընթերցանությունը մեծ տարբերություններ է ներկայացնում եղանակների, մասշտաբների և բնութագրերի առումով, և դրա առաջխաղացման մեթոդները նույնպես պետք է համապատասխանաբար փոփոխվեն: Ամենամեծ տարբերությունը կայանում է բովանդակության և կրիչի տարանջատման մեջ, ինչը հանգեցնում է բարդ մրցակցային հարաբերությունների ընթերցանության տարբեր միջոցների միջև: Նույն բովանդակությունը կարող է փոխանցվել օգտատերերին տարբեր ձևերով, տարբեր միջոցներով և տարբեր ուղիներով: Գրադարանները նախ պետք է գործունենան այս կրիչների և միջոցների հետ՝ ընտրելու և ընթերցողներին ինտեգրելու համար:

Թվային ընթերցանության տարածման հետ մեկտեղ ժամանակակից տեխնոլոգիաների և տարբեր կիրառությունների համընդհանուր զարգացման շնորհիվ կշարունակեն ի հայտ գալ ընթերցանության խթանման ավելի ու ավելի լավ մոդելներ:

Արդյո՞ք գրադարանը կարող է շարունակել գիտելիքների միջնորդի և դարպասապահի իր դերը, ինչպես ավանդական հասարակությունում, մեծապես կախված է գրադարանի կողմից ընթերցանության խթանումից և գրադարանային ծառայությունների անընդհատ կատարելագործելու և բարելավելու հմտություններից:

### **Օգրագործված գրականության ցանկ (References)**

ԱԹՌՅԱՆ, ՕՇԱՆՅԱՆ, ՄՈՎՍԻՍՅԱՆ 2024 – Աթոյան, Վ., Օհանյան, Ա., Մովսիսյան, Ն., *Ասատրյան, Տ., Թադևոսյան, Մ. (2024), Ուսանողների թվային կողմնորոշիչները թվային դարաշրջանում, Երևան, Տնտեսագետ, 89* [Atoyan, V., Ohnyan, S., Movsisyan, N., Asatryan, T., Tadevosyan, M (2024), *Value Orientations of Students in the Digital Age, Yerevan, Tntesaget, 89*];

ՍԱՐԳՍՅԱՆ 2022 - Սարգսյան, Ջ. (2022), *Մեդիաազդեցության ժամանակակից տեսություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 84* [Sargsyan, Z. (2022), *Mediaazdetsutyán zhamanakakits tesutyunner, Yerevan, EPH hrat., 84*];

ALBAR 2018 – Ali Albar, The concept of gatekeeping in information science: A philosophical reflection, *Global Journal of Information Technology Emerging Technologies*, Cyprus, 8(1);

HOWE, STRAUSS 1991 – Howe, N., Strauss, W. (1991), *Generation: The History of America's Future 1584-2069*, New York, 538;

PEGGY NZOMO 2019 – Peggy Nzomo (2019), Multilingual Information Access (MLIA) Tools on Google and WorldCat: Bi/Multilingual University Students' Experience and Perceptions, *Journal of Library Administration*, 8(59), 831-853 DOI: 10.1080/01930826.2019.1661750

REPORT 2022 – Report on the Condition of Education 2022, Washington, 2022, 35;

ЛЕОНОВ 2020 – Леонов, В. (2020), Вавилонская библиотека в контексте дальнего чтения, *Библиография и книговедение*, Москва, 1, 77-83 [Leonov, B. (2020), Library of Babel in the context of distant reading, *Bibliography and Bibliology*, Moscow, 1, 77-83];

ЛОПАТИНА, ГРУШЕВСКАЯ 2023 – Лопатина, Н., Грушевская, Н. (2023), Читательская компетентность библиотекаря как фактор эффективности библиотечно-информационной деятельности, *Библиография и книговедение*, Москва, 1, 113-120 [Lopatina, N., Grushevskaya, N. (2023), Librarian's Reading Competence as a Factor of Library and Information Activity Efficiency, *Bibliography and Bibliology*, Moscow, 1, 113-120].

## ORIENTATIONS OF STUDENT-READERS IN THE DIGITAL AGE

### *A Reading Perspective*

ARMINE HOVHANNISYAN

*Scientific Library of the Armenian State University of Economics*

**Keywords:** Digital environment, Digital orientations, Library environment, Digital and academic resources, Student-readers, Statistical analysis of reading behavior

The digitization of texts and the rise of network-based reading have given birth to new trends in online reading. Humanity is entering a new era of reading-what can be termed the “era of Internet reading.” The traditional concept of “Homo Legens” is increasingly being replaced by “Homo Interneticus”-a human who lives and functions within the digital realm. The Homo Sapiens is beginning to read differently.

Compared to traditional reading, reading in the digital age differs significantly in terms of methods, scale, and characteristics. As a result, the strategies for promoting reading must also evolve accordingly. The most significant change lies in the separation between content and carrier, which has led to a complex competitive relationship among various modes of reading. The same content can now be delivered to users through multiple formats, platforms, and channels.

Libraries are at the forefront of this transformation and must first address the diversity of carriers and media in order to effectively curate, deliver, and integrate content for readers. With the expansion of digital reading and the concurrent advancement of modern technologies and applications, increasingly effective models for reading promotion are expected to emerge.

Whether the library can continue to fulfill its role as a mediator and gatekeeper of knowledge, as it did in traditional society, largely depends on its ability to promote reading and continuously enhance and improve its services.

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

---

### ATTESTATION FOR LIBRARIANS: *New Standards and International Practices\**

ՀՏԴ: 02

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-29

**SONA MESROPYAN**

*Khnko Aper National Children's Library*

ORCID: [0009-0002-5057-3731](https://orcid.org/0009-0002-5057-3731)

*The process of attestation for library staff has recently been introduced in Armenia following amendments to the national law on libraries and librarianship. According to these changes, all librarians are now required to undergo attestation through a training program approved by the competent governmental authority. This is the first time in Armenian history that such a requirement has been imposed on library employees.*

*The article is about the introduction of a new attestation (certification) system for library staff in Armenia, which marks a significant shift in the country's approach to professional standards in the field of librarianship. It provides historical background on attestation in Armenia (such as in public service and education), explains what attestation means, and examines international models of library staff attestation-specifically those in Russia, the United States, and European Council countries.*

*The goal of the article is to inform readers about the new legal requirement for attestation of Armenian library staff, explain what attestation entails, why it matters, and what questions it raises, compare Armenia's new approach with international practices in order to offer perspective, guidance, and potential*

---

\* Հոդվածը ներկայացվել է 01.06.2025, գրախոսվել է 20.06.2025, ընդունվել է տպագրության 24.06.2025:

*The article was submitted on 01.06.2025, reviewed on 20.06.2025, and accepted for publication on 24.06.2025.*

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

---

benchmarks, prepare the professional library community in Armenia for this major change by promoting awareness and understanding of how attestation supports professional development, standardization, and quality assurance in librarianship.

*In essence, the article seeks to contextualize and clarify a new policy in Armenia by connecting it to global trends, encouraging thoughtful implementation, and addressing the concerns that naturally arise from such a foundational change.*

Հայաստանի գրադարանային աշխատակիցների արեստավորման հարցը փարհներ շարունակ եղել է ուշադրության կենտրոնում: 2024 թ. հոկտեմբերի 2-ին այն ամրագրվեց նաև «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքում՝ որպես 13-րդ հոդվածի կետ 16 մաս<sup>1</sup>: Ըստ այս փոփոխության՝ Հայաստանում բոլոր գրադարանավարները պարտավոր են անցնել արեստավորում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից հաստատված վերապատրաստման ծրագրի: Սա առաջին դեպքն է Հայաստանի պատմության մեջ, երբ գրադարաններին նման պահանջ է ներկայացվում:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի գրադարանների աշխատակիցների արեստավորման նոր իրավական պահանջը, բացատրել՝ ինչ է արեստավորումը, ինչու է այն կարևոր և ինչ հարցեր են ծագում դրա շուրջ, համեմատել միջազգային փորձի հետ, ինչպես նաև նախապատրաստել Հայաստանի գրադարանային մասնագիտական հանրությանը այս կարևոր փոփոխությանը՝ բարձրացնելով իրազեկվածությունն ու խթանելով ըմբռնումն այն մասին, թե ինչպես է արեստավորումը նպաստում գրադարանային գործում մասնագիտական աճին, սրանդարպացմանը և որակի ապահովմանը:

**Keywords:** Republic of Armenia, Library, Law, Attestation, Training, International Best Practices, Training Programs.

---

<sup>1</sup> Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին <https://www.arlis.am/hy/acts/198712> (24.06.2025)

**How to cite (APA style):** Mesropyan, S. (2025), Attestation for Armenia's Librarians: New Standards and International Practices, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 29-47.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-29](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-29)

**Ինչպես հղել՝** Մեսրոպյան, Ս. (2025). Ատեստավորում Հայաստանի գրադարանավարների համար. նոր չափորոշիչներ և միջազգային փորձ, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 29-47.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-29](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-29)

### **Introduction:**

The library staff is scheduled to be attested in Armenia. The appropriate law of the Republic of Armenia, which pertains to libraries and library work, was amended, as necessary. It was stipulated that librarians must complete attestation by the training program established by the competent government agency in the field of librarianship.

Not previously has the library staff been subjected to attestation in Armenia. However, the process of attestation is not a new practice in the RA. The first attestation procedure for government employees was approved by the Armenian government in 2001<sup>2</sup>. It was deemed to be in full compliance with the reforms that were being implemented in the field later in 2023<sup>3</sup>. Therefore, a new system of attestation for government employees was implemented.

---

<sup>2</sup> ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության մասին  
<https://www.arlis.am/hy/acts/94715> (24.06.2025)

<sup>3</sup> ՀՀ վարչապետ որոշում N 986-Ն ՀՀ պետական պահպանության ծառայության ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման կարգը, հավելավճարի հաշվարկման կարգը և հաշվարկված հավելավճարի վճարումը դադարեցնելու հիմքերը սահմանելու մասին  
<https://www.arlis.am/hy/acts/183401> (24.06.2025)

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

---

Teachers' Voluntary attestation was initially implemented in Armenia in 2021<sup>4</sup>. Additionally, it was designed to evaluate the professional knowledge and skills of educators through testing, as was previously mentioned.

Although the concept of teacher attestation was not new, it was still employed during Soviet times. Conversely, library employees have never previously been required to submit an attestation. Although this is a prevalent practice in certain countries, it is a new development in the history of Armenia's libraries. Consequently, there must be some questions and concerns about it. To answer these questions, we must first understand what an attestation is.

So, what is an attestation?

Attestation / from Latin attestatio-Testimony / is the verification of the authenticity of a document and its signatures by a third party who witnesses the signing and ensures that proper procedures were followed. It is also an assessment process that determines the professional level, knowledge, and skills of an employee or learner. It can be applied in education, public service, professional development, and other areas.

The next questions to be asked are.

- Who should undergo the attestation?
- How will the attestation be carried out?
- How often should it take place?
- Will it be voluntary or mandatory?

---

<sup>4</sup> ՀՀ կառավարության որոշում 28 ապրիլի 2022 թ. N 596-Ն Ուսուցիչների կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին <https://www.arlis.am/hy/acts/162427> (24.06.2025)

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

---

- What criteria are used for evaluation in an attestation?
- What is the role of attestation in professional development?

There are many questions, especially since this is a new and unclear concept. To gain a better understanding, we should look to other countries that already have experience with library staff attestation.

### ***International practice of attestation or certification of the library staff***

#### **Attestation Practices in Russia**

The Federal Law "On Librarianship"<sup>5</sup> of 1994 of the Russian Federation determines that librarians are subject to periodic attestation. This was later approved by The Order of the Ministry of Culture of the Russian Federation which established the rules for conducting the attestation. The document came into force in 2016 and was published on the official Internet portal of legal information and the official website of the Ministry of Culture of the Russian Federation<sup>6</sup>.

The attestation can be carried out in a traditional format or a remote format.

---

<sup>5</sup> Федеральный закон от 29 декабря 1994 г. N 78-ФЗ "О библиотечном деле" (с изменениями и дополнениями) <https://base.garant.ru/103585/> (24.06.2025)

<sup>6</sup> Министерство культуры Российской Федерации. Приказ от 24 июня 2016 г. N 1435 об утверждении порядка проведения периодической аттестации работников библиотек <https://rulaws.ru/acts/Prikaz-Minkultury-Rossii-ot-24.06.2016-N-1435/> (24.06.2025)

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

- The traditional attestation can be both in written form and through an interview. During the testing together with the questions referring to the professional knowledge of computer skills of the applicants are also checked.

- Remote attestation involves the use of online questionnaires designed to assess the applicant's professional and computer skills, ensuring they meet the requirements for the position.

Each library independently determines whether to implement a traditional or remote attestation program.

The attestation can also be regular or unscheduled.

Every five years, a regular attestation process is undertaken to ensure librarians' compliance with the professional standards of their positions.

A regular attestation process is conducted every five years to confirm that librarians continue to meet the professional standards required for their positions.

For the attestation, a commission is formed consisting of at least three members who make the following decisions regarding the applicant's results.

- The applicant is confirmed in their current position;
- The applicant may retain their position but is required to complete further professional training within the library;
- The applicant is deemed not to meet the requirements for the position.

As attestation is carried out to validate library staff qualifications, ensure compliance with their current positions, and determine the need for advanced training, the following categories of library employees are subject to attestation.

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

---

- Librarians of all positions;
- Heads of libraries;
- Methodologists of librarianship;
- Archivists and library specialists.

Based on the results of the attestation, the attestation committee decides whether the attested person corresponds to his/her position.

Each librarian position has specific qualification characteristics that must be met. These are as follows:

- Job Duties: Outlines the primary labour functions that may be assigned-either in full or in part-to the employee holding the position. These functions are defined with regard to technological coherence and task interconnectivity, promoting optimal specialization across the workforce.

- Knowledge Requirements: specifies the essential knowledge required for the role. This includes both professional expertise and familiarity with relevant regulatory legal acts as well as other documents necessary for the effective performance of job duties.

- Qualification Requirements: defines the necessary level of professional training and outlines the expectations for additional professional development or advanced training as required for the role.

After the attestation process, based on the grades received by the employee, the commission members issue one of the following four decisions:

- The employee meets the requirements of the current position and is recommended for promotion;

## **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

---

- The employee meets the requirements of the current position;
- The employee meets the requirements of the current position conditionally, subject to one or both of the following:
  - Completion of additional professional education in the field of librarianship;
  - Fulfillment of the requirements or recommendations set forth by the Attestation Commission;
թղթերը դառնում են խմբագրվող և որոնելի: Բոլոր գործընթացները զգալիոր-  
րեն նպաստում են գիտական արդյունքների փոխանցմանն ու հանրահոսակ-  
մանը: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Համահայկական թվա-  
նշային գրադարանի ձևավորման սկզբունքները և դերը տպագիր ժառան-  
գության փոխանցմանն ու հասանելիության գործում:

*The digitization of cultural heritage plays a crucial role in preserving  
historical sources and ensuring their accessibility to a wide audience. Digital*

---

\* Հոդվածը ներկայացվել է 18.03.2025, գրախոսվել է 25.04.2025, ընդունվել է տպագրության 16.06.2025:

*The article was submitted on 18.03.2025, reviewed on 25.04.2025, accepted for  
publication on 16.06.2025.*

libraries not only collect and safeguard valuable materials but also facilitate their targeted dissemination and usage. The implementation of UDC (Universal Decimal Classification) and DOI (Digital Object Identifier) systems enhances the classification of literature and increases the research results. Through the application of OCR (Optical Character Recognition) technology, scanned documents become editable and searchable, thus expanding their usability in academic research. These processes significantly contribute to the dissemination and enrichment of science. The purpose of this article is to present the working principles of the Pan-Armenian Digital Library and its role in the context of scientific advancement.

**Բանալի բառեր՝** Համահայկական թվանշային գրադարան, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան, մատենագիտական նկարագրություն, տպագիր ժառանգություն, թվայնացում, նիշաճանաչում, ԹՕՆ (Թվային օբյեկտի նույնականացուցիչ, DOI):

**Ինչպես հղել՝** Թումանյան, Ռ. (2025), Համահայկական թվանշային գրադարանը՝ գիտության զարգացման հարթակ, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 65-73.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-65](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-65)

**How to cite (APA style):** Tumanyan, R. (2025). The Pan-Armenian Digital Library as a Platform for Scientific Development, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 65-73.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-65](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-65)

### **Ներածություն**

Գրադարանները դարեր շարունակ գործել են որպես ձեռագիր և տպագիր նյութերի հավաքման, մշակման և պահպանման կենտրոններ: Պատմական տարբեր ժամանակահատվածներում փոփոխվել են դրանց առաջադրված հասարակության պահանջները, ինչի արդյունքում գրադարանային գործառույթները ևս ենթարկվել են վերանայման:

## **21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ**

20-րդ դարի վերջին քառորդից այդ փոփոխություններն առնչվում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, որոնց ամենօրյա զարգացումը գրադարաններին կանգնեցնում է նոր մարտահրավերների առաջ, ինչն իր հերթին հանգեցնում է գրադարանային համակարգի արմատական փոփոխությունների: Բոլոր փոփոխությունները միտված են թե՛ գրադարանավարների, թե՛ ընթերցողների համար նոր հնարավորությունների ստեղծմանը: 21-րդ դարում, հատկապես, ճևարվողվեցին թվային շտեմարանները, առցանց քարտարանները, ստեղծվեցին թվային արխիվները, որոնք միանշանակ նպաստեցին տեղեկատվության հավաքագրման և հասանելիության մակարդակի բարձրացմանը: Այսօր թվային գրադարանները դարձել են գիտելիքի պահպանման և կառավարման կարևոր գործիք:

### ***Թվային գրադարանների դերն ու հնարավորությունները***

21-րդ դարում գրադարանները վերածվել են հիբրիդային կառույցների, որտեղ համադրվում են ավանդական թղթային հավաքածուներն ու թվային ռեսուրսները: Թվային գրադարանները նոր տեսակ են տեղեկատվական կառույցների շրջանակում՝ խարսխված տեղեկատվական տեխնոլոգիաների վրա: Դրանք նպատակ ունեն պահպանել մշակութային և գիտական ժառանգությունը և ապահովել դրա մատչելիությունը՝ անկախ աշխարհագրական դիրքից:

Թվային գրադարանները տրամադրում են մի շարք առավելություններ.

1. Մատչելիություն - թվային փաստաթղթերը հասանելի են համացանցով ցանկացած վայրից:

2. Պահպանում - նպաստում են եզակի և հազվագյուտ նյութերի երկարաժամկետ պահպանմանը:

3. Համադրում այլ համակարգերի հետ - ժամանակակից թվային գրադարանները թույլ են տալիս ներառել վերլուծական,

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ուսումնամեթոդական և տեսալսողական գործիքներ՝ ընդլայնելով դրանց կիրառելիությունը գիտական ոլորտում (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 168; VIDAL-GORENE 2023, 21-25):

Հայաստանի Հանրապետությունում մի շարք գրադարաններ արդեն ձևավորել են թվային գրադարաններ՝ համապատասխան որոնողական գործիքակազմով: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանն այս առումով ոլորտի առաջատարներից է: Այստեղ ձևավորված երկու թվային գրադարաններն ու թեմատիկ ուղղության շտեմարաններն ընձեռում են տեղեկատվության որոնման և մշակման նոր հնարավորություններ (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2016, 2-7, ԱՌԱՔԵԼ-ՅԱՆ 2018, 68-84):

Թվային գրադարանի արդյունավետ ձևավորման համար անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ գործոնները՝

- ✓ Նպատակը և թիրախային լսարանը,
- ✓ Բովանդակության կառուցվածքն ու տեսակը (տեքստ, պատկեր, ձայն, շարժանկար),
- ✓ Ծրագրատեխնիկական ծրագրային ապահովումը և հարթակը,
- ✓ Տվյալների անվտանգությունը և պահպանումը,
- ✓ Հեղինակային իրավունքի կարգավորումները (ԳՐԻԳՈՐ-ՅԱՆ 2022, 185-202):

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը կարևոր դեր ունի գիտական գրականության թվայնացման և «ծնված» թվային նյութերի մշակման գործում: Այն գործում է որպես գիտական թվային հրապարակումների հանգույց ապահովելով հասարակությանն անհրաժեշտ հայագիտական և գիտական հրապարակումներով (ZARGARYAN, ASTSATRYAN, MATELA 2020, 68-79): Գրադարանն իր թվային հանգույցում ներառում է ոչ միայն ՀՀ ԳԱԱ հրատարակու-

թյուններն ու ժողովածուները, այլև գիտաժողովների նյութեր, աստե- նախոսություններ, պարբերականներ և գրքեր՝ ներառյալ Սփյուռքի գիտական կառույցների հրատարակությունները: Այս մոտեցումը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին, օրինակ՝ Europeana<sup>1</sup>, HathiTrust<sup>2</sup>, Digital Public Library of America (DPLA)<sup>3</sup>, Gallica<sup>4</sup>, որոնք հանդիսանում են վերհամազգային կամ ցանցային թվանշային գրադարաններ՝ կառուցված բաց հասանելիության և միջազգային համագործակցության հիման վրա:

### ***Համահայկական թվանշային գրադարան. կառուցվածք և հնարավորություններ<sup>5</sup>***

Համահայկական թվանշային գրադարանը Հայաստանի ամենամեծ և համապարփակ թվային գրադարանն է: Այն ապահովում է բաց հասանելիություն՝ ներառելով գիտական հրապարակումներ, գրքեր, ամսագրեր, կրոնական և կրթական նյութեր, արխիվալին փաստաթղթեր:

Սա համատեղ նախագիծ է, որն իրականացվում է ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների» ԳՀԻ, ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի և Պոզնանի «Գերհամակարգային և ցանցային կառուցվածքների» կենտրոնի ջանքերով:

Թվանշային գրադարանի հավաքածուն ընդգրկում է 1512 թվականից մինչ օրս տպագրված հայերեն գրքերի թվայնացված օրինակներ, այդ թվում՝ հազվագյուտ և ժամանակակից հրատարակություններ: Այս հարթակում հասանելի են ինչպես հին շրջանի

---

<sup>1</sup> Europeana <https://www.europeana.eu/en> (09.06.2025)

<sup>2</sup> HathiTrust Digital Library <https://www.hathitrust.org/> (09.06.2025)

<sup>3</sup> Digital Public Library of America <https://dp.la/> (09.06.2025)

<sup>4</sup> Gallica <https://gallica.bnf.fr/accueil/fr/html/accueil-fr> (09.06.2025)

<sup>5</sup> Համահայկական թվանշային գրադարան <https://arar.sci.am/dlibra> (09.06.2025)

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

տպագրությունները, այնպես էլ արդի գիտական և կրթական աղբյուրները:

Թվային գրադարանում ներկայացված են՝

✓ հայկական գիտական ամսագրերում տպագրված հոդվածները,

✓ ՀՀ ԳԱԱ գիտական աշխատությունները, ժողովածուները, գիտաժողովների նյութերն ու մենագրությունները,

✓ հայ ակադեմիկոսների և նշանավոր գիտնականների մատենագիտական ցանկերը:

✓ ՀՀ, Արցախի, Սփյուռքի գիտակրթական, մշակութային կառույցների գիտական հրապարակումները:

✓ Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում պահվող գրքերի և պարբերականների թվային տարբերակները:

Շտեմարանը պատասխանատուներն անում են ամեն բան, որպեսզի մեկ ընդհանուր հարթակից հասանելի դառնան բոլոր գիտական հրապարակումների թվային տարբերակները:

Վերջին տարիներին, հատկապես, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը կիրառում է նիշերի օպտիկական ճանաչման տեխնոլոգիան, որը թվայնացված փաստաթղթերը վերածում է խմբագրվող և որոնելի տեքստերի: Սա թույլ է տալիս՝

✓ կատարել որոնում ըստ հիմնաբառերի,

✓ պատճենել և աշխատել գիտական տեքստերի հետ,

✓ տեքստերը հասկանալի դարձնել արհեստական բանականության շարժիչների համար,

✓ ապահովել գիտական հրապարակման միջազգայնացումը:

Հիմնարար գիտական գրադարանը ՀՀ ԳԱԱ համակարգում տպագրվող բոլոր գիտական հրապարակումներին տալիս է ՀՏԴ

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

(Համընդհանուր տասնորդական դասակարգում) և DOI (Թվային օբյեկտի նույնականացուցիչ) համարանիշեր: ՀՏԴ-ն ապահովում է թեմատիկ դասակարգումը, իսկ DOI-ն՝ միջազգային գիտական շտեմարաններում տվյալ նյութի առավելագույն հասանելիություն:

### **Ամփոփում**

Համահայկական թվանշային գրադարանն, իր գործառույթներով, տեխնոլոգիական առաջատար լուծումներով, լայն հասանելիությամբ և միջազգային չափանիշներին համապատասխանությամբ, օրինակելի հարթակ է թվային դարաշրջանի գրադարանային մոդելի ձևավորման համար: Այն ոչ միայն ապահովում է հայ մշակութային և գիտական ժառանգության թվայնացում ու պահպանում, այլ նաև նպաստում է այդ նյութերի հասանելիությանը գիտնականների, ուսանողների և հասարակության լայն շրջանակի համար: Գրադարանի որոնման, բովանդակային վերլուծության, թվային հավաքածուների կառավարման և համագործակցային գործիքները ստեղծում են նոր հնարավորություններ ուսումնասիրությունների, դասավանդման և գիտակրթական նախագծերի իրականացման համար՝ վերածելով այն գիտության և կրթության համահայկական հենակետի:

### **Օգտագործված գրականության ցանկ (References)**

ԱՌԱՔԵԼՅԱՆ 2018 – Առաքելյան, Ն. (2018), Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարանները որպես մատենագիտական աղբյուրներ, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 2(2), 68-84 [Arakelyan, N. (2018), Electronic Databases of the National Library of Armenia as Bibliographic Sources, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 68-84];

ԳՐԻԳՐԻՅԱՆ 2022 – Գրիգորյան, Մ. (2022), *Էլեկտրոնային շտեմարանները՝ գրադարանների զարգացման հարթակ*, Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարավփոփոխ աշխարհում: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Հյուսիսային համալսարան, 2022, 98-107 [Grigoryan, M. (2022), *Electronic Databases as*

## 21-րդ դարի գրադարան

---

*Platforms for Development of Libraries, ISSUES OF COMPETITIVE EDUCATION AND SCIENCE IN THE EVER-CHANGING WORLD: International Scientific Conference, Yerevan, Northern University, 2022, 98-107*;

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hekh. Hrat., 168];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2016 – Զարգարյան, Տ. (2016), Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից (Հայացք 25 տարվա անցած ուղուն), *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(2), 2-7 [Zargaryan, T. (2016), From The History of Developing Digital Libraries in Armenia: 25 years of Library Automation in Armenian, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(2), 2-7];

VIDAL-GORENE, CH. (2023), *Ocr/Htr Technologies and Armenian Heritage Preservation*, *Bulletin of Armenian Libraries*, Yerevan, 1(2), 2-7;

ZARGARYAN, ASTSATRYAN, MATELA 2020 – Zargaryan, T., Astsatryan, H., Matela, M. (2020), *Armenian Research & Academic Repository in Action: Towards Challenges of the 21st Century, Katchar: Collection of Scientific Articles*, Yerevan, 2, 68-79.

### THE PAN-ARMENIAN DIGITAL LIBRARY: A PLATFORM FOR SCIENTIFIC ADVANCEMENT

RUZANNA TUMANYAN

*Fundamental Scientific Library National Academy*

**Keywords:** Pan-Armenian Digital Library, Fundamental Scientific Library of the NAS RA, bibliographic description, printed heritage, digitization, OCR (Optical Character Recognition), DOI (Digital Object Identifier).

With its wide range of functions, cutting-edge technological solutions, broad accessibility, and compliance with international standards, the Pan-Armenian Digital Library serves as a model platform for the development of a modern library in the digital age. It not only ensures the digitization and preservation of

## **21-րդ դարի գրադարան**

---

Armenian cultural and scientific heritage but also enhances access to these resources for scholars, students, and the broader public. The library's tools for search, content analysis, digital collection management, and collaborative engagement open new possibilities for research, education, and academic projects, making it a cornerstone for science and education across the Armenian world.

## 21-րԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԱԱ 80-ամյա ուղին \*

ՀՏԴ: 02(479.25): 004

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-74

ԱՍՏԴԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0009-0006-1817-1408](https://orcid.org/0009-0006-1817-1408)

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ) գիտական մտքի ձևավորման ու զարգացման առանցքային կենտրոններից մեկն է: Հիմնադրվելով 1943 թ.՝ իր գոյության ընթացքում ակադեմիան վերածվել է գիտական հետազոտությունների խթանման, գիտելիքի համակարգման և ազգային գիտական ինքնության պահպանման ու փոխանցման կարևորագույն հարթակի: Որպես գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում ռազմավարական առաքելություն իրականացնող կառույց՝ ՀՀ ԳԱԱ-ն կարևոր դեր է ունեցել ինչպես բնագիտության և հումանիտար ոլորտներում հիմնարար հետազոտությունների իրականացման, այնպես էլ գիտական ժառանգության արժևորման և հանրահռչակման գործում:

Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնել ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյակին նվիրված թվային շտեմարանը՝ որպես գիտական ժառանգության պահպանման և մատչելիության ապահովման արդիական լուծում: Շտեմարանում ներառված նյութերի միջոցով առցանց հասանելի է դառնում ՀՀ ԳԱԱ գործունեության և զարգացման ութ տասնամյակի պատմությունը: Հոդվածում դիտարկվում են հետևյալ խնդիրները՝

---

\* Հոդվածը ներկայացվել է 27.12.2024, գրախոսվել է 12.03.2025, ընդունվել է տպագրության 17.06.2025:

The article was submitted on 27.02.2024, reviewed on 12.03.2025 accepted for publication on 17.06.2025.

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

---

ա) շտեմարանի ձևավորման տեխնոլոգիական հենքը և կիրառական հնարավորությունները,

բ) թվայնացված նյութերի մատենագիտական նկարագրության սկզբունքները և որոնման համակարգի ձևավորումը,

գ) թվայնացման գործընթացի իրականացումը, ներառյալ օպտիկական նիշաճանաչման (OCR) մեխանիզմի կիրառությունը:

*The National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) is one of the central institutions shaping and advancing the scientific achievements of the country. Established in 1943, the Academy has, over the course of its existence, become a key platform for promoting scientific research, systematizing knowledge, and preserving and transmitting national scientific identity. As an institution with a strategic mission in the fields of science, education, and culture, the NAS RA has played a vital role both in conducting fundamental research in the natural and humanities sciences and in the valorization and dissemination of Armenia's scientific heritage.*

*This article aims to present the digital repository dedicated to the 80th anniversary of the NAS RA, viewed as a modern solution for preserving and providing access to scientific heritage. The materials included in the repository offer online access to the eight-decade-long history of the Academy's activities and development. The study addresses the following main objectives:*

*a) the technological foundations and functional capacities of the repository;*

*b) the principles of bibliographic description for the digitized materials and the development of the search techniques;*

*c) the implementation of the digitization process, including the usage of optical character recognition (OCR) technology.*

**Բանալի բառեր**՝ Գիտությունների ազգային ակադեմիա, Հիմնարար գիտական գրադարան, Greenstone, տպագիր ժառանգություն, նորարարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, մատենագիտություն, նյութերի երկարաժամկետ պահպանություն:

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

---

**Ինչպես հղել՝** Հովհաննիսյան, Ա. (2025), Ժառանգություն և նորարարություն: ԳԱԱ 80-ամյա ուղին, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 74-83. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-74](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-74)

**How to cite (APA style):** *Hovhannisyán, A. (2025). Heritage and Innovation: The 80-year Journey of the National Academy of Sciences of Armenia, Herald of the Armenian Library Association, 1(5), 74-83.*

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-74](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-74)

### **Ներածություն**

«ԳԱԱ-ն բարձրագույն գիտական հաստատություն է, որը կոչված է համախմբել գիտությունն ու գիտնականներին՝ տարբեր գիտական ոլորտներում հիմնարար հետազոտություններ իրականացնելու նպատակով: ԳԱԱ-ի ստեղծման և զարգացման գործում առանցքային դեր են ունեցել ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին, Վիկտոր Համբարձումյանը, Ստեփան Մալխասյանցը և ուրիշներ (ՈՂՋՈՒՅՆ 1943, 2): Որպես ռազմավարական առաքելություն իրականացնող կառույց՝ «ԳԱԱ-ն առանձնահատուկ դերակատարություն է ունեցել ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար գիտությունների ոլորտներում հիմնարար հետազոտությունների իրականացման գործում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումն ու թվայնացման արդի միտումները հնարավորություն են ընձեռում այսօր նոր մոտեցումներով վերարժևորել անցյալի գիտական ժառանգությունը՝ այն դարձնելով հասանելի ժամանակակից հետազոտողին և լայն հանրությանը (ZARGARYAN, ASTSATRYAN, MATELA 2020, 68-79; ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՇԻՐԻՆՅԱՆ, ԽԱՉԱՏՐՅԱՆ 1996; ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2023, 9-21): Այս համատեքստում կարևորվում է «Ակադեմիա-80» շտեմարանը, որը ստեղծվել է «ԳԱԱ հիմնադրման 70-ամյակի առթիվ և շարունակվում է համալրվել առ այսօր:

---

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

---

Շտեմարանում ներառված բազմաբնույթ նյութերի շնորհիվ հնարավոր է դառնում պատկերացում կազմել ՀՀ ԳԱԱ գործունեության, կառուցվածքային զարգացումների, գիտական նվաճումների և մշակութային ներդրումների մասին (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2024, 90-102):

### ***Թվային շտեմարանների տեխնոլոգիական հնարավորությունները. Greenstone ծրագիր***

Գիտական ժառանգության թվայնացման գործընթացում մեծ նշանակություն ունի տեխնոլոգիական գործիքակազմի ընտրությունն ու ծրագրային հնարավորությունների գնահատումը: ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված շտեմարանը կառուցվել է Greenstone բաց կոդով ծրագրային հարթակի վրա<sup>1</sup>, որն առաջարկում է գործառույթների բազմազան հնարավորություններ՝ առանց տեխնիկական կամ ծրագրավորման գիտելիքների խորը իմացության անհրաժեշտության: Greenstone-ը մշակվել է Նոր Զելանդիայի թվային գրադարանի նախագծի շրջանակում Waikato համալսարանում՝ համագործակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և մարդասիրական տեղեկատվության ոլորտում գործող ոչ կառավարական կազմակերպության: Սա ազատ, բազմալեզու ծրագրային ապահովում է, որը տարածվում է GNU GPL v2 լիցենզիայի ներքո: Այն՝

➤ Թույլ է տալիս ստեղծել, կառուցել և կառավարել բազմաբնույթ թվային հավաքածուներ՝ ներառյալ գրքեր, հոդվածներ, մամուլի նյութեր, լուսանկարներ, ձայնային նյութեր, տեսանյութեր և այլն: Սա հատկապես կարևոր է այն գիտաշխատողների և գրադարանային մասնագետների համար, ովքեր չունեն ծրագրավորման փորձ, սակայն զբաղվում են ժառանգության թվայնացմամբ:

➤ Տրամադրում է բաժանված, բազմաշերտ որոնման հնարավորություն՝ ըստ տեքստային բովանդակության, հեղինակների, վեր-

---

<sup>1</sup> Greestone Dijital Library software <https://www.greenstone.org/> (16.06.2025)

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

---

նագրերի, բանալի բառերի, տարեթվերի, թեմատիկ բաժինների և այլ չափորոշիչների: Այս գործառույթն ապահովում է տեղեկատվության ճշգրիտ և արագ որոնում՝ ինչպես հետազոտողների, այնպես էլ հասարակ օգտվողների համար:

➤ Հնարավորություն է տալիս ներառել տարբեր ձևաչափերի նիշքեր՝ PDF, Word, HTML, TXT, JPG, PNG, MP3 և այլն: Թեև հայաստանյան գրադարանային համակարգում դեռ չեն կիրառվում բոլոր հնարավոր տարբերակները, ծրագիրը լիարժեք հարթակ է՝ բազմաշերտ բովանդակության ներկայացման համար (ZARGARYAN 2024, 21-46):

Ծրագրի բազմալեզու միջերեսի առկայությունը կարևոր գործոն է ազգային ժառանգության ներկայացման համար: Greenstone-ը թույլ է տալիս համակարգի միջերեսի տեղայնացում հայերենով, ինչպես նաև այլ լեզուներով՝ ընդլայնելով հասանելիության շրջանակը: Որպես բաց հարթակ՝ այն հասանելի է հանրությանը առանց սահմանափակումների, ինչը թույլ է տալիս անկախ մշակողներին, մշակութային հաստատություններին և գրադարաններին ձևավորել իրենց սեփական շտեմարանները: Ծրագիրն ունի օգտագործողին հասկանալի գրաֆիկական միջերես, ինչը զգալիորեն հեշտացնում է թվային հավաքածուների ստեղծման և կառավարման գործընթացը՝ առանց հրամանային տողի կամ կոդային միջավայրի օգտագործման անհրաժեշտության:

Greenstone-ի առավելությունները դառնում են առավել ակնհայտ, երբ այն համեմատվում է այլ կիրառվող համակարգերի հետ (օրինակ՝ DSpace, Omeka, CONTENTdm): Այդ առավելություններն են՝ նիշքերի բազմաձև ինտեգրում, որոնման ճկունություն, լեզվական աջակցություն, տեխնիկական պահանջներ, օգտագործման հեշտություն, բաց կոդով լինելու հանգամանք:

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

---

Հակիրճ ներկայացնելով ծրագրի բովանդակությունն ու հնարավորությունները՝ նշենք միայն, որ Greenstone-ը մատչելի, ճկուն և արդյունավետ գործիք է գրադարանային, արխիվային և մշակութային ժառանգության թվայնացման ու հանրայնացման նպատակներով: Այն ապահովում է ոչ միայն նյութերի պահպանումը, այլև դրանց լայն հասանելիությունը, ինչը հիմնարար նշանակություն ունի գիտական ու կրթական հանրության համար՝ հատկապես փոքր ռեսուրսներով աշխատող հաստատությունների պարագայում:

### **Գիտությունների ազգային ակադեմիա-80<sup>2</sup>**

Շտեմարանը ստեղծվել է 2013 թ., երբ հանրությունը պատրաստվում էր նշել ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակը: Հետագա տասնամյակում, հատկապես 80-ամյակի միջոցառումների շրջանակում, իրականացվել են լայնածավալ աշխատանքներ, որոնք միտված են ակադեմիայի պատմության, գիտական նվաճումների, մշակութային ժառանգության պահպանմանը և հանրային մատչելիության ապահովմանը: Այս նպատակով հավաքագրվել, ուսումնասիրվել և համախմբվել են հսկայական թվով նյութեր, որոնք ընդգրկում են պատմական վավերագրեր, գիտական հոդվածներ, հաշվետվություններ, գրքեր, ալբոմներ և այլ փաստագրական ու գիտական աղբյուրներ: Ընթերցողին այսօր հասանելի շտեմարանն ընդգրկում է 1274 գրառում՝ համապատասխան թվային տարբերակով: Նշենք, որ աշխատանքները ներկայում շարունակվում են, ինչի արդյունքում շտեմարանը համալրվում է յուրաքանչյուր օր:

---

<sup>2</sup> Գիտությունների ազգային ակադեմիա <http://greenstone.flib.sci.am/gsdl/cgi-bin/library.cgi?site=localhost&a=p&p=about&c=academy7&l=hy&w=utf-8> (16.06.2025)

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիտական ժառանգության թվայնացման հիմնական գործիք է ընտրվել բաց կողով «Greenstone» ծրագրային համակարգը: Այս ծրագրի կիրառմամբ ստեղծված թվային շտեմարանն ապահովում է՝

➤ գիտական նյութերի և փաստաթղթերի լայն և բազմազան հասանելիություն ինչպես գիտնականների, այնպես էլ հասարակության լայն շրջանակների համար,

- գիտական ժառանգության պահպանություն,
- գիտական հետազոտությունների ընդլայնում,
- շտեմարանի շարունակական համալրում:

Հավաքածուում ներառվող յուրաքանչյուր նյութի համար իրականացվում է դրա մատենագիտական նկարագրությունը, որին հաջորդում է սքանավորումը, նիշաճանաչումը և PDF տարբերակի կցումը տվյալ գրառմանը: Այս կառուցվածքային մոտեցումը ստեղծում է ամբողջական և հստակ կազմակերպված հարթակ՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրային օգտագործման նպատակով:

Մատենագիտական նկարագրությունը շտեմարանի աշխատանքի առանցքային բաղադրիչներից է, որը կատարում է երկու հիմնական գործառույթ՝

➤ Ստեղծում է որոնելի և ինդեքսավորված գրառում՝ ներառելով հեղինակի անունը, վերնագիրը, տարեթիվը, հիմնական հիմնաբառերը և այլ տվյալներ:

➤ Սպասարկում է որպես հղումային միջավայր՝ օգտվողի համար բացելով ճանապարհ դեպի փաստաթղթի թվային տարբերակը (PDF):

Այս մեթոդը կարևոր է գիտական նյութերի ճշգրիտ կազմակերպման, դասակարգման և թիրախային օգտագործման համար:

Վերջին տարիներին շեշտադրվել է նիշերի նկարահանված էջերի օպտիկական նիշաճանաչման (OCR) տեխնոլոգիայի կիրառու-

## 21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

մը, որը հնարավորություն է տալիս իրականացնել ամբողջական տեքստային որոնում ոչ միայն մատենագիտական դաշտերում, այլև փաստաթղթի բուն բովանդակության մեջ: Այս մոտեցումն էական նշանակություն ունի օգտվողների որոնման փորձառությունն էապես ընդլայնելու և հարստացնելու, ինչպես նաև մասնագետներին հստակ գործիքակազմ տրամադրելու առումով:

Նիշաճանաչման ինտեգրումը շտեմարանի տեխնոլոգիական ենթահամակարգում թույլ է տալիս գիտական փաստաթղթերը դիտարկել որպես ամբողջական տեքստային կորպուս՝ վերածելով շտեմարանը լեզվաբանական և բովանդակային ուսումնասիրությունների համար կիրառելի միջավայրի (ԱՂՈՅԱՆ 2015, 13-17):

### ***Ամփոփում***

«Ակադեմիա-80» հավաքածուի ձևավորումն ունի երկարաժամկետ ռազմավարական նշանակություն՝ պահպանելու և փոխանցելու ակադեմիական փորձն ու գիտելիքը՝ օգտագործելով թվային դարաշրջանի հնարավորությունները: Հավաքածուն հանդիսանում է նաև գիտական համագործակցության խթանման մի հարթակ, որտեղ օգտվողները հնարավորություն են ստանում ծանոթանալ ակադեմիայի պատմական և արդի գործունեությանը, հետազոտական ուղղություններին և գիտական արդյունքներին, ինչն առավել է նպաստում գիտական համայնքի ինտեգրացմանը և զարգացմանը:

Շտեմարանն ունի կառուցման ինքնատիպ մեթոդաբանություն, որը զգալիորեն բարձրացնում է շտեմարանի՝ որպես գիտահետազոտական գործիքի արդյունավետությունը: Այն միավորում է դասական մատենագիտական մշակումը ժամանակակից թվային գործիքների հետ, ինչը նպաստում է թե՛ նյութերի պահպանմանը, թե՛ դրանց նպատակային օգտագործման ղյուրացմանը: OCR համակարգով հագեցած որոնումը ձևավորում է նոր հնարավորություններ

## 21-րԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գիտական որոնման մշակույթում՝ հատկապես պատմության, գրականության, լեզվաբանության և բանասիրության ոլորտներում:

### **Օգտագործված գրականության ցանկ (References)**

ԱՂՈՅԱՆ 2015 – Աղոյան, Ն. (2015), Էլեկտրոնային գրքի ձևաչափերի ներկայացում և դրանց կիրառումը հայատառ նյութերի պարագայում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 13-17 [Aghoyan, N. (2015) Introducing e-Book Formats and Their Applications for Armenian Script Materials, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(1), 13-17];

ԳՐԻԳՐԻՅԱՆ 2024 – Գրիգորյան, Մ. (2024), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուները. նոր ձեռքբերումներ, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի* (Երևան), 1(3), 90-102 [Grigoryan, M. (2024), HH GAA Himnarar gitakan gradarani havaqatsunery. nor dzerqberumner, *Herald of the Armenian Library Association* (Yerevan), 1(3), 90-102];

ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՇԻՐԻՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆ. 1996 – Զարգարյան, Տ. (կազմ.) (1996), *Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ*, կազմ.՝ Տ. Զարգարյան, Ա. Շիրինյան, Կ. Խաչատրյան, Հ. Ավետիսյան, Երևան, 68 [Zargaryan, T. (1996), *Gradarannery Popokhvogh Ashkharum. Nor Tekhnologianer Hamagortsakts'utyanyan Nor Dzever. Metodakan Ughets'uyts'*, T. Zargaryan, A. Shirinyan, K. Khachaturyan, H. Avetisyan, Yerevan, 68];

ՈՂՋՈՒՅՆ 1943 – Ողջույն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմին (1943), *Սովետական Հայաստան* (Երևան), 240, 26 նոյեմբերի, 2 [Voghjuyyn Haykakan SSR Gitutyunneri akademiayi iskakan andamneri arajin kazmin (1943), *Sovetakan Hayastan* (Yerevan), 240, 26 noyemberi, 2];

ZARGARYAN 2024 – Zargaryan, T. (2024), How can libraries empathize with their users and transform their digital experiences, *Herald of the Armenian Library Association* (Yerevan), 2(4), 21-46];

ZARGARYAN, ASTSATRYAN, MATELA 2020 – Zargaryan, T., Astsatryan, H., Matela, M. (2020), Armenian Research & Academic Repository in Ac-

tion: Towards Challenges of the 21st Century, *Katchar: Collection of Scientific Articles*, Yerevan, 2, 68-79.

### HERITAGE AND INNOVATION

#### *The 80-year Journey of the National Academy of Sciences of Armenia*

#### ASTGHİK HOVHANNISYAN

##### *Fundamental Scientific Library National Academy*

**Keywords:** National Academy of Sciences, Fundamental Scientific Library, Greenstone, printed heritage, innovation, information technologies, bibliography, long-term preservation of materials.

The formation of the "Academy-80" collection carries long-term strategic significance, aiming to preserve and transmit academic experience and knowledge by leveraging the capabilities of the digital age. The collection also serves as a platform for promoting scientific collaboration, providing users with the opportunity to explore both the historical and current activities of the Academy, its research directions, and scientific achievements - thus contributing to greater integration and development within the scientific community.

The repository is built on a distinct methodological framework, which significantly enhances its effectiveness as a research tool. It combines classical bibliographic processing with modern digital technologies, facilitating both the preservation of materials and their targeted accessibility. The OCR-powered search system introduces new possibilities for research practices, particularly in the fields of history, literature, linguistics, and philology.

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

### **ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\***

ՀՏԴ: 027.8+37](479.25)  
DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-84

**ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ**  
**ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետ**  
**Թանգարանագիտության, գրադարանագիտության և**  
**մատենագիտության ամբիոն**  
**Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0003-3738-7416](https://orcid.org/0000-0003-3738-7416)

Հոդվածում շեշտվում է դպրոցական գրադարանների կարևոր դերը ՀՀ կրթական համակարգում: Ուշադրություն են դարձրել այն հանգամանքին, որ դպրոցական գրադարանները նպաստում են կրթության որակի բարձրացմանը: Ներկայացրել ենք դրանք, որպես ուսումնական գործընթացին աջակցող, տեղեկատվական և մշակութային կենտրոններ: Մեր ուշադրության կենտրոնում դպրոցական գրադարանի գրադարանավարն է, որն առանցքային դեր ունի ընթերցանության խթանման և տեղեկատվական կարողությունների զարգացման գործում: Հոդվածում մատնանշված են նաև ոլորտում առկա խնդիրները՝ մասնագետների պակաս, տեխնոլոգիական հնարավորությունների սահմանափակում և պետական աջակցության սահմանափակում: Առաջարկվում է վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացման միջոցով բարելավել դպրոցական գրադարան-

---

\* Հոդվածը ներկայացվել է 18.01.2025, գրախոսվել է 07.03.2025, ընդունվել է տպագրության 23.06.2025:

The article was submitted on 18.01.2025, reviewed on 07.03.2025, accepted for publication on 23.06.2025.

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ների աշխատանքը և բարձրացնել դրանց նշանակությունը կրթական համակարգում:

*The article emphasizes the significant role of school libraries within the educational system of the Republic of Armenia. School libraries contribute to improving the quality of education by serving not only as support structures for the learning process but also as important informational and cultural centers. Their primary goals include supporting educational programs, developing reading and information literacy skills, and collaborating with the school community.*

*Special attention is given to the role of the school librarian, who plays a key role in promoting reading and developing students' information competencies. The article also highlights existing challenges in the field, such as the lack of qualified professionals, limited technological resources, and insufficient governmental support. It proposes that regular analytical and research activities be undertaken to enhance the performance of school libraries and to increase their relevance and impact within the educational system.*

**Քանայի բաներ'** դպրոցական գրադարան, կրթական համակարգ, գրադարանային գործառույթներ, միջոցառումներ, տեղեկատվության տրամադրում, գրականության սպասարկում.

**Ինչպես հղել'** Տոնոյան, Չ. (2025), Դպրոցական գրադարանների դերը ՀՀ կրթական համակարգում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 84-96. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-84](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-84)

**How to cite (APA style):** Tonoyan, Z. (2025), The Role of School Libraries in Educational System of RA, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 84-96. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-84](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-84)

### **Ներածություն**

Դպրոցական գրադարանները կարևոր բաղադրիչ են ցանկացած երկրի կրթական համակարգում: Դրանք ոչ միայն ուսումնական գործընթացին աջակցող ենթակառուցվածքներ են, այլև արժե-

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

քավոր տեղեկատվական և մշակութային կենտրոններ, որոնք ուղղակիորեն նպաստում են կրթության որակի բարձրացմանը: Այս գրադարաններն ապահովում են բազմակողմանի կրթադաստիարակչական, հաղորդակցական և տեղեկատվական գործառույթներ՝ ուղղված աշակերտի ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում, երբ տեղեկատվական հոսքերը մշտապես աճում են, կրթական համակարգի բոլոր ենթահամակարգերը, այդ թվում՝ դպրոցական գրադարանները, ենթակա են վերաիմաստավորման և արդիականացման: Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներառումը կրթական գործընթացում ենթադրում է նոր մոտեցումների անհրաժեշտություն նաև գրադարանային գործունեության ոլորտում: Գաղտնիք չէ, որ թվայնացված կրթական միջավայրը՝ տեխնոլոգիական ենթակառուցվածքների առկայությամբ, մեծապես նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ տեղեկատվության արագ հասանելիության, բազմաբնույթ աղբյուրներից օգտվելու և մեդիագրագիտության զարգացման հնարավորության շնորհիվ:

Այս համատեքստում ակնհայտ է դառնում դպրոցական գրադարանի կարևորությունը՝ որպես հարթակ, որտեղ սովորողները կարող են ձևավորել ուսման, ընթերցանության, տեղեկատվության որոնման ու գնահատման կարողություններ:

Դպրոցական գրադարանների՝ թվային տեխնոլոգիաներով համալրված լինելը այսօր դիտվում է որպես անհրաժեշտություն՝ ի տարբերություն նախկինում դիտարկվող հավելյալ հնարավորության: Համակարգչային տեխնիկայով և համացանցային կապով ապահովված գրադարանները կարող են փոխակերպվել ժամանակակից տե-

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ղեկատվական կենտրոնների, որտեղ սովորողներն ու ուսուցիչները կստանան համապարփակ տեղեկատվական աջակցություն՝ տարբեր էլեկտրոնային գրադարաններից օգտվելու, համացանցային կրթական պաշարներին հասանելիություն ստանալու և թվային հմտությունները զարգացնելու նպատակով:

Այս համատեքստում առանցքային դեր է վերապահվում գրադարանավարին, որը ոչ միայն գրադարանային հավաքածուների կառավարման պատասխանատուն է, այլև կրթական միջավայրում առաջնորդող գործիչ, որն ուղղորդում է աշակերտներին գրքի և տեղեկատվության աշխարհում (ՂԱՐԻԲՅԱՆ, ՇԱՀԲԱԶՅԱՆ, ԱՃԵՄՅԱՆ 2017, 52):

Ներկայում ՀՀ դպրոցական գրադարանների առջև դրված են մի շարք ռազմավարական նպատակներ՝ ուսումնական ծրագրերի աջակցում, տեղեկատվական գրագիտության զարգացում, ընթերցանության խթանում, դպրոցական համայնքի հետ համագործակցության ամրապնդում և այլն (ՁԵՌՆԱՐԿ 2011, 74): Առաջադրված մարտահրավերների կողքին, սակայն, ՀՀ կրթական համակարգում դպրոցական գրադարանները գրեթե անտեսված են: Տեղեկատվական կենտրոններ դառնալու փոխարեն նրանք վերածվել են դասագրքեր պահելու և սպասարկելու բաժինների: Պատճառն, իհարկե, պետական աջակցության սահմանափակումն է, տրամադրված ֆինանսական սղությունը, ոչ մասնագիտական մոտեցումը: Փաստ է, որ դպրոցական գրադարաններում հիմնականում աշխատում են մարդիկ, ովքեր որևէ առնչություն չունեն գրադարանային գործի հետ: Սա տագնապալի երևույթ է, և անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ:

Դպրոցական գրադարանների գործունեության վերլուծություններն այսօր սակավաթիվ են: Մինչդեռ պարբերաբար իրականացվող հարցումները, ուսումնասիրությունները հնարավորություն

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կտան վերհանել խնդիրը, հետազոտել, գտնել լուծումը և կիրառել, որպեսզի փոխվի ներկայում տիրող պատկերը:

### **Դպրոցական գրադարանի գործունեության նպատակը և գործառույթները**

Նախքան դպրոցական գրադարանների գործունեությանն առաջադառնալը, առանձնացնենք հիմնական նպատակները.

✓ Կրթական գործընթացին զուգահեռ տեղեկատվության ապահովում:

✓ Աջակցություն աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

✓ Հավաքածուների արագ և արդյունավետ սպասարկում բուլրին:

✓ Տեղեկատվական պաշարների իրազեկում:

✓ Տեղեկատվական դաշտում որոնման կարողությունների և հմտությունների ձևավորում:

✓ Տարաբնույթ միջոցառումների կազմակերպում (ՈՍԿԱՆ-ՅԱՆ 2008, 26):

Դպրոցական գրադարանները օժանդակում են ակտիվ ուսուցանման և ուսումնառության զարգացմանը՝ առաջնորդվելով ՀՀ կրթական առաջնահերթություններով: Դրանք սերտորեն կապված են դպրոցին, համահունչ են նրա պահանջներին և էական ազդեցություն ունեն ուսումնական ծրագրերի և գործընթացի վրա: Միևնույն ժամանակ դրանք ժամանցի վայրեր են:

Դպրոցական գրադարանների գործառույթները, համահունչ լինելով ընդհանուր պահանջներին ու չափորոշիչներին, այնուամենայնիվ տարբերվում են մնացած գրադարանների գործառույթներից: Իրենց բնույթով դրանք շատ մոտ են մանկական գրադարաններին: Առանձնացնենք չորս հիմնական գործառույթ.

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

✓ Տեղեկատվական - տեղեկատվության օգտագործման հնարավորություն՝ անկախ դրա տեսակից, ձևաչափից և կրիչից, տեղեկատվական աջակցություն ուսումնական գործընթացին, տեղեկատվական գրագիտության բարձրացում:

✓ Դաստիարակչական – պիտանի քաղաքացու ձևավորում:

✓ Մշակութաբանական – աշակերտների մեջ մշակութային և սոցիալական ինքնագիտակցության ձևավորում, ընթերցանության նկատմամբ հետաքրքրության զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և այլն:

✓ Կրթական – աջակցություն ուսումնական ծրագրերին, կրթական գործընթացի ապահովում, հավաքածուների կազմակերպում և մշակում (մատենագիտական նկարագրություն, դասակարգում, տեխնիկական մշակում, գրանցում և այլն):

Դպրոցական գրադարանների գործունեության հիմնական ուղղություններն են.

✓ Աշխատանք գործընթացում ընդգրկված բոլոր մասնակիցների հետ - գրադարանի մասին տեղակատվության տրամադրում, առկա գրականության ներկայացում, տպագիր նյութի հետ աշխատելու հմտությունների ձևավորում, մատենագիտական որոնման հնարավորության ընձեռում, դպրոցական տարաբնույթ միջոցառումների մասնակցություն և աջակցում:

✓ Աշխատանք հավաքածուների հետ – նոր գրականության ուսումնասիրում և համալրում, հավաքածուների մշակում, դասակարգում, ստուգում և այլն:

✓ Տեղեկատու-մատենագիտական աշխատանք – ընթերցանության պայմանների ստեղծում և ապահովում, սպասարկման որակի բարելավում և արդյունավետության բարձրացում, ուղղորդող

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գրույցների անցկացում, ընթերցված գրքերի քննարկում, տեղեկություն գտնելու հմտությունների ձևավորում և այլն:

✓ Դպրոցական գրադարանների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում և աշխատանքների կազմակերպում:

✓ Ընթերցողների հետ շարունակական աշխատանքների կազմակերպում:

Ժամանակակից աշխարհի զարգացումներին համընթաց՝ փոխվում են ընթերցանությանն ու այն աշակերտին մատչելի դարձնելու պահանջները: Այսօր դժվար է պատկերացնել երեխայի զարգացումը առանց գիտության, տեխնիկայի և մշակույթի նորագույն նվաճումներին հաղորդակցվելու: Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները, որոնք լրացնում են ուսուցման գործընթացը, արդյունավետ չեն լինի առանց դպրոցական գրադարանների: Հետևաբար, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է ապահովել աշակերտի կապը գրքին և գրքերի աշխարհին, որը կնպաստի նրանց գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը:

Յուրաքանչյուր դպրոց պարտավոր է պարբերաբար թարմացնել իր գրադարանային հավաքածուն և ապահովել դրանց մասին տեղեկատվությունը ուսումնական գործընթացում ընդգրկված բոլոր մասնակիցների համար: Սա նպաստում է ինչպես աշակերտների տեղեկատվական գիտելիքների ընդլայնմանը, այնպես էլ ուսուցիչների տեղեկացված լինելուն և, ըստ այդմ, կրթական գործընթացը կազմակերպելուն:

Դպրոցական գրադարանի գործունեության մեջ հատկապես ավագ դպրոցի աշակերտները պետք է ներգրավվեն՝ որպես մասնակից, ինչի շնորհիվ նրանք կարող են ձեռք բերել փորձ, գրադարանից օգտվելու հմտություն, գրքի հետ շփվելու մշակույթ, տեղեկույթը

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

գտնելու կարողություն: Նման պարագայում նրանք կկարողանան շփվել տարբեր տարիքի երեխաների հետ, կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և այլն: Արդյունքում կձևավորվի ընթերցասեր լսարան:

Դպրոցական կրթական համակարգում գրադարանի, ընթերցողների և հավաքածուների միջև հարաբերության որոշումը, ուսումնական ծրագրերից բխող դպրոցի ուսուցչական կազմի և սովորողների ընթերցողական պահանջների սոցիոլոգիական ուսումնասիրությունը և հետազոտության արդյունքների արդյունավետ կիրառումը կարող է հստակություն մտցնել ոչ միայն տեղեկատվական աղբյուրների ձեռքբերման, այլև գրադարանները նախ և առաջ գրադարանավար-մատենագետ մասնագետներով համալրելու, գիրք-գրադարան-ընթերցող կապերը ակտիվացնելու և կրթական գործը արդյունավետ դարձնելու հարցերում:

Որպեսզի դպրոցում ստեղծվի տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայր, անհրաժեշտ է իրականացնել գրադարանային հավաքածուների շարունակական համալրում, գրքերի տեսության և թեմատիկ այլ միջոցառումների կազմակերպում, գրադարանային-մատենագիտական սպասարկում՝ անկախ դասական և տեխնոլոգիական մեթոդների կիրառումից: Իհարկե, այս հարցերը մասնագետների ուշադրության կենտրոնում են, սակայն խոսքը ուսուցման գործընթացում գրադարանային-մատենագիտական գիտելիքների տարածմանն ու տեղեկատվական միջոցները ավելի մատչելի դարձնելու մասին է, որոնցում աշխատանքային իրենց մասնաբաժինն ունեն գրադարանավարները:

Հատկապես ավագ դպրոցներում խիստ կարևորվում է էլեկտրոնային գրադարանի և համապատասխան մասնագետի առկայությունը: Անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային քարտարաններ,

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ավելին, աշակերտներն իրենք կարող են մասնակցել այդ քարտարանի ձևավորմանը՝ ներդնելով նաև այս ոլորտում ունեցած իրենց գիտելիքներն ու գաղափարները (ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ, ԹԵՐԶՅԱՆ 2004, 24-26): Կարևոր է նաև տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել շփում տարբեր ոլորտների մասնագետների հետ: Սա իր հերթին կարող է նպաստել հետագայում մասնագիտական կողմնորոշմանը:

Դպրոցական գրադարանը էական նշանակություն ունի կրթական երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր մշակելու գործընթացում: Որպես մի հաստատություն, որի համար պատասխանատվություն են կրում համայնքային, մարզային իշխանությունները և ԿԳՄՍ-ն, այն պետք է ապահովվի առանձնահատուկ օրենսդրությամբ և քաղաքականությամբ: Դպրոցական գրադարանները պետք է ունենան որակյալ աշխատակազմի, նյութերի, տեխնոլոգիաների և սարքերի ձեռքբերման համար անհրաժեշտ համարժեք և հաստատուն ֆինանսավորում:

### ***Դասագրքերի շրջանառու հիմնադրամի (ԴՀՇ) կիրառումը դպրոցական գրադարաններում<sup>1</sup>***

Դասագրքերի շրջանառու հիմնադրամը (այսուհետ՝ ԴՀՇ), որպես հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին դպրոցական դասագրքերով ապահովելու մեխանիզմ, Հայաստանում գործում է 1997 թվականից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գի-

---

<sup>1</sup> Դասագրքերի և տեղեկատու հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ [https://dshh.am/am/reports\\_from\\_crm](https://dshh.am/am/reports_from_crm) (17.06.2025)

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 1579-Ն որոշման N 1 հավելվածի 10-րդ կետի ԺԶ. ենթակետը՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողներին դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերի հրատարակման, վերահրատարակման ու վերարտադրության գործընթացը կանոնակարգելու նպատակով նշվել է հետևյալը. «Հաստատել «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը»՝ համաձայն հավելվածի»:

Համակարգի ձևավորման հիմքում դրվել են հետևյալ նպատակները և խնդիրները.

✓ արդիականացնել հանրակրթական առարկաների դասագրքերը և ուսուցչի ձեռնարկները՝ միաժամանակ բարելավելով դասագրքերի արտադրական որակը և դարձնելով դրանք առավել մատչելի սովորողի համար,

✓ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր սովորողի ապահովել հանրակրթական առարկաների դասագրքերով,

✓ հիմք դնել իրական պահանջարկի վրա հիմնված դասագրքերի հրատարակման կայուն համակարգի,

✓ հիմնել դասագրքաստեղծման ինքնաֆինանսավորվող և հարատև գործող համակարգ:

2000 թ. այն վերակազմավորվել է հիմնադրամի, իսկ 2011 թ. ընդլայնել է իր գործունեությունը և վերանվանվել Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի (այսուհետ՝ ԴՇՀ):

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԴՇՀ-ի ուշադրության կենտրոնում դասագրքերն են, ուսումնամեթոդական տարաբնույթ ձեռնարկները, որոնք կիրառվում են դպրոցներում կամ կապ ունեն կրթական գործընթացների հետ: ԴՇՀ-ի շահառուներն են ուսումնական հաստատությունները, մանկավարժները, սովորողները և ծնողները: Առանձնակի հոգածության խմբում են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, սահմանամերձ համայնքների հաստատությունների սովորողները, որոնց համար ներդրումային գումարները փոխհատուցվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

ԴՇՀ-ն սերտորեն համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ դասագրքերի և ուսումնամեթոդական գրականության անվանացանկերի կազմման, տպաքանակների ձևավորման, տեխնիկական չափորոշիչների հաստատման և հրատարակման աշխատանքներում, ինչպես նաև դասագրքերի ստեղծման, գնահատման, տրամադրման ու գործածության հետ կապված կանոնակարգերի, ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակման ու իրականացման հարցերում:

Դպրոցի դասագրքերն, անշուշտ, կարող են կենտրոնացված կառավարվել դպրոցի գրադարանի կողմից: Գրադարանի կառավարման համակարգը կարող է այնպես կառուցվել, որ այն կառավարի դասագրքերի շրջանառությունը սովորողների համար: Դասագրքերը պահպանելու համար անհրաժեշտ է հատկացնել առանձին տարածք: Դպրոցի գրադարանի հիմնական հավաքածուներում պետք է առկա լինեն դասագրքերի մեկական օրինակներ: Դասագրքերի սպասարկումը գրադարանավարի գործառույթներից մեկն է: Սպասարկման մեխանիզմները գրադարանի քաղաքականության մաս են կազմում: Դա կարող է լինել մեկ էջանոց փաստաթուղթ, որը կցվում է դպրոցի գրադարանի ձեռնարկին: Այն պետք է ներառի տե-

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ղեկություն՝ ե՞րբ են գնվել դասագրքերը, ե՞րբ պետք է դասագրքերը փոխարինվեն, ո՞ր խումբը ի՞նչ դասագիրք է օգտագործում, որո՞նք են տարեկան ծախսերը և դրանց հաշվապահական հաշվարկները:

### **Ամփոփում**

Դպրոցական գրադարանները ՀՀ-ում հետանկախության տարիներին կանգնել են նոր մարտահրավերների առաջ, քանի որ այն պահանջները, որոնք առաջադրվել են կամ որոնք արդեն իրականություն են դառնում այլ երկրներում, մեզ մոտ գտնվում են ավելի շատ գաղափարների և որոշումների դաշտում: Գտնվելով դպրոցի տնօրենի անմիջական ղեկավարության ներքո՝ գրադարաններն հաճախ սահմանափակվում են նեղ սահմանների մեջ և հնարավորություն չեն ունենում հանդես գալու նոր գաղափարներով և նախաձեռնություններով: Ի վերջո նման մոտեցման շնորհիվ նրանք դառնում են դասագրքերի պահող և սպասարկող պահեստներ: Մյուս կողմից, առանձին դպրոցների օրինակը ցույց է տալիս, որ համապատասխան ցանկության, մասնագիտական կարողության և ֆինանսավորման դեպքում հնարավոր է ձևավորել ժամանակակից պահանջներին համապատասխան և հնարավորություններով օժտված գրադարան, որը կդառնա տեղեկատվական կենտրոն տվյալ դպրոցի բոլոր աշակերտների ու ուսուցիչների համար:

### **Օգտագործված գրականության ցանկ (References)**

ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ, ԹԵՐԶՅԱՆ 2004 – Աստվածատրյան, Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ. (2004), *Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում*, Երևան, Ասողիկ, 2004, 232 [Astvatsatryan, M., @e8zyan, G., Torosyan, A, Sharkhatunyan, H. (2004), *Teghekatvakan-haghordaktsakan tekhnologianeri kirarumy hanraktakan dprotsum*, Yerevan, Asoghik, 2004, 232];

ՂԱՐԻԲՅԱՆ, ՇԱՀԲԱԶՅԱՆ, ԱՃԵՄՅԱՆ 2017 – Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը: Մեթոդական ձեռնարկ (2017),

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

թարգմ.՝ Նազենի Ղարիբյան, Արուսյակ Շահբազյան, Նաիրա Աճեմյան, Երևան, 52 [Mankapatanekean yntertsanutyan kazmakerpomy: Metodakan dzernark (2017), targm. Nazehi Gharibyan, Arusyak Shahbazyan, Naira Achemyan, Yerevan, 52].

## THE ROLE OF SCHOOL LIBRARIES IN EDUCATIONAL SYSTEM OF RA

ZARUHI TONOYAN

*Faculty of Culture of ASPU*

*Department of Museology, Library Studies and Bibliographies*

*Ph.D. in Philology*

**Բանալի բառեր՝** School Library, Educational system, Library functions, Events, Information Provision, Literature Service

School libraries in RA have faced new challenges in the post-independence years, because the demands that have been put forward or that are already becoming a reality in other countries are more in the field of ideas and decisions. Being under the direct leadership of the school principal, libraries are often confined within narrow boundaries and do not have the opportunity to come up with new ideas and initiatives. Ultimately, thanks to such an approach, they become warehouses that store and serve textbooks. On the other hand, the example of individual schools shows that with the appropriate desire, professional ability and funding, it is possible to form a library in accordance with modern requirements and endowed with opportunities, which will become an information center for all students and teachers of the given school.

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

### **ԱՊԱՐԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ \***

**ՀՏԴ: 02(479.25)**

**DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-97**

### **ԱՐՓԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան**

**ORCID: [0009-0000-0883-354X](https://orcid.org/0009-0000-0883-354X)**

Սույն հոդվածի շրջանակում անդրադառնում ենք Ապարան խոշորացված համայնքի գրադարանների գործունեությանը, կառուցվածքային առանձնահատկություններին, ձեռքբերումներին, խնդիրներին և գործառույթներին: Տեղական ինքնակառավարման մարմինների կենտրոնացման արդյունքում ձևավորված համայնքային գրադարանային ցանցը կանգնած է մարտահրավերների առաջ, որոնք առնչվում են մարդկային ռեսուրսներին, նյութատեխնիկական բազային, թվայնացմանը, օգտվողների կարիքների բավարարմանը: Հոդվածում կարևորվում են համայնքային գրադարանները՝ որպես կրթության շարունակականությունն ապահովող ու մշակութային ժառանգության պահպանումն իրականացնող կառույցների: Դիտարկվում են նաև գրադարանային ծառայությունների արդիականացմանն ուղղված նոր մոտեցումները:

*This article focuses on the activities, structural features, achievements, challenges, and functions of the libraries within the enlarged Aparan community. As a result of the centralization of local self-government bodies, the newly formed community library network faces several challenges related to human resources, material and technical infrastructure, digitization, and the ability to*

---

\* Հոդվածը ներկայացվել է 16.05.2025, գրախոսվել է 08.06.2025, ընդունվել է տպագրության 25.06.2025:

*The article was submitted on 16.05.2025, reviewed on 08.06.2025, accepted for publication on 25.06.2025.*

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

*meet user's needs. Special attention is given to the regional importance of libraries as institutions that ensure the continuity of education and preserve cultural heritage. The article also explores new approaches aimed at modernizing library services.*

**Քանայի բառեր՝** Ապարան, համայնքային գրադարաններ, գրադարանների վիճակագրական տվյալներ, գրադարանային գործառույթներ, սպասարկում, հավաքածուներ, թվայնացում:

**Ինչպես հղել՝** Հայրապետյան, Ա. (2025), Ապարան խոշորացված համայնքի գրադարանները, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 97-109. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-97](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-97)

**How to cite (APA style):** Hayrapetyan, A. (2025). Libraries of the Enlarged Aparan Community, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 97-109. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-97](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-97)

### **Ներածություն**

ՀՀ գրադարանային ընդհանուր համակարգում առանձնանում են համայնքային, մարզային և քաղաքային գրադարանները, որոնց գործունեությունը թեև կազմակերպվում է ընդհանուր օրենսդրական կարգավորումներով, այնուամենայնիվ, ունի նաև առանձնահատկություններ: Անվիճելի է նրանց ունեցած կարևոր դերը ՀՀ համայնքների զարգացման, սոցիալ-տնտեսական գործունեության ու մշակութային վերելքի գործում:

Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության ներքո գործող գրադարանները կրում են ինչպես հասարակության սպասարկման, այնպես էլ գիտակրթական միջավայր ձևավորելու պատասխանատվություն: Խորհրդային շրջանից ժառանգություն ստացած համայնքային գրադարանային ցանցը հետանկախության շրջանում բախվել է բազմաթիվ խնդիրների՝ կապված ֆինանսավորման սղության, մասնագիտական մարդու չի նվազման, գրադարա-

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

նային հավաքածուների մաշվածության և տեխնոլոգիական անբավարարության հետ:

Վերջին տասնամյակներում նկատվում են գրադարանային ոլորտի վերակենդանացման միտումներ՝ պետական ու միջազգային ծրագրերի, ինչպես նաև թվային լուծումների ներդրման շնորհիվ: Համայնքային գրադարանները փորձում են արձագանքել նոր մարտահրավերներին՝ վերանայելով իրենց առաքելությունը և կիրառելով նոր մեթոդներ ու ծառայություններ: Այս համատեքստում կարևորվում է համայնքային գրադարանների դերը ոչ միայն որպես գրքի սպասարկման կենտրոններ, այլև որպես բազմաֆունկցիոնալ հարթակներ, որտեղ միահյուսվում են կրթական, մշակութային և սոցիալական նախաձեռնությունները:

Սույն հոդվածով նպատակ ունենք ներկայացնելու Ապարան խոշորացված համայնքի գրադարանների ընդհանուր վիճակը, վերհանել դրանց առջև ծառայած խնդիրները և ներկայացնել զարգացման հեռանկարները՝ հիմնված տեղական և միջազգային լավագույն փորձի վրա:

### ***Ապարանի շրջանի գրադարանների ընդհանուր պատկերը***

Խորհրդային իշխանության հաստատումից հետո Հայաստանի տարբեր շրջաններում կրթական և մշակութային զարգացումը դարձել էր առաջնահերթություն, ինչը համընկնում էր անգրագիտության վերացման ու զանգվածային լուսավորական քաղաքականության պահանջներին: 1927 թ. «Խորհրդային Հայաստան» թերթում, ի թիվս այլևայլ խնդիրների, նշվում է. «Ապարանը Հայաստանի թե՛ կուլտուրական և թե՛ տնտեսական տեսակետից ամենից շատ հետամնաց շրջաններից մեկն է» (ԳՐԻԳՈՐՅԱՆ 1927, 3): Այդուհանդերձ, տեղական իշխանությունները որդեգրում են կրթության և

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

մշակույթի զարգացման քաղաքականություն՝ նպատակ ունենալով բարձրացնել բնակչության կուլտուրական մակարդակը:

1920-ականներին մշակութային գործունեության հիմնական օջախները Ապարանում դառնում են խրճիթ-ընթերցարանները: 1926 թ. Ապարանի շրջանում արդեն գործում էր չորս ընթերցարան՝ Ալիքուչակ, Բաշ-Ապարան, Բլխեր և Ղարաբուլաղ գյուղերում: Չնայած այս նախաձեռնությանը, 1931 թ. ՀԿ(Բ)Կ Կենտկոմին ուղղված գեկուցագրում (ՀԱԱ, ֆ. 35, գ. 26, թ. 16) նշվում է, որ ընթերցարանների մեծ մասն «իրենց կոչման բարձրության վրա կանգնած չեն»՝ պատճառաբանելով խրճիթավարների անորակ պատրաստվածությունը: Այդուամենայնիվ, ընթերցարանների թիվը աճում է. 1931 թ. դրանց թիվը հասնում է 13-ի: Բացի խրճիթ-ընթերցարաններից, նույն թվականին բոլոր կոլտնտեսություններին կից սկսում են գործել փոքրիկ մասսայական գրադարաններ և ընթերցարաններ:

1921 թ. Բաշ-Ապարանում հիմնվում է առաջին առանձնացված գրադարանը՝ գրքային փոքրաթիվ հավաքածուով: Այն ստանձնում է գրքային ֆոնդի բաշխման, մեթոդական ղեկավարության և բոլոր ընթերցարանների աշխատանքների համակարգման գործառույթները: 1927 թ. հասարակության միջոցներով ու ջանքերով կառուցվում է առաջին խրճիթ ընթերցարանի շենքը, որի վարիչն է դառնում Գեղամ Գրչաղեկյանը: 1939 թ. Ապարանում պաշտոնապես բացվում է շրջանային գրադարանը (ՀԱԱ, ֆ. 35, գ. 89, թ. 113), որն այս կարգավիճակով գործում է մինչև 1978 թ.՝ կենտրոնացված գրադարանային համակարգի (ԳԿՀ) ստեղծումը:

ԳԿՀ-ն միավորում էր 21 մասնաճյուղ գրադարան՝ կենտրոնական գրադարանի հետ միասին: Համակարգը ուներ հստակ կառուցվածք՝ համալրման, մշակման, մեթոդական, մատենագիտական, սպասարկման և մանկական բաժիններով: Գրադարանը հաճախա-

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կի համալրվում էր գրականությամբ և պատշաճ կարգով մատուցում ծառայություններ: Մինչև ԳԿՀ-ի լուծարումը (22.11.1996 թ.), կենտրոնացված համակարգն ուներ 111,430 միավոր գրականություն, որից 23,310-ը՝ հասարակական-քաղաքական, 4,882-ը՝ բնագիտական, 2624-ը՝ տեխնիկական, 3821-ը՝ գյուղատնտեսական, 5486-ը՝ արվեստ և սպորտ, 5.608-ը՝ լեզվաբանություն, 58.768-ը՝ գեղարվեստական, 6.931-ը՝ նախադպրոցական: Առկա գրականությունից 101.768-ը հայերեն էր, իսկ 9.642-ը՝ ռուսերեն<sup>1</sup>:

Մինչև ԳԿՀ-ի լուծարումը, գրադարանն աշխատել է կարգավորված աշխատանքային ընթացակարգով, ամիսը մեկ անգամ բաշխիչ կենտրոնից ստացել է համապատասխան գրականությունը: Գրադարանում գործող յուրաքանչյուր բաժին կատարել է իր գործառույթները, գործել են այբբենական և կարգային գրացուցակները, իսկ սպասարկման և մանկական բաժիններում՝ վերնագրային քարտարանը: ԳԿՀ-ն ունեցել է համահավաք հաշվառային գրացուցակներ, որոնք մինչև օրս էլ պահպանվում են:

1996 թ. նոյեմբերի 22-ին Արագածոտնի մարզպետի թ. 246 կարգադրությամբ լուծարվել է Ապարանի ԳԿՀ-ն: Քաղաքապետի 1997 թ. մարտի 14-ի թ. 50 կարգադրությամբ Ապարանի ԳԿՀ-ի լուծարված կենտրոնական գրադարանը վերանվանվել է քաղաքային համայնքային գրադարան և հանձնվել է քաղաքապետարանին: 21 մասնաճյուղերը հանձնվել են համայնքներին և կոչվել են համայնքային գրադարաններ (Հարթավան, Եղիպատրուշ, Ձորագլուխ, Չքնաղ, Ջրամբար, Մուքի, Սարալանջ, Լուսագյուղ, Նիգավան, Վարփենիս, Թթուջուր, Արայի, Ծաղկաշեն, Ափնա, Երնջատափ, Նորաշեն, Շենա-

---

<sup>1</sup> Այս և այսուհետ ներկայացված բոլոր տվյալները տրամադրել է գրադարանը:

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

վան՝ թվով 2 գրադարան, Քուչակ, Վարդենուտ, Արագած՝ թվով 3 գրադարան:

ԳԿՀ-ի գործունեության տարիներին Ապարանի կենտրոնացված գրադարանի մանկական բաժինն ունեցել է առանձին շենք, ընդարձակ տարածք, որը համապատասխանում էր բոլոր պայմաններին: 1988 թ. երկրաշարժից հետո, երբ գրադարանների շենքային պայմանները վատթարանում են, մանկական բաժինը տեղափոխվում է ու միացվում ընդհանուր գրադարանին: ԳԿՀ-ի լուծարումից հետո քաղաքապետարանը Ապարանի քաղաքային գրադարանին է տրամադրում «Մշակույթի տուն» ՊՈԱԿ-ի համար նախատեսած նորակառույց շենքի ամբողջ երրորդ հարկը, որը բավականին ընդարձակ էր և հարմարավետ: Ընդհանուր մակերեսը կազմում է 866,17մ<sup>2</sup>:

ԳԿՀ-ի լուծարումից հետո Ապարանի տարածաշրջանի համայնքային մասնաճյուղ գրադարաններն առերեսվել են լուրջ խնդիրների: Առաջացած հիմնական դժվարությունները կապված էին ֆինանսների բացակայության և պետական անտարբերության հետ: Դժվարությունների պատճառով համայնքներում գործող մի շարք գրադարաններ փակվում են:

ԳԿՀ-ի լուծարումից հետո Ապարանի քաղաքային գրադարանին փոխանցված համայնքային գրադարանների մի մասը դադարեցնում են իրենց գործունեությունը: Ավելին, փակված գրադարանների գրքային ֆոնդի ճակատագիրն ամբողջությամբ պարզ չէ: Մասնակիորեն հայտնի է, որ այդ ֆոնդերը հանձնվել են համապատասխան դպրոցական գրադարաններին, իսկ մնացած մասը մնացել է հանրային օգտագործումից դուրս:

1997 թ. փակվել են Ապարանի շրջանի հետևյալ գրադարանները.

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

✓ Եղիպատրուշի - գրքային ֆոնդ՝ 4200 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Հարթավանի - գրքային ֆոնդ՝ 3600 միավոր, դեռ պահպանվում է,

✓ Ձորագլուխի - գրքային ֆոնդ՝ 4800 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Չքնաղի - գրքային ֆոնդ՝ 3289 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Ջրամբարի - գրքային ֆոնդ՝ 1489 միավոր, պահպանվել է, քանի որ այս համայնքում լուծարվել է նաև դպրոցը,

✓ Մուկիքիի - գրքային ֆոնդ՝ 5720 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Սարալանջի - գրքային ֆոնդ՝ 3300 միավոր, չի հանձնվել դպրոցական գրադարանին, քանի որ դպրոցում չկա գրադարանի աշխատակից,

✓ Լուսագյուղի - գրքային ֆոնդ՝ 4600 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Նիգավանի - գրքային ֆոնդ՝ 7900 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Վարդենուտ՝ գրքային ֆոնդ՝ 6824 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

✓ Թթուջուրի - գրքային ֆոնդ՝ 3200 միավոր, որը պահպանվել է, սակայն շուտով կհանձնվի դպրոցական գրադարանին:

Այն համայնքներում, որոնցում ֆոնդերը չեն հանձնվել դպրոցական գրադարաններին, պատասխանատուներն առ այսօր պատճառաբանում են, թե տվյալ համայնքի դպրոցն ունի տարածքի և գրքերի պահպանության խնդիր: Մնացյալ համայնքային գրադա-

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

րանները շարունակել են իրենց գործունեությունը՝ փորձելով հաղթահարել առկա խնդիրները:

Համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում 2017 թ. փակվում են ևս 7 գրադարաններ, ինչը նոր խնդիրների առաջ է կանգնեցնում գրադարանավարներին: Լուծարված գրադարաններն են.

- ✓ Ափնայի - գրքային ֆոնդը՝ 4596 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

- ✓ Ծաղկաշենի - գրքային ֆոնդը՝ 4746 միավոր, պահպանվել է,

- ✓ Երնջատափի - գրքային ֆոնդը՝ 2500 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

- ✓ Նորաշենի - գրքային ֆոնդը՝ 2340 միավոր, հանձնվել է դպրոցական գրադարանին,

- ✓ Արայի - գրքային ֆոնդը՝ 4240 միավոր, պահպանվել է,

- ✓ Շենավանի - գրքային ֆոնդը՝ 13600 միավոր, պահպանվել է:

Ըստ Ազգային գրադարանի 2023 թ. հրապարակած վիճակագրության՝ Ապարանի տարածաշրջանում գրանցված են 2 քաղաքային և 7 գյուղական գրադարաններ (ԱՍԼԱՆՅԱՆ 2024, 102), մինչդեռ փաստացի գործում են ընդամենը 1 քաղաքային և 3 գյուղական գրադարան, ինչը վկայում է վիճակագրական տվյալների և իրական պատկերի անհամապատասխանության մասին:

Խնդիրները բազմազան են: Առաջին խնդիրն առնչվում է այն գրադարաններին, որոնք փակվել են, սակայն հավաքածուները պահպանվում են առ այսօր: Պարզ չէ դրանց հետագա ճակատագիրը: Երկրորդ խնդիրն առնչվում է այն գրադարաններին, որոնք փակվել են, իսկ ֆոնդերը հանձնվել են դպրոցական գրադարաններին:

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գյուղի բնակիչները չեն կարողանում լիարժեք օգտվել այդ հավաքածուներից, իսկ դպրոցահասակ երեխաների համար խնդիրներ են առաջացնում ամառային արձակուրդները, քանի որ դպրոցական գրադարանի գրադարանավարը ամռանը գտնվում է իր տարեկան պարտադիր արձակուրդում:

Երեք գրադարանները՝ Քուչակի, Արագածի և Վարդենուտի, շարունակում են իրենց գործունեությունը մինչ օրս: 2021 թ. այցելել են երեք գրադարանները, անձամբ ուսումնասիրել գրադարանների գործունեությունը: Արդյունքը հետևյալն է.

Արագած - 1948 թ. Ղազնաֆարը վերանվանվել է Արագած: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո առաջին գրադարանը՝ խրճիթ-ընթերցարանը, հիմնադրվել է 1926 թ.: Առաջին գրադարանավարը՝ խրճիթավարը, եղել է Նախշուն Գասպարյանը: Խրճիթ-ընթերցարանը գործել է մինչև 1950-ական թվականները, որից հետո գյուղում բացվել է գրադարան:

Լինելով տարածաշրջանի առավել մեծ համայնքներից մեկը (3600 բնակիչ)՝ Ժամանակին այստեղ գործել է գյուղական երկու գրադարան, որոնցից մանկականն ունեցել է 4000 միավոր գրականություն: Սրա հիման վրա կազմավորվել է Արագածի ներկայիս համայնքային գրադարանը, որի ընդհանուր գրքային ֆոնդը կազմում է 12000 միավոր գրականություն, ընթերցողների թիվը՝ 650-700: Գրադարանը ակտիվորեն մասնակցում է գյուղի մշակութային կյանքին, բավարարում է ընթերցողական պահանջները, կազմակերպում է մասսայական միջոցառումներ: 2023 թ. գրադարանային հավաքածուն (ֆոնդը) համալրվել է նվիրատվությունների հաշվին:

Քուչակ - Առաջին ծխական դպրոցը գյուղում գործել է 1869 թ.: 1940 թ. կառուցվել է մշակույթի տունն՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով (450 նստատեղով հանդիսասարահ, ընթերցասարահ):

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

1938 թ. գյուղի բնակիչ Եղիազար Ամիրյանն իր տան սենյակներից մեկը տրամադրել է խրճիթ-ընթերցարանի համար: Խրճիթավարներ Ա. Շաբոյանի և Ծ. Ադամյանի ջանքերով, համայնքի անդամների նվիրատվության հաշվին, բազմապատկվել է գրքային ֆոնդը: 1953 թ. խրճիթ-ընթերցարանը վերածել է համայնքային գրադարանի, դարձել մշակութային առանձին օջախ: 1981 թվականից առ այսօր գրադարանի աշխատանքները կազմակերպում է Էջմիածնի ակումբա-գրադարանային տեխնիկումի շրջանավարտ Անահիտ Ասատրյանը: Ունի 6989 միավոր գիրք, 300 ընթերցող: 2023 թ. համայնքային գրադարանի գրադարանային հավաքածուն համալրվել է նվիրատվությունների հաշվին:

Վարդենուտ - Գյուղի գրադարանը տեղավորված է մշակույթի տան շենքում: Այն հիմնադրվել է 1930-ական թթ.: Առաջին գրադարանավարն է եղել Համո Մխիթարյանը: Հետագայում նրան փոխարինել է միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող Ժենյա Սահակյանը, որը երկար տարիներ աշխատել է գրադարանների կենտրոնացված համակարգում: 1993 թվականից հետո առ այսօր գրադարանի աշխատանքները վարում է Էջմիածնի ակումբա-գրադարանային տեխնիկումի շրջանավարտ Մարո Նիկողոսյանը: Նրա աշխատանքի շնորհիվ ամբողջությամբ պահպանվել է գրքային հավաքածուն (6000 միավոր): Ընթերցողների տարիքային կազմը բազմաշերտ է՝ դպրոցահասակ երեխաներից մինչև թոշակառուներ: Գրադարանի աշխատանքների հաջողությունը մեծապես կապված է համայնքի գյուղապետի, մշակույթի տան տնօրենի անմիջական աջակցության և հոգատար վերաբերմունքի հետ: 2023 թ. դրությամբ վարչական շրջանի համայնքային գրադարանը տեղակայված է մշակույթի տանը: Նույն թվականին գրադարանային հավաքածուն համալրվել է նվիրատվությունների հաշվին:

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Այցերի, ինչպես նաև տրամադրված հաշվետվությունների շնորհիվ մեզ հասանելի դարձան որոշ տվյալներ, որոնք լավագույնս ներկայացնում են համայնքային այս երեք գրադարանների գործունեությունը: Նշենք, որ ներկայացնում ենք 2023 թ. տվյալները, քանի որ այցերի ժամանակ 2024 թ. գործունեության արդյունքները դեռ պատրաստ չէին: Ըստ այդմ՝ Վարդենուտ գյուղի գրադարանի ֆոնդը կազմում է 7544 միավոր, որից հասարակական-քաղաքական՝ 366, բնական գիտություններ՝ 86, տեխնիկական՝ 143, մշակույթ, արվեստ՝ 115, բանասիրական, գիտական և գեղարվեստական գրականություն՝ 6834: Նրանից մի փոքր քիչ է Քուչակ գյուղի գրադարանի ֆոնդը՝ 7414 միավոր, որից՝ հասարակական-քաղաքական՝ 783, բնական գիտություններ՝ 419, տեխնիկական՝ 625, մշակույթ, արվեստ՝ 474, բանասիրական, գիտական և գեղարվեստական գրականություն՝ 5113: Ամենամեծ հավաածուն ունի Արագած գյուղի գրադարանը՝ 12488, որից՝ հասարակական-քաղաքական՝ 2250, բնական գիտություններ՝ 444, տեխնիկական՝ 402, մշակույթ, արվեստ՝ 622, բանասիրական, գիտական և գեղարվեստական գրականություն՝ 8770: Չնայած նրան, որ Արագած գյուղն ամենամեծերից մեկն է և ունի նաև ամենամեծ ֆոնդը, այնուամենայնիվ, Արագած և Քուչակ գյուղերի գրադարանների սպասարկած ընթերցողների թիվը հավասար է՝ 184, ի տարբերություն Վարդենուտ գյուղի, ուր 2023 թ. սպասարկվել է 825 ընթերցող: Սպարակված գրականության տեսանկյունից գրեթե հավասար են Քուչակ և Վարդենուտ գյուղերի գրադարանների տվյալները. Վարդենուտում սպասարկվել է 1215, իսկ Քուչակ գյուղում՝ 1302 միավոր գրականություն: Արագած գյուղում այս թիվն անհամեմատ մեծ է՝ 3085 միավոր: Հաճախումների քանակը հետևյալն է՝ Արագած – 2879, Քուչակ – 870, Վարդենուտ – 1106:

## ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Երեքի դեպքում էլ գրադարաններից մեծ մասամբ օգտվում են դպրոցականները:

### **Ամփոփում**

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ Ապարանի շրջանում գործում է 1 քաղաքային և երեք գյուղական գրադարաններ: Այս թիվը չի համապատասխանում վիճակագրական պաշտոնական տվյալներին: Համայնքը բավական մեծ է, և 3 գյուղական գրադարանը շատ քիչ է՝ բնակչությանը սպասարկելու համար, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս: Անհրաժեշտ է ավելացնել գրադարանների թիվը: Առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք փորձում են տեղում լուծել հնարավոր բոլոր միջոցներով, սակայն առանց պետական աջակցության և ֆինանսական ներդրումների այդ խնդիրների արմատական փոփոխություն հնարավոր չէ:

### **Օգտագործված գրականության ցանկ (References)**

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1927 – Գրիգորյան, Ա. (1927), Աբարանի շրջանում կուս-աշխատանքները պետք է ուժեղացնել, *Խորհրդային Հայաստան* (Երևան), 157(1818), 9 հուլիսի, 3 [Grigoryan, A. (1927), Abarani shrjanum kushkhatanqneri petk e uzheghatsnel, *Khorhrdayin Hayastan* (Yerevan), 157(1818), 9 hulisii, 3];

ԱՍԼԱՆՅԱՆ 2024 – Ասլանյան, Մ. (կազմ.) (2024), *Հայաստանի գրադարանները 2023 թվականին: Վիճակագրական վերլուծություն*, Երևան, Գիրք, 100 [Aslanyan, M. (comp.) (2024), *Hayastani gradarannery 2023 tvakanin: Vichakagrakan verlutsutyun*, Yerevan, Girk, 102];

ՀԱԱ, ֆ. 35, գ. 26, թ. 16;

ՀԱԱ, ֆ. 35, գ. 89, թ. 113:

# ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

## LIBRARIES OF THE ENLARGED APARAN COMMUNITY ARPINE HAYRAPETYAN

### *Khanko Aper National Children's Library*

**Keywords:** Aparan, Community Libraries, Library Statistical Data, Library Functions, Services, Collections, Digitization.

In conclusion, the study reveals that currently there is one municipal and three rural libraries operating in the Aparan region. This number does not correspond to the official statistical data. Given the size of the community, the presence of only three rural libraries is insufficient to meet the informational and cultural needs of the population, which is a matter of concern. Numerous challenges persist, and while local efforts are made to address them using all available resources, sustainable and fundamental improvements are not possible without state support and financial investment.

## **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

---

### **ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄՆԵՐ**

#### **Հայ գրքի նոր անունների ներկայացում**

ՀՏԴ: 01:002

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-110

#### **ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան  
Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

#### **ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան**

ORCID: [0009-0005-3657-0704](https://orcid.org/0009-0005-3657-0704)

#### **ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան  
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Հայր Գարեգին վրդ. Ջարրհանալեանից սկսած՝ մատենագետների տարրեր խմբեր և անհատ մասնագետներ հետևողականորեն զբաղվել են հայ գրքի մատենագիտական ցանկերի կազմման և լրամշակման աշխատանքներով: Նման ցանկերը, սակայն, երբեք չի կարելի համարել ամբողջական, քանի որ աշխարհի տարրեր գրադարաններում, հաստատությունների արխիվներում ու անհատական հավաքածուներում ի հայտ են գալիս նոր գրքեր,

---

\* Հոդվածը ներկայացվել է 04.05.2025, գրախոսվել է 14.06.2025, ընդունվել է տպագրության 23.06.2025:

The article was submitted on 04.05.2025, reviewed on 14.06.2025, and accepted for publication on 23.06.2025.

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

---

որոնք փարբեր պատճառներով սպրդել են հեփազոփող-մատենագետների ուշադրությունից:

Հողվածը ներկայացնում է նորահայտ հայերեն և հայատառ-թուրքերեն փայագրություններ, որոնք ի հայտ են եկել ԱՄՆ Արփասահմանյան Առաքելությունների հանձնակատարների խորհրդի (ԱԱՀԱԽ) գործունեության շրջանակում: Խորհուրդը գործել է 19-20-րդ դարերում և նպաստել փարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն, հայատառ թուրքերեն, հունարեն գրականության հրատարակմանը: «Վրանգված արխիվներ» ծրագրի շրջանակում թվայնացվել է իրենց հավաքածուներում պահվող փայագիր ժառանգությունը, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել հայտնաբերել նոր գրքեր ու պարբերականներ, որոնք նախկինում չէին ընդգրկվել մատենագիտական ցանկերում: Հողվածում ներկայացված է թվով 62 նորահայտ գրքի մատենագիտական նկարագրություն:

*Since Father Garegin Vardapet Zarbhanalean, various groups of bibliographers and individual specialists have consistently worked on compiling and refining bibliographic catalogs of Armenian books. However, such catalogs can never be considered complete, as new books continue to emerge in different libraries, institutional archives, and private collections worldwide - books that, for various reasons, have previously escaped the attention of bibliographic researchers.*

*The article presents newly discovered Armenian and Armenogram Turkish prints that have come to light within the framework of the American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM) activities. Active during the 19th and 20th centuries, the Board supported the publication of literature in various languages, including Armenian, Armenogram Turkish, and Greek. As part of the "Endangered Archives" program, this printed heritage has been digitized, enabling the discovery of previously unrecorded books and periodicals not included in earlier bibliographic catalogs. The article provides bibliographic descriptions of 71 newly identified books.*

---

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

---

**Քանալի բառեր**<sup>1</sup> ԱՄՆ Արտասահմանյան Առաքելությունների հանձնակատարների խորհուրդ, տպագիր ժառանգություն, միսիոներական գրականություն, թվայնացում, մատենագիտություն, նորահայտ տպագիր անուններ:

**Ինչպես հղել**<sup>1</sup> Ջարգարյան, Տ, Մանուկյան, Մ., Գրիգորյան Մ. (2025). Մատենագիտական հետախուզումներ. հայ գրքի նոր անունների ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 110-140.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-110)

**How to cite (APA style):** Zargaryan, T., Manukyan, M., Grigoryan, M. (2025), Bibliographical Searches: Introducing Newly Discovered Names of Armenian Books, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 110-140.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-110)

### Ներածություն

Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհուրդը<sup>1</sup> (ԱԱՀԱԽ), հիմնադրված 1810 թվականին, Միացյալ Նահանգների առաջին կազմակերպված միսիոներական ընկերությունն էր: Դրա հիմնական նպատակն էր արևմտյան բողոքական քրիստոնեության տարածումը ոչ միայն Հարավային ու Արևելյան Ասիայում, այլև Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում:

1910 թ. իր 100-ամյակի շեմին խորհուրդը պատասխանատու էր 102 միսիոներական կայանների և 600 միսիոներների համար, որոնք տեղակայված էին տարբեր մայրցամաքներում՝ աշխարհի տարբեր երկրներում՝ Չինաստան, Ճապոնիա, Միկրոնեզիա և Ֆիլիպիններ, Հնդկաստան, Աֆրիկա մայրցամաք, Մեքսիկա, Մերձավոր Արևելքի երկրներ և Թուրքիա: Տվյալ տարածաշրջանի ժողովուրդների շրջանում բողոքականության տարածման նպատակով ԱԱՀԱԽ-ը ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում տարբեր լեզուներով գրքե-

---

<sup>1</sup> American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM)

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

---

րի և պարբերականների հրատարակության համար: Տպագրվում էին ինչպես թարգմանված աստվածաբանական գրականություն, այնպես էլ կրթական նյութեր՝ լեզվաբանական և կրոնական բովանդակությամբ:


Հայ բնակչության դեպքում ուշադրության են արժանի հայերեն և հայատառ թուրքերեն տպագիր գրքերն ու պարբերականները, որոնք մեծ պահանջարկ էին վայելում հանրության տարբեր խավերի մոտ: Նույն երևույթը նկատելի էր նաև հույն բնակչության պարագայում. տպագրվում էին ոչ միայն հունարեն, այլև հունատառ թուրքերեն գրքեր<sup>2</sup>: Տպագրվել են նաև հայատառ հունարեն գրքեր, սակայն դրանց թիվը համեմատաբար փոքր է: Որպես նմուշ, բերենք հետևյալը<sup>3</sup>. «Յունարէն քերական: Կէս ժամու մէջ ուսանելի /Յօրինեաց Տիմիթրիօս Ի. Խ. Չօլագիտիս (Չօլագեան); Հրատարակութիւն Պ. Պալենց գրատան.- Կ. Պոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1895.- 31 երկայուն, 1 չի. էջ, շարվ.՝ 14x9 սմ»: Այն նախատեսված է եղել հունարեն սովորողների համար (տե՛ս նկ. 1).

---

<sup>2</sup> Հունատառ-թուրքերեն հրատարակություններն ունեն իրենց մասնագիտական տերմինը՝ կարամանլիդիկա (Karamanlidika): Առկա են նաև եբրայերեն տառերով թուրքերեն հրատարակություններ, արաբատառ իսպաներեն հրատարակություններ և այլն:

<sup>3</sup> Գիրքն առցանց հասանելի է HathiTrust նախագծի կայքից՝ <https://babel.hathitrust.org/cgi/pt?id=mdp.39015041465462&seq=17> (18.06.2025)

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ





**նկ. 1** Հայատառ-հունարեն տպագրության օրինակ

Հարկ է նշել, որ եղել են նաև հայատառ-ռուսերեն գրքեր: Հայատառ-ռուսերեն տպագրությունների թիվը շատ սահմանափակ է, բայց կարևորելով այդ փաստը՝ ներկայացնում ենք նման մեկ օրինակ: Խոսքը Վասակ Մադաթեանի «Կըռթ-կըռթ: Վօղէվիլ մէկ արարուածով» գրքի մասին է, որի առաջին տպագրության մասին մատենագիտական տվյալներ սույն հոդվածի հեղինակները դեռ չունեն: Այդ տվյալները բացակայում են նաև «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ: Թերզիբաշյանը այս հրատարակության համար գրել է. «Կըռթ-կըռթ»-ն առաջին անգամ խաղացվել է Երևանում 1876 թ.: Թիֆլիսում առաջին անգամ բեմադրվել է 1879 թ.: Տպագրվել է առաջին անգամ Երևանում 1880 թ.: Հեղինակի կենդանության օրոք «Կըռթ-կըռթ»-ը ունեցել է չորս հրատարակություն, վերջինը՝ 1908 թ.,

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

հեղինակի նկարով» (ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ 1964, 410, 495, 504): Ա. Ղազիկյանը հավելել է նաև տպարանը՝ Պսակ (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 1718): Հիմք ընդունելով այս նշումը՝ կարելի է մոտավոր կազմել սույն տպագրության մատենագիտական նկարագրությունը՝ «Մադաթեան, Վ., Կըռթ-կըռթ: Վողէվիլ մէկ արարուածով, Երեւան, Պսակ, 1880»: Գիրքն ունեցել է ևս 3 հրատարակություն, հետևյալ հաջորդականությամբ՝ 1884, 1891, 1908 թվականներին: Երկրորդ, երրորդ և չորրորդ տպագրություններն եղել են Թիֆլիսում: Գրքի 1884 թ. հրատարակությունից մեկ հատված ներկայացված է նկար 2-ում:



Նկ. 2 Հայադառ-ռուսերեն տպագրության օրինակ

«Վտանգված արխիվներ» նախագծի շրջանակում, որը ֆինանսավորվում է Բրիտանական գրադարանի կողմից<sup>4</sup>, «Salt Re-

<sup>4</sup> Բրիտանական գրադարանի կողմից ֆինանսավորվող «Վտանգված արխիվներ» նախագծի շրջանակում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

search» կառույցը և Թուրքիայում Ամերիկյան հետազոտական ինստիտուտը<sup>5</sup> համատեղ իրականացրել են 1857-1933 թթ. միջակայքում ԱԱՀԱԽ-ի ջանքերով տպագրված հայերեն, հայատառ-թուրքերեն, օսմաներեն, հունարեն և կարամանլիդիկայով տպագրված պարբերականների, գրքերի, գրքույկների, թռուցիկների թվայնացումը: Այդ նյութերը հասանելի են կառույցի կայքէջից՝ հետևյալ հղման ներքո՝ <https://archives.saltresearch.org/handle/123456789/224889>

Հայերեն հրատարկությունների պարագայում ունենք հետևյալ պատկերը.

Հասանելի են՝

✓ «Աւետաբեր» թերթի 1859-1914 թթ. իրենց մոտ առկա համարները:

✓ «Աւետաբեր» թերթի հայատառ-թուրքերեն տարբերակի 1859-1910 թթ. իրենց մոտ առկա համարները:

✓ «Հայ պատանի» ամսագրի 1920-1922 թթ. իրենց մոտ առկա համարները<sup>6</sup>:

✓ 41 անուն հայատառ թուրքերեն գրքեր (1849-1927 թթ. տպագրություններ), որոնցից 18-ը նորահայտ գրքեր են:

✓ 144 անուն հայերեն գրքեր (1869-1934 թթ. տպագրություններ), որոնցից 44 -ը նորահայտ գրքեր են:

---

2008 թ. և Հայաստանի ազգային գրադարանում 2013 թ. իրականացվել են թվայնացման հետևյալ նախագծերը՝

[Preservation through digitisation of the endangered Armenian rare books and making them accessible on the Web \(phase 1\) \(EAP180\)](#) և [Digital preservation and cataloguing of early printed Armenian maps, periodicals, and newspapers, and making them accessible online \(EAP613\)](#)

<sup>5</sup> American Research Institute in Turkey

<sup>6</sup> Ամսագրի ոչ բոլոր համարներն են առկա Հայաստանի ազգային գրադարանում կամ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում: ԱԱՀԱԽ հավաքածուն ավելի ամբողջական է:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1-ում ներկայացված են 62 նորահայտ գրքերի մատենագիտական նկարագրություններն՝ իրենց տիտղոսաթերթերով:

### **Օգրագործված գրականության ցանկ (References)**

ԹԵՐԻԶԻԲԱՇՅԱՆ 1964 – Թերզիբաշյան, Վ. (1959), *Հայ դրամատուրգիայի պատմություն: Գիրք 2*, Երևան, Հայպետհրատ, 566 [Terzibashyan, V. (1959), *Hay dramaturgiayi patmutyun: Girk 2*, Yerevan, Haypethrat, 566];

ՂԱԶԻԿԵԱՆ 1909 – Ղազիկեան, Ա. (կազմ.) (1909), *Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան, հտ. Ա*, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 2080 [Ghazikyan, A. (comp.) (1909), *Haykakan Nor Matenagitutyun ev Hanragitaran, vol. 1*, Venice, Surb Ghazar, 2080];

## BIBLIOGRAPHICAL SEARCHES

### ***Introducing Newly Discovered Names of Armenian Books***

**TIGRAN ZARGARYAN**

***Fundamental Scientific Library of NAS RA  
Ph. D. (Technical Sciences)***

**MERY MANUKYAN**

***Fundamental Scientific Library of NAS RA***

**MAYA GRIGORYAN**

***Fundamental Scientific Library of NAS RA  
Ph. D. in Phylogly***

**Keywords:** American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM), Printed Heritage, Missionary Literature, Digitization, Bibliography, Newly Discovered Prints.

The American Board of Commissioners for Foreign Mission's activities, particularly in publishing and missionary education, had a significant cultural and linguistic impact on diverse communities across the Ottoman Empire. The Board's financial and logistical support facilitated the publication of a wide array of mate-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


rials in various languages and scripts - including Armenian, Armenogram Turkish, Greek, Greek in Turkish script - tailored to the linguistic realities of local populations.

Among these, the Armenogram Turkish and Armenian-language materials produced for Armenian communities are essential. They serve as tools of religious instruction and as rich documentary evidence of linguistic hybridity and cultural interaction in the late 19th and early 20th centuries. Recent digitization efforts under the "Endangered Archives" project, funded by the British Library and implemented in collaboration with SALT Research and the American Research Institute in Turkey, have made a significant portion of this legacy accessible to researchers worldwide. The digital collection includes rare newspapers (e.g., *Avedaper* and its Armenogram Turkish version), the journal *Hay Patani*, and an extensive list of Armenian and Armenogram Turkish books. Notably, the database includes 62 previously unknown titles - 18 in Armenogram Turkish and 44 in Armenian - identified and cataloged during the project.

The availability of these materials not only enriches our understanding of American missionary strategies and their cultural ramifications but also contributes valuable resources for the study of multilingual print culture, minority education, and the preservation of endangered textual heritage. This collection represents an important step toward reconstructing the transnational history of missionary print networks and the intellectual life of non-Muslim communities within the late Ottoman Empire.

Հավելված 1

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Հայ գրքի նոր անունների  
1886



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ եւ հրաշք զարդիս /Թարգմանեաց յանգլիականէ Յ. Հ. ՃԷՃԻՂԵԱՆ.- Կ. Պոլիս: Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան), 1886.- 75 էջ:

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ / ԵՒ / ՀՐԱՇՔ  
ՋԱՐԴԻՍ / ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳԼԻԱԿԱՆԷ / Յ. Հ.  
ՃԷՃԻՂԵԱՆ / Կ. ՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ.  
ՊԱՂՏԱՏԼԵԱՆ / (Արամեան) / 1886 /


Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագիրը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ և օսմաներեն գրություն: Տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

**Ծանոթ.**՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229334>

**1887**

**ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ Գ. (ԳԷՈՐԳԵԱՆ)**



Կրթութիւն ծայնական երաժշտութեան ըստ երոպական դրութեան ի պէտս վարժարանաց եւ ամեն կարգի անձանց /Աշխատասիրեաց Մինաս Գ. Մինասեան (Գէորգեան).- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յովսեփայ Գավաթեան, 1877.- 92 էջ, նոտա:

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

*ԿՐԹՈՒԹԻՒՆ / ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ / ԸՍՏ / ԵՐԹՈՒԹԻՒՆ ԴՐՈՒԹԵԱՆ / Ի ՊԷՏՍ / ՎԱՐժԱՐԱՆԱՅ ԵՒ ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՆՁԱՆՅ / ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ / ՄԻՆԱՍ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ / (ԳԷՈՐԳԵԱՆ) / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱԹԵԱՆ / 1887 /*

Երկձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանարարներ, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ, օսմաներեն գրություն, նաև՝ դաշնամուրի պատկեր (նկարիչ՝ J. Manour, վերջերեսին՝ գրքի արժեքը և զարդապատկեր: Տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

**Ծանոթ.**՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1850-1900 թթ.» մատենագիտության մեջ: Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի» (Վենետիկ, 1909) գրքում տպագրության թվականը նշվել է 1880՝ հարցականով:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229354>




1891

**ԱՂՕԹՔ** ընտանեկան եւ առանձնական.- Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան, 1891.- 183 զարդափակ էջ:

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

*ԱՂՕԹՔ / ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ / ... / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ / 1891 /*



Տասնվեցածայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ, բուն շարադրանքում՝ Տերունական աղոթքը՝ նաև օսմաներեն, հայա-

տառ թուրքերեն, տաճկերեն, արաբերեն, հայատառ արաբերեն և անգլերեն տարբերակներով: Տիտղոսաթերթը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

**Ծանոթ.**՝ Նկարագրված օրինակն ունի մուգ շագանակագույն կոշտ, զարդապատ կազմ, որի վրա ոսկեգույն տառերով նշվել է վերնագիրը: Ա. Ղազիկյանը նկարագրել է միայն 1869 թ. տպագրությունն ու դրան կից հավելվածը: Սույն գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229391>


## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1895

**ՀԻՆ** կտակարանի պատմությունը.- Կոստանդնուպոլիս: Տպագրություն Ա. Յակոբ Պոյաճեան, 1895.- ԺԵ, 312 էջ:

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ / ...  
/ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ / Ա.  
ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ / 1895 /



Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը և ենթավերնագրերը՝ հոծ երկաթագիր և նոտրգիր: Մանր զարդանախշեր, վերջազարդեր: Տիտղոսաթերթին՝ օսմաներեն

գրություն: 280-րդ էջից՝ «Բառարան»:

**Ծանոթ.**՝ Նկարագրված օրինակն ունի մուգ շագանակագույն կոշտ, զարդապատ կազմ, որի վրա ոսկեգույն փառերով նշվել է վերնագիրը: «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ սույն նկարագրվել է աստղանիշով՝ ըստ մատենագիտական աղբյուրի:

**Հայ գիրքը 1851-1900 թթ., թիվ 6914, Ղ 1, 1566**

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229291>




## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանազարդեր, մեկ վերջազարդ: Տիտղոսաթերթին՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

**Ծանոթ.**՝ Նկարագրված օրինակն ունի մուգ սև կոշտ, զարդափակ կազմ, որի վրա ոսկեգույն փառերով նշվել է վերնագիրը: Սույն տպագրության մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում: Գրքի մեկ այլ փարբերակ էլ գտնվել է Նյու Յորքի հանրային գրադարանում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229371>

1902



**ԴՊՐՈՑԻ** գիրքը: Ընտիր ընթերցումներ բացատրուած եւ ճոխ պատկերներով զարդարուած: Տարրական ընթացք. Երկրորդ տարի /Տէր եւ հրատարակիչ Զարեհ Թորոսեան.-Կ. Պոլիս: Տպարան «Ասր», 1902.- Ե, 156 էջ, նկ.:

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԴՊՐՈՑԻ ԳԻՐՔԸ / ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐ-ՑՈՒՄՆԵՐ / ԲԱՅԱՏՐՈՒԱԾ / ԵՒ / ՃՈՒՄ ՊԱՏ-ԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ / ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ-ՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ / ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ / ԵՐԿ-ՐՈՐԴ ՏԱՐԻ / Ուսումը չարիք ու վրանգ մըն է պողուն / Եթէ սրտի կրթութիւնը չընկերանար անոր: / Տէր ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ / ԶԱՐԵՀ ԹՈՐՈՍԵԱՆ / ՏՊԱՐԱՆ «ԱՍՐ» / Կ. ՊՈԼԻՍ / 1902 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանարարներ, մանր պատկերներ: Շապիկը՝ նկարազարդ, վրան՝ տպագրության տարեթիվը նշված է 1903, ինչպես նաև՝ «Բ. տարի», վերջերեսին՝ Զ. Թորոսեան գրատան հրատարակությունների ցանկը և գրքի արժեքի մասին տվյալ. «Գին 4 դահեկան»: Տիտղոսաթերթին՝ զարդա-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նախշ, դարձերեսին՝ տպարանի ամբողջական տվյալը, հասցեն և օսմաներեն գրություն:

**Ծանոթ.**՝ Նկարագրված օրինակը մի փոքր վնասված է, ունի խունացած շապիկ: «Հայ գիրքը 1901-1920 թթ.» մատենագիտության մեջ գիրքը նկարագրվել է աստղանիշով 1903 թ. ներքո՝ ըստ մատենագիտական աղբյուրի, իսկ հեղինակ նշվել է Ջարեհ Թորոսյանը: Գրքի մեկ այլ օրինակ էլ գտնվել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքության Օրմանեան մատենադարանում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229380>

1921

### ՊՐԱՌԻՆ Զ. Ռ.


Քաջառողջության ամետարանը

/Գրեց Զ. Ռ. Պրան; Հրատարակություն Ամերիկեան պրոտ ընկերության.- Կ. Պոլիս: Տպագրություն Յ. Մատթեոսեան, 1921.- Բ, 34 էջ.- (Վերաշինության մատենաշար, թիւ 7).

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄՍՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ

7 / NO. 7 / THE GOSPEL OF HEALTH / ՔԱՋԱՌՈՂ-  
ՋՈՒԹԵԱՆ / ԱԻԵՏԱՐԱՆԸ / ԳՐԵՅ / Զ. Ռ.  
ՊՐԱՌԻՆ / Հրատարակություն Ամերիկեան Պորպ



Ընկերության / Կ. ՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄՍՏԹԷՆՈՍԵԱՆ / 1921 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ զարդագիր, գլխազարդեր, մանր զարդանախշեր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ մատենաշարով հրատարակված և հրատարակության պատրաստ գրքերի ցանկ, ինչպես նաև՝ գրքի արժեքը. «Գին 25 դահեկան»:

**Ծանոթ.**՝ Սույն գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229298>

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1922

**ՃԷՍԻԳԱ:** Լոնտոնաբնակ աղջիկ մը:

Իրական պատմություն / Հրատարակություն  
Ամերիկեան պորտ ընկերություն.-

Կոստանդնուպոլիս: Ա.հ., 1922. 43 էջ, նկ:

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՃԷՍԻԳԱ / ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ԱՂՋԻԿ ՄԸ  
/ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒ  
ԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /



Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական  
թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ

երկաթագիր: Բուն շարադրանքում՝ մանր զարդանախշեր և նկարներ:  
Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

**Ծանոթ.**՝ Նկարագրված օրինակից բացակայում է շապիկի  
վերջերեսը: Գիրքը տպագրվել է նաև 1934 թվականին Կ. Պոլսի Սէլամէթ  
տպարանում: Գրքի նկարագրությունը բացակայում է «Հայ գիրքը 1921-1930  
թթ.» մատենագիրությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229388>


**ՊՈՆՏՈՒՆ ԾՈՂԷՖԻՆ=**

**BALDWIN JOSEPHINE**

Հին ժամանակի պատմություններ: Կրտսե-  
րագոյն կարգ. Ա. տարի, մասն Ա. /Գրեց Ճոզէֆին  
Պոլտովին; Հրատարակություն Ամերիկեան Պորտ ըն-  
կերություն.- Կ. Պոլիս: Տպագրություն Յ. Մատթէո-  
սեան, 1922.- 119 էջ.- (Ուսուցչի դասագիրք):

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅՔ, ՄԱՍՆ Ա. /  
STORIES FROM THE OLDEN TIME / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ  
/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ /



## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


ԳՐԵՅ / ՃՈՂՔՖԻՆ ՊՈԼՏՈՒԻՆ / Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան / Կ. ՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՆՍԵԱՆ / 1922 /

Տասնվեցածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Բուն շարադրանքում՝ տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը: Առաջաբանը՝ «Ամերիկացի հրատարակչի»:

**Բովանդ.**՝ Ա. մաս. Սկսնակներու պատմութիւններ; Բ. մաս. Երեք նահապետներու պատմութիւններ; Յաւելուած:

**Ծանոթ.**՝ Նկարագրությունը կատարվել է նաև շապիկից: Կրտսերագոյն կարգի համար նախատեսված կիրակնօրյա դասերի սույն դասագիրքը բաղկացած է Ա, Բ, Գ և Դ տարիներից, որոնք էլ իրենց հերթին ունեն իրենց Ա-Դ մասերը: «Ուսուցչի դասագիրք» և «Աշակերտներու գործի եւ ուսման գիրք» մատենաշարերով հրատարակվել են 1922-1927 թվականներին: Հայ գրքի մատենագիտության մեջ նկարագրվել է միայն Ա. տարի Գ. մասը: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229265>



### ՊՈԼՏՈՒԻՆ ՃՈՂՔՖԻՆ= BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Ա. տարի. մասն Բ. /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1922.- 115 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ /

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Ա. ՏԱՐԻ. ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Տասնվեցամյալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին:

**Քովանդ.**՝ Բ. Երեք նահապետներու պատմություններ; Գ. Յովսեփայ պատմություններ; Յանելուած:

**Ծանոթ.**՝ Տպարանի տպալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229266>



### ՊՈՆՏՈՒՆ ԾՈՂԷՅԻՆ=

#### BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Ա. տարի, մասն Դ. /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէսեան, 1922.- 116, 1 չի. էջ, նկ.- (Ուսուցչի դասագիրք).

#### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN /

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Ա ՏԱՐԻ. ՄԱՍՆ Դ. / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Տասնվեցամյալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրու-


## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

թյուն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը:

**Ծանոթ.**՝ Ե. Պապունյաններ գործ Յիսուս ըրա; 2. Վերակրկնուած պապունյաններ; Յաւելուած:

**Ծանոթ.**՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ: Տե՛ս նաև Ա. Կարի Ա. մասի գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229268>



**ՊՈՒՍՏՈՒՆ ԾՈՂԷՏԻՆ=**

**BALDWIN JOSEPHINE**

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ. տարի. Մասն Ա. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1922.- 163 էջ.- (Ուսուցչի դասագիրք):

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ. ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ

ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա մասերի հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը:

**Ծանոթ.**՝ Ա. Ամէնօրեայ հերոսներու պապունյաններ; Բ. Պապունյաններ հերոսներու հերոսին վրայ; Յաւելուած:

**Ծանոթ.**՝ Հեղինակի անվան տվյալը վերցվել է հրատարակչի առաջաբանից: «Հերոսի պատմություններ» Բ. Կարվա Ա. մասը տպագրվել է

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1922 թ., իսկ Բ, Գ, Դ մասերը՝ 1923-ին: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ նկարագրվել է միայն Բ. տարվա Գ. մասը: Ա, Բ և Դ մասերի մատենագիտական նկարագրությունները բացակայում են:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229257>

1923

**ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ=**

**BALDWIN JOSEPHINE**

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Ա. /Հրատարակություն Ամերիկեան Պրոտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ.Մ. Սէթեան, 1923.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**


ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE

BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ՏԱՍԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ չորս ներդիր թերթ նկար:

**Ծանոթ.**՝ Շապիկին տպագրության թվականը նշվել է 1924: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ «Նամակ հեղինակէն»: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229261>



ՊՈՒՏՈՒՆ ԾՈՋԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ. տարի. Մասն Բ. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 104 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ. ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Ութաձայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն:


**Բովանդ.**՝ Բ. Պատմություններ հերոսներու հերոսին վրայ:

**Ծանոթ.**՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Տե՛ս Բ. տարի մասն Ա. գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229258>

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ՊՈՆՏՈՒՆ ԾՈՋԷՖԻՆ=



### BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 115 էջ.- (Ուսուցչի դասագիրք):

### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ /


ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Ութաձայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ անգլերեն նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն:

**Բովանդ.**՝ Գ. Պապմութիւններ Յիսուսի հերոս հերոսողներու վրայ; Դ. Հին կրակարանի հերոսներու պապմութիւններ; Յաւելուած:

**Ծանոթ.**՝ Տպարանի փոյլը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Տե՛ս նաև Բ. փարի մասն Ա. գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229260>



**ՊՈՒՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ =  
BALDWIN JOSEPHINE**

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (իբր ինը տարեկան տղայոց): Ա. տարի-մասն Բ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 40 երկյայուն էջ, նկ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**


ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԵՏՏՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար:

**Ծանոթ.**՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ ներառվել է միայն Ա տարվա Ա մասը:

«Մատենագիտություն յիսնամեայ շրջանի (1923-1972) սրանպուլահայ գրքի», Շողակաթ, Իսթանպուլ, 1977, թ. 9 գրառում

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229270>



**ՊՈՒՍՏՈՒՆ ԾՈՂԵՖԻՆ=  
BALDWIN JOSEPHINE**

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր ինը տարեկան տղայոց): Ա. տարի-մասն Գ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 38 էջ, նկ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /


Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հասվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար: Բնագրում՝ նաև երկայուն էջեր:

**Ծանոթ.**՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:*

«Մատենագիտություն յինամեայ շրջանի (1923-1972) սրանպուլահայ գրքի», Շողակաթ, Իսթանպուլ, 1977, թ. 10 գրառում

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229271>

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ:  
Կրտսերագոյն կարգ (Իբր ինը տարեկան տղայոց):  
Ա. տարի-մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան  
Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպա-  
գրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 40 էջ, նկ.-  
(Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ  
ԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ  
ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ  
ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՑ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵ-  
ՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Մամուկանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր:  
Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին  
և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար: Բնա-  
գրում՝ նաև երկայուն էջեր:

**Ծանոթ.**՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի  
մաքենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք  
մաքենագիտական ցանկերում:*

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229272>


1924

ՊՈՆՏՈՒԻՆ ՃՈՂԷՖԻՆ=  
BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ:  
Կրտսերագոյն կարգ. Գ տարի-Մասն Ա /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, 1924.- 152 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

**ՏԻՏՆՍԱԹԵՐԹ**

ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / KINGDOM  
STORIES / JOSEPHINE BALDWIN / ԹԱԳԱՒՈՐՈՒ  
ԹԵԱՆ / ՊԱՍՄՈՒԹԻՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ



ԿԱՐԳ / Գ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՍԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /


Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր, դարձերեսին՝ նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լոյս տեսած Ա, Բ և Գ տարիների գրքերի ծանոթագրությունները:

**Բովանդ.**՝ Ա. Պապմութիւններ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններուն վրայ; Յաւելուած:

**Ծանոթ.**՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գ տարվա Բ, Գ, Դ մասերը տպագրվել են 1925 թ.: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229273>

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



### ՊՈՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ= BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Բ. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


### **ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ  
ԳԻՐԲ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN /  
ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԿԱՅՈՒՆ ԿԱՐԳ / (Իբր փասը  
փարեկան փղայոց) / Բ. ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ. / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵ-  
ՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ հինգ ներդիր թերթ նկար, քարտեզ:

**Ծանոթ.**՝ Տպարանի փվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Գրքի Բ փարի մասն Ա-ն փպագրվել է 1923 թվականին: Տե՛ս նաև Բ փարի Ա մասի ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229262>



**ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ =  
BALDWIN JOSEPHINE**

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Գ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ


ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր փասը փարեկան տղայոց) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ հեղինակի նամակը: Գրքում՝ չորս ներդիր թերթ նկար, քարտեզ:

**Ծանոթ.**՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229263>

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՂԷՑԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ

ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN /

ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր փասը փարեկան տղայոց) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութաձայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ վեց ներդիր թերթ նկար, քարտեզ:

**Տանոթ.**՝ Տպարանի փոխառ վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229264>

**Շարունակելի...**

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊ» ԱՄՍԱԳՐՈՒՄ (1840-ական թվականներ)\*

ՀՏԴ: 37.012+070

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-141

### ՀՈՎԱԿԻՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: [0009-0009-5048-2232](https://orcid.org/0009-0009-5048-2232)

Դաստիարակության խնդիրը հասարակությանը հուզող կարևորագույն խնդիրներից է եղել միշտ, քանի որ այն ապագա կերպերու գործիքներից մեկն է: Սույն հոդվածով անդրադառնալու ենք դաստիարակության խնդիրներին պատմական կտրվածքով՝ դիտարկելով այն «Բազմավեպ» հանդեսում տպագրված նյութերի շրջանակում: Քանի որ «Բազմավեպ»-ն ամենակարևորագույն ամսագրերից է հայ իրականության մեջ, մեզ հուզող թեման սահմանափակելու ենք 1840-ական թվականների տպագիր նյութերով:

The issue of education has always been one of the most important concerns of society, as it serves as a vital tool for building the future. In this article, we will explore the topic of education from a historical perspective, focusing on its representation in materials published in the magazine Bazmavep. Since Bazmavep is one of the most prominent magazines in Armenian culture, we will limit our analysis to printed materials from the 1840s.

**Բանալի բառեր**<sup>1</sup> Դաստիարակություն, Բազմավեպ, ամսագիր, մանկավարժություն, մարտահրավերներ, խնդիրներ, հասարակություն:

\* Հոդվածը ներկայացվել է 21.02.2025, գրախոսվել է 13.04.2025, ընդունվել է տպագրության 23.06.2025:

The article was submitted on 21.10.2024, reviewed on 13.04.2025 accepted for publication on 23.06.2025.

**Ինչպես հղել՝** Հովակիմյան, Հ. (2025), Դաստիարակության խնդիրը «Բազմավէպ» ամսագրում (1840-ական թվականներ), *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 141-153.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-125](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-125)

**How to cite (APA style):** Hovakimyan, H. (2025), "The Issue of Education in *Bazmavep Journal* (1840s)", *Herald of the Armenian Library Association*, 1(5), 141-153. [https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-141](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-141)

### Ներածություն

«Բազմավէպ»-ը հայ մամուլի պատմության ամենաերկարակյաց պարբերականներից է: Այն հիմնադրվել է 1843 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Հ. Գաբրիել Այվազովսկու ջանքերով: 1843 թ. առաջին իսկ համարում տեղադրվում է ծանուցում, ուր ասվում է, որ թեև հունվարի փոխարեն մայիսից է հրատարակվում պարբերականը, բայց նախատեսված բոլոր քսանչորս համարները մինչ տարեվերջ հրատարակվելու են: Սկզբնապես նախատեսվել էր ամսագիրը հրատարակել երեք տարի, սակայն հաշվի առնելով հետազայում ընթերցողների՝ պարբերականի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը, ֆինանսական միջոցների առկայությունը, ինչպես նաև միաբանության անդամների և հետագա տարիների խմբագիրների մտավոր ներուժը, ամսագրի տպագրությունը շարունակվում է առ այսօր:

«Բազմավէպ»-ն, իր վերտառությանը համահունչ («Օրագիր բնական, տնտեսական եւ բանասիրական գիտելեաց»), ուսուցանում, տեղեկացնում, կրթում ու լուսավորում էր հանրությանը: Տարբեր ժամանակներում հայերեն բազմաթիվ պարբերականներում երևում էին այս ամսագրից արված քաղվածքներ: Շատ դեպքերում վերատպվում էին «Բազմավէպ»-ից վերցրած ամբողջական հոդվածներ ու հոդվածաշարեր: Ծավալվում էին քննարկումներ, մեթոդական նյութերը, որպես ուղեցույցներ, օգտագործվում էին մի շարք կրթական հաստատություններում: Այս առումով անուրանալի բարձր և հեղինակավոր

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

դեր ունեւր պարբերականը: Բոլոր խմբագիրներն անխտիր ժամանակին համահունչ լուսավոր և ուսուցանող գաղափարներ էին տարածում և շարունակում են այս առաքելությունն առ այսօր:

Սկզբնական շրջանում՝ 1843-1848 թթ. պարբերականը բաղկացած էր երեք բաժիններից, ինչի մասին խմբագիրը հայտնում էր. «Ուստի աս մեր օրագրին մեջ, որ առ այժմ տասնըհինգ օրը մէյմը կըտպուի, ընդհանրապէս Բնական՝ Տնտեսական եւ Բանասիրական գիտելեաց վրայ կըխօսինք» (Յառաջաբան, Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 1, էջ 4)<sup>1</sup>: Այս երեք բաժիններն իրենց հերթին ունեին ենթաբաժիններ, օրինակ՝ «Բնական գիտություն»-ը բաղկացած էր «Աստղաբաշխութիւն», «Բնաբանութիւն», «Բնալուծութիւն», «Երկրաբանութիւն» և «Բնական պատմութիւն» ենթաբաժիններից: «Տնտեսական գիտութիւն»-ը՝ «Դաստիարակութիւն», «Առողջութիւն», «Քաղաքական տնտեսութիւն», «Երկրագիտութիւն», «Արուեստ» ենթաբաժիններից, «Բանասիրական տեղեկութիւն»-ը՝ «Պատմութիւն», «Աշխարհագրութիւն», «Ազգային տեղեկութիւն», «Բարոյական խրատ, պատմութիւն», «Բանաստեղծութիւն: Առակ» ենթաբաժիններից:

Դաստիարակության խնդրին առնչվող հոդվածներն առաջին տարիներին ընդգրկվում էին տնտեսական բաժնում: 1846 թ., երբ վերանայվում է պարբերականի կառուցվածքը, երեք բաժնի փոխարեն նյութերը տեղադրվում են չորս բաժնով, այն է՝ «Բարոյական», «Բանասիրական տեղեկութիւն», «Տնտեսական գիտութիւն», «Բնական գիտութիւն»: «Դաստիարակութիւն» ենթաբաժինը այս բաժանմամբ ընդգրկվում է «Բարոյական» բաժնում, որն ավելի տրամաբանական է:

---

<sup>1</sup> Բոլոր մեջբերումները «Բազմավէպ» հանդեսից են, այդ պատճառով նշում ենք տեքստում, ոչ թե օգտագործված գրականության ցանկում:

## **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

### ***Դաստիարականությանը վերաբերող հոդածները «Բազմավէպ» ամսագրում***

Դաստիարակության թեման «Բազմավէպ»-ի հիմնադրման առաջին իսկ տարում՝ 1843 թ., դառնում է առաջնահերթ քննարկման առարկա: Ամսագրի ամենավաղ հրապարակումներից մեկը վերնագրված է «Տղաքը դպրատուն խրկելուն օգուտը» (Բազմավէպ, Վենետիկ, 1843, թ. 2, էջ 24-26), որի հեղինակն է Հայր Եփրեմ Գամասարյանը: Նա դաստիարակությունը բնորոշում է որպես ազգի երջանկության հիմնասյուն՝ շեշտելով. «Առանց ասոր ո՛չ բարեպաշտութիւն կունենայ ազգը, ո՛չ մարդավարութիւն, և ո՛չ գիտութիւն»:

Հեղինակը մատնանշում է երեխաների ուսուցման և դաստիարակության երեք հիմնական ուղիներ՝ ընտանիքում ծնողների միջոցով ուսուցում, տանը մասնավոր ուսուցիչ հրավիրելը և դպրոց ուղարկելը՝ եզրակացնելով, որ արդյունավետը դպրոցն է:

Թեման շարունակվում է հետագա համարներում: «Թէ որչափ հարկատու է կրթութիւնը մեր ազգին տղոցը» վերնագրով հոդվածում (Բազմավէպ, Վենետիկ, 1843, թ. 4, էջ 57-59) կրկին բարձրաձայնվում է կրթության խնդիրը՝ կրթության բացակայությունը ներկայացվելով որպես ազգային դժբախտությունների արմատական պատճառ: Այս տեսակետը շարունակվում է Հայր Պետրոս վրդ. Մինասյանի հոդվածում «Թէ տղոց առաջին դաստիարակը ով պիտի ըլլայ» հոդվածում (Բազմավէպ, Վենետիկ, 1843, թ. 5, էջ 70), որտեղ նա բացահայտ քննադատում է ծնողների վարքագիծը: Ըստ Մինասյանի՝ ընտանիքի ներսում երեխաները վաղ տարիքից ձեռք են բերում վատ սովորություններ, որոնք հետագայում դառնում են խնդիր մանկավարժների համար:

Թեման առավել խորությամբ ներկայացվում է «Ճշմարիտ որդեսիրութիւնը ինչպէս պիտի երևնայ դաստիարակութեան մէջ» վեր-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նագրով հոդվածում (Բազմավեպ, Վենետիկ, 1843, թ. 8, էջ 117–119), որտեղ դաստիարակի գործը համեմատվում է պարտիզայանի աշխատանքի հետ: Հեղինակը պատկերավոր նկարագրում է պարտիզայանի՝ ծաղիկների խնամքի գործը՝ ընդգծելով, ավելի մեծ ջանք ու հոգածություն է պահանջվում մարդկային հոգու ձևավորման գործում: Միաժամանակ ընդգծվում է օրինակելի վարքագծի դերը. միայն խոսքով դաստիարակելը բավարար չէ. երեխային անհրաժեշտ է ուղղորդել նաև օրինակով՝ հատկապես ծնողների և դաստիարակների վարքով. «խօսքով խրատելէն առաջ գործքով պէտք է խրատել... երբոր տեսնէ որ իրենց տուած խրատին իրենք չեն հետևիր, կըսկսի տարակուսիլ ու մոլորիլ» (նույն տեղը):

Նշենք, որ ամսագրում այս թեմայով տեղ գտած բազմաթիվ հոդվածներ անստորագիր են: Հետագայում լույս տեսած մատենագիտական ցանկերն օգնում են վերականգնել այս նյութերի հեղինակների ինքնությունը, ինչն էլ ավելի մեծ արժեք է հաղորդում տվյալ հոդվածին, քանի որ նրանք բոլորը տվյալ ժամանակաշրջանի մտավորականներն են:

Նրանց թվում նշանակալի տեղ է գրավում Հայր Համազասպ Թերճիմանյանը: Նրա բազմաթիվ հոդվածները կրում են թե՛ տեսական խորություն, թե՛ գործնական հղումներ՝ ուղղված ինչպես ծնողներին, այնպես էլ ուսուցիչներին: Թերճիմանյանը հանդես է գալիս որպես ամբողջական մանկավարժական համակարգի ջատագով՝ կրթությունն ընկալելով որպես շարունակական ու փուլային գործընթաց, որը պետք է սկսվի երեխայի կյանքի սկզբից: Նրա կողմից հրապարակված հոդվածներից են «Թէ որքան կանուխ պէտք է սկսիլ տղոց կրթութիւնը», «Թէ ինչպէս պէտք է տղոց հեգել սորվեցընել», «Որն է առաջին հոգը որ ծնողք պիտի ունենան նոր ծնած տղուն վրայ», «Բարոյական դաստիարակութեան մէջ եղած սխալմունքնե-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

րուն վրայ, և թե՛ ինչ կերպով անոնց առաջը առնելու է», «Այլ և այլ բնատրոպիան ունեցող տղոց հետ պետք չէ նոյն ոճով վարուիլ», «Ի՞նչպէս պէտք է կրթել տղաքը աստուածապաշտութեան մէջ» և այլն: Այս նյութերն ընդգրկում են դաստիարակության ամբողջական ոլորտը՝ սկսած ֆիզիկական խնամքից մինչև բարոյահոգեբանական զարգացման մանրակրկիտ ցուցումներ:

«Թե՛ որքան կանուխ պէտք է սկսիլ տղոց կրթութիւնը» (Բագմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 11, էջ 166) հոդվածում հեղինակը շեշտում է, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսվի կյանքի առաջին օրերից՝ նախքան ի հայտ կգան ականհայտ «սովորությունները»: Նրա խոսքով՝ նորածինը մոր դեմքին ժպտալով՝ ցույց է տալիս, որ զգայությունները սկսում են ձևավորվել, ինչը հենց այն սահմանագիծն է, երբ ծնողը կարող է իր վարքով կառավարել երեխայի զգացմունքները: Նա նկարագրում է, թե ինչպես պետք է օգտագործել նման պահերը՝ կամ ժպիտով «վարձատրել» ցանկալի վարքը, կամ խիստ հայացքով՝ «պատժել» անցանկալին՝ դրանով իսկ երեխայի մեջ ձևավորելով բարոյական ընկալման հիմքերը: Հայր Թերոմիմանյանը խիստ քննադատության է ենթարկում այն պատկերացումը, թե մինչև յոթ տարեկան երեխան պետք է մնա կրթությունից զերծ: Նա դիտարկում է ծնողների հակվածությունը՝ կա՛մ ամբողջությամբ բավարարել երեխայի ցանկությունները (հարուստ ընտանիքներում), կա՛մ անտեսել նրան՝ թողնելով ինքնաբուխ խաղի և պատահական միջավայրի ազդեցության ներքո (աղքատ ընտանիքներում): Երկու դեպքում էլ, ըստ հեղինակի, բացակայում է ակտիվ, նպատակային դաստիարակությունը, ինչի հետևանքով երեխան մնում է իր «կիրքերի» իշխանության տակ, որոնք մեծանալով՝ վերածվում են վարքային շեղումների: Հեղինակն ընդգծում է. «...չեն մտածեր որ տղան ալ իրեն հա-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

մար կիրքեր ունի՝ իր պզտիկութեանը համեմատ, որ հետը կըմեծնան օրէ օր» (Նույն տեղը):

«Որն է առաջին հոգը որ ծնողք պիտի ունենան նոր ծնած տղուն վրա» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 12, էջ 181) հողվածում Թերճիմանյանը կարևորում է նորածնի առողջության ապահովման պայմանները՝ դրանք դիտելով որպէս հոգեբանական հավասարակշռության և բարոյական դաստիարակության հիմք: Ըստ նրա՝ երեխայի ֆիզիկական խնամքն առաջին աստիճանն է, որի անտեսումը հանգեցնում է ինչպէս մարմնական, այնպէս էլ մտավոր թուլության: Նա մանրամասն քննարկում է երեխայի օրորոցային խնամքի տարրերը՝ նշելով, որ չափազանց սեղմ կապանքները կարող են խոչընդոտել արյան բնականոն շրջանառությունը, իսկ օրորոցի սաստիկ շարժումը վնասակար է գլխուղեղի համար: Հեղինակի պատկերացմամբ՝ առողջ մարմինը կայուն հոգու զարգացման նախապայմանն է:

Այս շարքի հաջորդ՝ «Որն է երկրորդ խնամքը...» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 13, էջ 198) հողվածում քննարկվում է երեխայի մտավոր ու բարոյական զգայությունների ձևավորման փուլը: Հեղինակը նկատում է, որ դեռևս խոսել չկարողացող երեխան սկսում է հաղորդակցվել շարժումների, դեմքի արտահայտությունների միջոցով՝ պահանջելով ուշադրություն: Այս փուլում ծնողները պետք է ուշադիր լինեն երեխայի սովորությունների նկատմամբ, քանի որ դրական և բացասական վարքագծերը արմատավորվում են հենց այդ շրջանում: Հողվածում ընդգծվում է ծնողական օրինակի դերը երեխայի բարոյական կողմնորոշման գործում, իսկ դաստիարակության արդյունքը, ըստ Թերճիմանյանի, պիտի լինի ծնողի առաքինության փոխանցումը որպէս ժառանգություն:

«Երբոր տղայ մը լեզու կելլե, ինչ խնամք ընելու է վրան» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1843, թ. 14, էջ 213) հողվածում շեշտը դրվում

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Է խոսքի զարգացման շրջանում ծնողների պատասխանատվության վրա: Թերճիմանյանը հորդորում է բացառել երեխայի ներկայությամբ անհամեստ լեզու, հայիոյանք, բամբասանք և բարոյական կերպարները խաթարող խոսակցությունները: Ըստ նրա՝ երեխան ընդօրինակում է մեծերին ոչ միայն բառացիորեն, այլև բարոյական վարքագծի մակարդակով: Այսպիսով, ընտանիքում հաստատված խոսքի և վարվեցողության մաքրությունն է մանկության բարոյական հիմքի գրավականը:

Դաստիարակության հաջորդ փուլը կապված է կրթության կազմակերպման հետ՝ ըստ երեխայի անհատական առանձնահատկությունների: «Տղոց կրթութեանը համար հարկաւոր գիտելիքներ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 2, էջ 22) հոդվածում շեշտվում է, որ կրթության նպատակը ոչ թե հիշողության, երևակայության կամ դատողության տրամադրումն է, այլ արդեն առկա կարողությունների զարգացումն ու համակարգումը: Կարևորվում է անհատական և տարբերակված մոտեցումը՝ հաշվի առնելով ոչ միայն երեխայի, այլև ազգի, վայրի, բնավորության առանձնահատկությունները: Մատնանշվում է ուսուցման բովանդակության ու մեթոդի համապատասխանեցումը երեխայի մտավոր զարգացման մակարդակին: Օրինակ, բնական գիտությունների ուսուցումը՝ ուղեկցված պատկերներով ու առարկայական ցուցադրությամբ, դիտվում է արդյունավետ, մինչդեռ տրամաբանության նման վերացական ուսումնական առարկաները՝ անարդյունավետ փոքր տարիքում:

Հաջորդ հոդվածում՝ «Որչափ հարկաւոր է տղոց սորվելիքը իրենց համար պարզ ու դիրիմաց ու զուարճալի ըլլայ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1844, թ. 7, էջ 104), ներկայացվում է մանկավարժական մեթոդաբանության կարևոր սկզբունքը՝ ուսուցումը դարձնել հաճելի,

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

խաղային տարրերով հագեցած, որպեսզի սովորելը չդիտվի որպես տանջանք, այլ դառնա սիրելի ու խթանող գործընթաց:

«Բազմավեպի» քաղաքականությունն էր ընթերցողին ներկայացնել ժամանակի ամենաառաջադեմ և օգտակար գաղափարները՝ նպաստելով հասարակության բարեփոխմանն ու առաջընթացին: Հողվածագիրները քննադատում էին հնացած կրթական մեթոդներն ու հասարակության արատավոր երևույթները՝ հանդես գալով բարեկամական, առաջարկող և ուղղիչ դիրքերից:

«Թէ ինչպէս պէտք է տղոց գիր ճանչնալը սորվեցընել» (Բազմավեպ, Վէնէտիկ, 1844, թ. 11, էջ 165) և «Թէ ինչպէս պէտք է տղոց հեգել սորվեցընել» (Բազմավեպ, Վէնէտիկ, 1844, թ. 14, էջ 213) հոդվածներում քննադատվում են արևելյան կրթական հաստատություններում կիրառվող մեթոդները և առաջարկվում են նորարար, արդյունավետ ուսուցման եղանակներ:

Կարևոր բաղադրիչ է դիտարկվում նաև ֆիզիկական դաստիարակությունը: «Մանր տղոց մարմնոյն վրայ ընելու խնամքները» (Բազմավեպ, Վէնէտիկ, 1844, թ. 16, էջ 245) հոդվածում Հայր Բառնաբաս Եսայանը շեշտում է երեխայի մարմնի զարգացման, սննդի, հագուկապի և շարժուն կյանքի անհրաժեշտությունը՝ հիմնվելով ժամանակի բժշկական և մանկավարժական փորձի վրա: Հեղինակն ընդգծում է բացօթյա պայմաններում ֆիզիկական դիմադրողականության ձևավորման անհրաժեշտությունը՝ որպես ապագա կյանքի դժվարություններին դիմակայելու նախադրյալ:

Դաստիարակության գործընթացում առանցքային է նաև մանկավարժի անձնավորությունը: Թերճիմանյանն ընդգծում է, որ ծնողները նախընտրում են բարոյապես կայուն, խղճմտանք ունեցող, պարտաճանաչ և օրինակելի մանկավարժների (Բազմավեպ, Վէնէտիկ, 1844, թ. 22, էջ 340): Լավ մանկավարժը պետք է գործի ոչ թե

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

անձնական շահից, այլ՝ կրթված, բարեպաշտ և հոգեպես առողջ սերունդ ձևավորելու նպատակով:

«Բազմավէպի» խմբագրակազմի հիմնական տեսլականը բարոյապես առողջ, կրթված և կիրթ սերնդի ձևավորումն էր, ինչը պայմանավորեց նաև պարբերականի մանկավարժական ուղղվածությունը: «Բարոյական դաստիարակութեան մէջ եղած սխալմունքներուն վրայ, և թէ ինչ կերպով անոնց առաջը առնելու է» հողվածաշարում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 3, էջ 39; թ. 4, էջ 56) հեղինակը քննադատում է դաստիարակության տարածված սխալները՝ ընդգծելով դրանց կործանարար ազդեցությունը: Սխալ մոտեցումների թվում առանձնացվում են չար օրինակն, անխոհեմ դրսևորումները, անհամբերությունը, կողմնապահությունը, կոպտությունն ու ձևական խստությունը: Հեղինակն առաջարկում է կոնկրետ այլընտրանքային լուծումներ՝ խրախուսման, պարգևների և պատժի ձևերով: Փոխանակ երեխաներին խրախուսելու նյութական ու գայթակղիչ միջոցներով (հագուստ, քաղցրավենիք), առաջարկվում է ճաշակով ընտրված գրքեր տալ, որոնք ունեն կրթական և բարոյական ազդեցություն: Պատժի հարցում ևս հողվածագիրը հանդես է գալիս ժամանակին նորարարական դիրքորոշմամբ՝ մերժելով մարմնական պատիժները՝ իբրև անհատականության վրա վնասակար ազդեցություն ունեցող գործիք, և ընդգծում երեխայի ինքնագիտակցված վերափոխման անհրաժեշտությունը:

Մեկ այլ հողվածում՝ «Այլ և այլ բնավորութիւն ունեցող տղոց հետ պէտք չէ նոյն ոճով վարուիլ» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 6, էջ 103), ներկայացվում է անհատական մոտեցման անհրաժեշտությունը դաստիարակության գործընթացում: Ըստ հեղինակի՝ յուրաքանչյուր երեխա ունի յուրահատուկ բնավորություն, ուստի դաստիարակի գործը ոչ միայն հարմարեցնելն է մեթոդները տվյալ բնավորու-

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

թյանը, այլև նպաստել նրա դրական ձևավորմանը: Հեղինակն առաջարկում է խառն ոճ՝ միավորելով մեղմությունն ու պահանջկոտությունը:

Դաստիարակության գործընթացում առանձնացվում է երեք հիմնական միջավայր՝ ընտանիք, դպրոց և հասարակություն, որոնցից յուրաքանչյուրը համարվում է կարևոր առանցք՝ առանց առաջնահերթության հստակ դասակարգման: Հոդվածագիրները, սակայն, շեշտադրում են հատկապես ընտանիքը:

Հայր Ղևոնդ Մարգարյանի «Թէ ով է տղոց ամենէն սիրելի, զօրաւոր ու հարկաւոր վարպետը» հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 11, էջ 165) ներկայացվում է այն միտքը, որ երեխայի սկզբնական դաստիարակության համար բացառիկ դեր ունեն ծնողները, մանավանդ մայրը: Երեխայի բնավորության հիմքը դրվում է վաղ տարիքում, և եթե այդ փուլը դաստիարակչական սխալներով է անցնում, ապա հետագայում կրթական միջամտությունները հաճախ լինում են անարդյունավետ: Ըստ հոդվածագրի, ծնողի՝ հատկապես մոր պարտականությունն է բարոյական սկզբունքների և հասարակական պատասխանատվության գաղափարների արմատավորումը:

Թերճիմանյանի «Որ առաքինութիւնները պիտի տպավորէ դաստիարակը տղոց միտքը...» (Բազմավէպ, Վէնէտիկ, 1845, թ. 14, էջ 213) հոդվածում դաստիարակությունը դիտվում է որպես արժեքային կրթություն: Նշվում են կարևորագույն առաքինությունները՝ եղբայրասիրություն, արդարամտություն, ճշմարտասիրություն, ներողամտություն, համեստություն, ժուժկալություն և այլն: Յուրաքանչյուր առաքինություն ներկայացվում է կիրառական դաստիարակչական ցուցումով՝ շեշտադրելով դաստիարակի օրինակի ուժը և մանկավարժական միջամտության ձևերը:

## **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

Պարբերականը կարևորում է նաև հասարակության դերը դաստիարակչական գործընթացում: «Թէ ինչպէս պէտք է կարդալ դաստիարակութեան վրայ գրուած բաները» հոդվածում (Բազմավէպ, Վէնէտիկ, 1846, թ. 7, էջ 97), արտահայտվում է մտահոգություն՝ կապված հանրության անտարբերության հետ: Հեղինակները կոչ են անում ընթերցել, ընկալել և գործնականում կիրառել դաստիարակության վերաբերյալ հրապարակված գաղափարները՝ ընդգծելով դաստիարակության և ազգային առաջընթացի անքակտելի կապը:

Ամսագրի էջերում թեման շարունակաբար նոր շերտեր է բացահայտում նաև հետագա տարիներին: Հեղինակներն անձանձիր ուսուցանում, բացատրում, մեկնաբանում են տարբեր երևույթներ, ներկայացնում նրանց առանձնահատկությունները, խնդրի հաղթահարման ճանապարհներ մատնանշում:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

«Բազմավէպ» հանդեսը, լինելով հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականներից մեկը, ունեցել է բացառիկ դերը հայ հասարակության կրթական, հոգևոր և մշակութային զարգացման գործընթացում: Մխիթարյան հայրերը՝ հանդեսի հոդվածագիրները, ժամանակի առաջադեմ գաղափարներով ոգեշնչված, իրենց անշահախնդիր գործունեությամբ ձգտում էին դաստիարակել լուսավորյալ, բարոյական արժեքներով օժտված քաղաքացի: Նրանք հատկապես կարևորում էին մատաղ սերնդի դաստիարակությունը՝ դա դիտելով որպես ազգային առաջընթացի հիմնաքար: Գործելով զարթոնքի շրջանի ներսում՝ հանդեսի հեղինակները միաժամանակ և՛ մասնակիցն էին այդ վերելքի, և՛ գաղափարական առաջնորդներ: Նրանց աշխատանքը խարսխված էր լուսավորական արժեքների վրա, սակայն զերծ էր արմատախիլ անելու ավանդույթը՝ ապահովելով ազգային ինքնության պահպանումը դաստիարակության գործընթացում:

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ցում: Այսօր, երբ անդրադառնում ենք «Բազմավէպի» էջերում արտահայտված գաղափարներին, վստահորեն կարող ենք պնդել, որ դրանք ոչ միայն ժամանակի արտացոլանք են, այլև վերաբժևորման և կիրառման արժանի ուղղորդումներ՝ դաստիարակության արդի օրակարգի համար:

### THE ISSUE OF EDUCATION IN BAZMAVEP JOURNAL

HOVAKIM HOVAKIMYAN

*Khniko Aper National Children's Library*

**Keywords:** Education, Bazmavep, Periodical, Pedagogy, Challenges, Issues, Society.

The Bazmavep journal, as one of the longest-running periodicals in the history of Armenian press, has played an exceptional role in the educational, spiritual, and cultural development of Armenian society. The Mekhitarist fathers-authors of the journal's articles - inspired by the progressive ideas of their time, sought through their selfless efforts to educate enlightened citizens endowed with moral values. They placed particular emphasis on the upbringing of the younger generation, viewing it as the cornerstone of national progress. Operating within the era of national revival, the journal's authors were not only active participants in this renaissance but also its ideological leaders. Their work was grounded in the values of the Enlightenment, yet it did not seek to uproot tradition, thus ensuring the preservation of national identity within the educational process. Today, as we revisit the ideas expressed in the pages of *Bazmavep*, we can confidently assert that they are not merely reflections of their time, but also valuable guidelines worthy of reassessment and application within the contemporary discourse on education.

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ARMENIAN–LATVIAN LIBRARY DIALOGUE  
*Inclusion, Innovation and International Exchange  
through Eu4dialogue\****

ՀՏԴ: 02](479.25+474.3)

**NAIRA ATSHEMYAN**  
*Khanko Aper National Children's Library*

**ORCID: [0009-0007-2034-8062](https://orcid.org/0009-0007-2034-8062)**

In early 2025, Armenia became the regional hub for meaningful professional exchange in the library field, hosting a series of seminars and webinars within the framework of the EU4Dialogue programme.

Organized jointly by the Armenian Library Association and the National Library of Latvia, these events showcased the power of libraries to act as open platforms that foster community engagement and cross-cultural understanding.

***A Strong Foundation for Collaboration***

Since its launch in 2021, the EU-funded initiative “EU4Dialogue: Improving exchanges across the divide through education and culture” has promoted intercultural dialogue and professional development across the South Caucasus and Moldova. Armenia has been a highly active participant, with its librarians engaging in diverse training and mobility programmes in Latvia.

A key highlight of this cooperation was the participation of 10 Armenian library and cultural professionals in the international summer

---

\* Հոդվածը ներկայացվել է 13.05.2025, ընդունվել է տպագրության 17.06.2025:

The article was submitted on 13.05.2025, accepted for publication on 17.06.2025.

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

school “Library as a Cultural Platform for the Community”, held in August 2024 across five Latvian cities. The programme featured:

- Field visits to libraries, museums, and cultural institutions
- Thematic workshops on community engagement,
- Youth reading programmes
- Local history and heritage preservation
- Innovation in public libraries and participatory programming

Armenian participants represented a wide range of institutions, including:



- National Library of Armenia
- Khnko Aper National Children's Library
- Fundamental Scientific Library of NAS RA

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- Av. Isahakyan Central Library
- Matenadaran – Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
- Vache and Tamar Manoukian Matenadaran (Etchmiadzin)
- Armenian Genocide Museum-Institute
- Shirak Regional Library

Beyond participation, Armenian delegates actively contributed to the learning process through presentations and case study sessions, sharing innovative practices and challenges from their institutions. These contributions not only enriched the summer school experience but also highlighted Armenia’s evolving role as a proactive voice in regional library development.

The experience deepened institutional connections and reinforced the value of **mutual learning and cultural exchange** in driving sustainable progress in the library field across borders.

### ***Armenian–Latvian Library Conference (February 19–20, 2025 | Yerevan)***

The flagship event of the year, the “EU4Dialogue: Armenian–Latvian Dialogue for Library Development” conference, brought together library professionals, educators, and cultural actors for two days of intensive and inspiring exchange. Held at the Khnko Aper National Children’s Library and the Armenian Genocide Museum-Institute, the event served as a meaningful milestone in strengthening cooperation between Armenian and Latvian library communities.

In her opening address, Ruzan Tonoyan, President of the Armenian Library Association, emphasized the rapidly evolving role of libraries in addressing societal challenges—from promoting inclusive services to leading the way in digital transformation. She underlined the vi-

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

tal importance of sustained international partnerships in empowering librarians to meet these challenges with professionalism and innovation.

The conference offered a diverse and dynamic programme of presentations delivered by both Armenian and Latvian experts. Key themes included:

- Inclusive library services for people with disabilities
- Accessible literature and assistive technologies
- Strategies for promoting reading among children, youth, and adults
- Innovative public library programming and community engagement initiatives

The seminar became a true and direct platform for experience exchange, encouraging open dialogue, mutual learning, and collaborative reflection on common goals.

Beyond the formal programme, the Latvian delegation was invited to participate in curated cultural visits to some of Armenia’s most esteemed institutions, including the National Library of Armenia, the Matenadaran – Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, the Vache and Tamar Manoukian Matenadaran in Etchmiadzin, and local municipal libraries. These visits deepened the delegation’s understanding of Armenia’s rich literary and cultural heritage, while also opening new avenues for institutional partnership.

The conference concluded with a certificate ceremony, symbolizing not just participation but a renewed commitment to cross-border cooperation in the library field. The atmosphere throughout the event reflected a shared belief: that libraries, through collaboration and innovation, can become powerful engines of inclusion, learning, and cultural dialogue in our societies.

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### ***Library for All – Latvia’s Inclusive Programmes (15 April 2025 | Webinar within National Library Week in Armenia)***

As part of National Library Week celebrations in Armenia, the Armenian Library Association organized an inspiring international webinar titled “Library for All: Inclusive Programmes of the National Library of Latvia.” This online event served as a powerful demonstration of how libraries can become truly welcoming, equitable, and empowering spaces for all members of society.

The webinar brought together over 60 library professionals and cultural workers from across Armenia, including participants from Ye-



revan, Artashat, and Etchmiadzin, and was hosted at the Khnko Aper National Children’s Library. It provided a unique opportunity for Armenian librarians to explore and learn from Latvia’s well-established inclusive practices.

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

The session was led by two distinguished specialists from the National Library of Latvia, Kristine Kazakāne and Liene Mukanene, who are central figures in Latvia’s inclusion-focused library programming. They introduced participants to the country’s flagship initiative, “Library for All,” and shared the values that underpin it: accessibility, equity, and active participation.

Through detailed presentations and real-life examples, the speakers showcased:

- The strategic vision behind inclusive library development in Latvia
  - Tailored services for people with disabilities, seniors, and other underrepresented groups
  - The use of assistive technologies, barrier-free physical design, and inclusive content curation
  - Staff training and institutional commitment to building empathy-driven services
  - Community partnerships and user engagement models that ensure no one is left behind

Armenian participants engaged actively in the Q&A portion of the webinar, exchanging perspectives on local challenges and exploring how similar models could be adapted to the Armenian context. The session sparked reflection and motivation, especially among librarians working in regional settings who are eager to expand the scope of inclusive services in their own institutions.

This event not only reinforced the spirit of Armenian–Latvian cooperation, but also empowered Armenian library professionals to rethink inclusivity not as a separate initiative, but as a core principle of library service design. It underscored the idea that an inclusive library is

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

not only physically accessible - but also socially responsive, emotionally safe, and culturally respectful.

The webinar marked yet another step toward building a modern, inclusive library ecosystem in Armenia, informed by best practices and enriched by international dialogue.

### ***From Results to Vision: Advancing Library Development Together***

Building on this momentum, Armenia is taking steady steps toward strengthening its library sector through collaboration, capacity-building, and knowledge exchange. The Armenian–Latvian partnership has laid the groundwork for more inclusive, innovative, and community-oriented practices. As the outcomes of these initiatives continue to unfold, Armenian libraries are well-positioned to further evolve as accessible and engaged cultural spaces serving diverse audiences in the years to come.

## **ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

---

### **ՆՈՐԱԾՆՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ\***

**ՀՏԴ: 021.4**

### **ԳԱՐԵԳԻՆ ՂՈԶԻԿՅԱՆ**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**

**ORCID: [0009-0000-2409-2673](https://orcid.org/0009-0000-2409-2673)**

Նորաձևության ցուցադրությունը դիզայների կողմից ներկայացված միջոցառում է. երբ նորաձևության շաբաթվա ընթացքում ցուցադրելու իրենց հագուստների և աքսեսուարների սպասվող շարքը: Ամբողջ տարվա ընթացքում իրականացվում են մի շարք ցուցադրություններ տարբեր քաղաքներում, որոնցից ամենահանրահայտներն են Փարիզի և Նյու Յորքի նորաձևության շաբաթները: Միլանում, Լոնդոնում, Բեռլինում նորաձևության շաբաթները ևս հայտնի են աշխարհում:

Նորաձևության շաբաթները անցկացվում են անսպասելի վայրերում, անգամ գրադարաններում: Եվ հարց է առաջանում, թե ի՞նչ առնչություն ունեն գրադարանները նորաձևության ցուցադրությունների և միջոցառումների հետ:

Գրադարանները, լինելով կրթական և մշակութային կենտրոններ, համարվում են յուրաքանչյուր երկրի և քաղաքի ճարտարապետական կոթողներն ու տեսարժան վայրերը, այդ պատճառով գրավում են դիզայներների, նորաձևության տների և ցուցադրության կազմակերպիչների ուշադրությունը: Տարիներ շարունակ ցուցադրու-

---

\* Հոդվածը ներկայացվել է 26.04.2025, ընդունվել է տպագրության 17.06.2025:

The article was submitted on 26.04.2025, accepted for publication on 17.06.2025.

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թյուններ ներկայացվել են Փարիզի ազգային գրադարանում, Նյու Յորքի հանրային գրադարանում, Օքսֆորդի համալսարանի գրադարանում, Բրիտանական գրադարանում, Կոնգրեսի գրադարանում և այլուր:



*Նկար 1.  
Victoria Beckham  
հավաքածուի  
ցուցադրությունը*

Առավել հաճախ նորաձևության շաբաթվա ցուցադրություններ կազմակերպվում են Նյու Յորքի հանրային գրադարանում: Դրանցից ուշադրության են արժանի Victoria Beckham, Malo, Anne Klein, Y&K և այլ ապրանքանիշերի նորաձևության հավաքածուների ցուցադրությունները:



*Նկար 2.  
Jill Stuart աշնանային  
ցուցադրությունը՝ Նյու  
Յորքի հանրային  
գրադարանում*

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձնացնենք նաև 2009 թ. սեպտեմբերին գրադարանում տեղի ունեցած Jill Stuart բրենդի աշնանային հավաքածուի ցուցադրությունը, նաև «Կախարդական գրադարան» միջոցառումը (2018 թ.), որի ժամանակ Dolce & Gabbana նորաձևության տան Alta Gioielleria-ն ցուցադրվել էր 120 յուրօրինակ ոսկյա իրեր:



*Նկար 3, 4, 5.*

*Dolce & Gabbana նորաձևության տան  
Alta Gioielleria հավաքածուի գործերից*

Այսքանով, սակայն, կախարդական երեկոն չի ավարտվում. ցուցադրությունը զարդարում էին նյույորքյան նկարիչ Նիկ Գեորգիուի հանրաճանաչ կիսանդրիները, որոնք ստեղծվել էին վերամշակված գրքերից և լուսավորված էին ապակե ցուցափեղկերում: Այդ կիսանդրիները կրում էին Dolce & Gabbana-ի հավաքածուի զարդերը:

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նկար 6, 7.

*Նիկ Գեորգիուի կիսանդրիներն զարդարված Dolce & Gabbana-ի զարդերով*

2013 թ. Բրիտանական գրադարանում Սուրբ Մարտինի արվեստի և դիզայնի կենտրոնական քոլեջի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվեց նորաձևությանն ուղղված ցուցադրություն-միջոցառում, որը անցկացվեց «LATE» խորագրով միջոցառումների շրջանակում: Նախաձեռնության հիմնական նպատակն էր հանրայնացնել գրադարանում պահվող նորաձևության թեմատիկ հավաքածուները, ներկայացնել ոլորտի անցյալի, ներկայի և ապագայի համատեքստային զարգացումները՝ միավորելով ավանդական և ժամանակակից մոտեցումները:


Ցուցադրությունն անցավ իբրև նորաձևության թեմայով բազմաբովանդակ միջոցառում, որի ընթացքում ոչ միայն ցուցադրվեցին գրադարանի համապատասխան հավաքածուները, այլև կազմակերպվեցին գործնական սեմինարներ և գիտակրթական ձևաչափով

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ներկայացումներ: Հատուկ ընդգծվեց բրիտանական նորաձևության մամուլի պատմական զարգացումների նշանակությունը՝ լուսաբանելով տպագիր հարթակների դերը նորաձևության գաղափարների տարածման գործում:

Միջոցառման կազմակերպիչները ներշնչվել էին գրադարանի հարուստ և բազմաժանր հավաքածուներից՝ փաստելով, որ Բրիտանական գրադարանը ոչ միայն պահպանում է նորաձևության պատմական հիշողությունը, այլև խթանում է ստեղծագործական և ուսումնագիտական մտածողությունը: Այս միջոցառումը վեր էր հանում գրադարանի՝ որպես գիտամշակութային կենտրոնի դերը, որտեղ տեղեկատվական ռեսուրսները փոխակերպվում են գործնական և կրթական ներշնչման աղբյուրի:

Երեկոյի ընթացքում GQ-ի գլխավոր խմբագիր Դիլան Ջոնսը, նորաձևության նկարագրող Տանյա Լինզը, նորաձևության ներկայացուցիչ Իեն Ռ. Ուեբը և գրող Կամիլա Մորթոնը բաց զրույց ունեցան նորաձևությամբ հետաքրքրվողների հետ:






Նկար 8, 9.

*«LATE» միջոցառման ցուցադրությունը Բրիտանիայի գրադարանում*

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորաձևության ցուցադրություններ և միջոցառումներ տեղի են ունենում ոչ միայն Բրիտանական գրադարանում: Օքսֆորդի համալսարանի Բողեյան գրադարանում, որը համալսարանի հիմնական հետազոտական գրադարանն է, նույնպես դարձավ նորաձևության ցուցադրման վայր: 2018 թվականին Ellie Sanderson բրենդն այստեղ ներկայացրեց իր հարսանյաց զգեստների նոր հավաքածուն:



Նկար 10, 11, 12.

*Ellie Sanderson բրենդի ցուցադրությունը  
Օքսֆորդի համալսարանի Բողեյան գրադարանում*

Նմանատիպ ցուցադրություններ են եղել նաև Ֆրանսիայի ազգային գրադարանում. իր հավաքածուներն է ներկայացրել հանրաճանաչ Puma սպորտային բրենդն, իսկ 2023 թ. Հենրի Լաբրուստե հոյակապ դահլիճում ներկայացվել է Celine նորաձևության տան 2024 թ. գարուն-ամառ հավաքածուն:

## ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---



Նկար 13.

*Puma սպորտային բրենդի ցուցադրությունը  
Ֆրանսիայի ազգային գրադարանում*

Ռուսաստանի պետական գրադարանում անցկացվել է Ermanno Scervino բրենդի փակ ցուցադրությունը:



Նկար 14.

*Ermanno Scervino բրենդի ցուցադրությունը  
Ռուսաստանի պետական գրադարանում*

## **ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

---

Այս միջոցառումներն անհրաժեշտ են ժամանակակից գրադարանների գովազդի համար՝ հավաքածուների վրա հանրության ուշադրությունը սևեռելու համար:

Այսպիսի ցուցադրությունները եղել են, լինում են և կլինեն, քանի որ գրադարաններն իենց յուրահատուկ ճարտարապետական գեղեցկությամբ՝ շքեղություն, նրբություն և առանձնակի փայլ է հաղորդում նորաձևության ցուցադրություններին և միջոցառումներին:

## **ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ**

### **ՇՈՒՇԱՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՑ**

*1889, Ստավրոպոլ – 1969, Մոսկվա*

### **Մշակույթի և գաղափարի պահպանը**

**ՀՏԴ 929:947.925 Մանուշարյանց+02**

1970 թ. մարտի 12-ին, Թալինի շրջանային խորհրդի պաշտոնաթերթում՝ «Կոմունիզմի դրոշով», հրապարակվեց Շուշանիկ Մանուշարյանցի հոդվածը՝ «Վլադիմիր Իլյիչի գրադարանում» վերնագրով, ուր հակիրճ ներկայացրեց իր կյանքի այն բացառիկ դրվագները, երբ որպես Վլադիմիր Լենինի գրադարանավարուհի՝ աշխատել էր նրա գրադարանում: Այս պաշտոնը, սակայն, Շուշանիկ Մանուշարյանցի հագեցած ու բովանդակալից կենսագրության մի մասն է միայն: Նրա կյանքի ուղին ավելի մեծ է ու հետաքրքրական:

Շուշանիկ Մկրտչի Մանուշարյանցը ծնվել է 1889 թ. սեպտեմբերի 15-ին Ստավրոպոլի երկրամասի Բուդյոնովսկ քաղաքում: Ավարտելով տեղի գիմնազիան՝ 1907 թ., դեռևս 18 տարեկան հասակում, նա մեկնել է Պետերբուրգ և ընդունվել ժամանակի հայտնի իգական (Բեստուժկյան) հաստատությունը: Սա այն կրթական հաստատությունն էր, որտեղ ուսանել են Ռուսաստանի ամենախելացի և առաջադեմ կանայք: 1912-1914 թթ. Շուշանիկն ապրել է Իտալիայի Կապրի կղզում՝ հնարավորություն ունենալով խորությամբ ուսումնասիրել իտալերենը, արվեստն ու գրականությունը: Հենց Կապրիում էլ նա ծանոթացել և մտերմացել է ռուսական մշակույթի երեք հսկաների՝ Ալեքսեյ Գորկու, Ֆյոդոր Շալյապինի և Իվան Բունինի հետ: Այս կապերը հետագայում խորը ազդեցություն են թողել նրա գաղափարական և մշակութային կողմնորոշման վրա:

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

1917 թ.՝ հեղափոխական Պետրոգրադում, Մանուչարյանցն աշխատել է հեռագրական գործակալության գրական բյուրոյում: 1918 թ. գարնանը նա տեղափոխվել է Մոսկվա և աշխատել Համառուսաստանյան Կենտգործկոմի հրատարակչությունում: Նույն տարվա հունիսին ընդունվել է Ռուսաստանի կոմունիստական կուսակցության շարքերը: 1919 թ. ընդունվել է նոր ստեղծված Պետհրատ (Պետական հրատարակչություն), զբաղվել գրադարանային աշխատանքով, այնուհետև դարձել հրատարակչության խմբագրական կոլեգիայի քարտուղարը: Այդ ժամանակներից նա ներգրավվել է պետական և կուսակցական հրատարակչական գործունեության մեջ:

1920 թ. մարտի 14-ից Շուշանիկ Մանուչարյանցը դարձել է Վլադիմիր Իլյիչ Լենինի գրադարանի գրադարանավարուհին: Սա բացառիկ պաշտոն էր, որը ենթադրում էր ոչ միայն գրքերի պահպանում ու դասակարգում, այլև երկրի ղեկավարին տեղեկատվության սպասարկում: 1924-1930 թթ. նա շարունակել է իր աշխատանքը՝ այս անգամ Նադեժդա Կրուպսկայայի՝ Լենինի այրու անձնական գրադարանում, որը տեղակայված էր հենց Կրեմլում:


Մանուչարյանցն ավելի քան 25 տարի աշխատել է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: Այդ տարիներին նա կազմել է, խմբագրել ու հրատարակել մի շարք արժեքավոր գրքեր՝ նվիրված Լենինի կենսագրությանը, հեղափոխական մամուլին և խորհրդային գրահրատարակչության պատմությանը:



## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

Մահացել է 1969 թ. հունվարի 24-ին և թաղվել Մոսկվայի Նովոդևիչյան գերեզմանատանը:

Խորհրդային շրջանում թողարկվել է փոստային ծրար Շուշանիկ Մանուշարյանցի պատկերով:



Հեղինակ է մի շարք գրքերի:

✓ Даты жизни и деятельности Ленина. 1870-1924: 2-е изд., испр. и доп. /Под ред. Г. А. Тихомирнова.- Москва: Парт. изд-во, 1933.- 307, [4] с.

✓ Большевицкая "Правда": [Сборник]: К 25-летию основания "Правды".- [Москва]: Партиздат, 1937.- 255 с.

✓ Աշխատանքը Վլադիմիր Իլյիչի գրադարանում /Թարգմ.' Ս. Խաչատրյան; Խմբ.' Վ. Հարությունյան.- Երևան: Հայպետհրատ, 1960.- 13 էջ:

✓ В библиотеке Владимира Ильича.- Москва: Политиздат, 1965.- 111 с.

✓ Վլադիմիր Իլյիչի գրադարանում /Թարգմ.' Ս. Կ. Խաչատրյան; Խմբ.' Ա. Ա. Լյուսիկյան.- Երևան: Հայաստան, 1966.- 133 էջ:

✓ В библиотеке Владимира Ильича. 2-е изд, доп. /Ред. В. Н. Светцов.- Москва: Политиздат, 1970.- 115 с.

✓ Знакомство с Горьким //В книге М. Горький в воспоминаниях современников.- 1981.- с. 276-280.

Ռուսաստանի Դաշնության ժողովրդական արտիստ Վյաչեսլավ Մանուշարովը Շուշանիկ Մանուշարյանցի եղբոր՝ ՌՍԽՍՀ վաստակավոր գյուղատնտես Գեորգի Նիկիտայի Մանուշարովի թոռն է:

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

Վյաչեսլավ Մանուչարովի հարցազրույցը  
«Sputnik Արմենիա»-ին «Լենինն ու Շուշանիկ տասնամյակի տարածումը.  
դերասան Մանուչարովը բացահայտել է ընտանեկան  
գաղտնիքները» վերնագրով հասանելի է հետևյալ հղումից՝

[https://arm.sputniknews.ru/20180621/armenia-vyacheslav-manucharov-lenin-shushanik-12790520.html?fbclid=IwY2xjawJsl\\_IleHRuA2FlbQlXMAABHizOwNipRrf\\_UQCfnjyBq9LQFTBCDHIFmvyXpR3M-u5Tlsc9gyiLqpDQymseL\\_aem\\_dGCAa5mxQAkgZZO9kLMaog](https://arm.sputniknews.ru/20180621/armenia-vyacheslav-manucharov-lenin-shushanik-12790520.html?fbclid=IwY2xjawJsl_IleHRuA2FlbQlXMAABHizOwNipRrf_UQCfnjyBq9LQFTBCDHIFmvyXpR3M-u5Tlsc9gyiLqpDQymseL_aem_dGCAa5mxQAkgZZO9kLMaog)

**Պատրաստեց՝ Տիգրան Զարգարյան**  
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Գլխավոր խմբագրի սյունակ ..... 3

### **ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

#### **ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ուսանող-ընթերցողների կողմնորոշիչները  
թվային դարաշրջանում..... 5

#### **ՍՈՆԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Արեստավորում գրադարանավարների համար..... 29

### **21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ**

#### **ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Աստվածաշունչը թվային դարաշրջանում..... 48

#### **ՌՈՒԶԱՆՆԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

Համահայկական թվանշային գրադարանը՝  
Գիտության զարգացման հարթակ..... 65

#### **ԱՍՏԴԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ժառանգություն և նորարարություն.  
ՀՀ ԳԱԱ 80-ամյա ուղին ..... 74

### **ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ**

#### **ԶԱՐՈՒՀԻ ՏՈՆՈՅԱՆ**

Դպրոցական գրադարանների դերը  
ՀՀ կրթական համակարգում..... 84

### **ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ**

#### **ԱՐՓԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Ապարան խոշորացված համայնքի գրադարանները..... 97

**ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ**

*Մանկական գրադարանները  
ժամանակակից աշխարհում..... 62*

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

**ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ,  
ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Մատենագիտական հետախուզումներ..... 110*

**ՀՈՎԱԿԻՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

*Դաստիարակության խնդիրը «Բազմավէպ» ամսագրում.....141*

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԻՐԱ ԱՃԵՄՅԱՆ**

*Հայ-լատվիական գրադարանային երկխոսություն..... 154*

**ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԳԱՐԵԳԻՆ ՂՈԶԻԿՅԱՆ**

*Նորաձևության ցուցադրությունները գրադարաններում..... 161*

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ**

*Շուշանիկ Մկրտչի Մանուչարյանց..... 169*

## CONTENTS

<i>Editor-in-Chief's Column</i> .....	3
---------------------------------------	---

### THEORY AND PRACTICE

#### ARMINE HOVHANNISYAN

<i>Orientations of Student-Readers in the Digital Age</i> .....	5
---	---

#### SONA MESROPYAN

<i>Attestation for Librarians</i> .....	29
---	----

### 21ST CENTURY LIBRARY

#### MAYA GRIGORYAN

<i>The Bible in the Digital Age</i> .....	48
---	----

#### RUZANNA TUMANYAN

<i>The Pan-Armenian Digital Library: A Platform for Scientific Advancement</i> .....	65
--	----

#### ASTGHIK HOVHANNISYAN

<i>Heritage and Innovation. The 80-year Journey of the National Academy of Sciences of Armenia</i> .....	74
--	----

### LIBRARIES OF EDUCATIONAL INSTITUTIONS

#### ZARUHI TONOYAN

<i>The Role of School Libraries in Educational System of RA</i> .....	84
---	----

### REGIONAL AND COMMUNITY LIBRARIES

#### ARPINE HAYRAPETYAN

<i>Libraries of the Enlarged Aparan Community</i> .....	97
---	----

### CULTURAL HERITAGE

#### TIGRAN ZARGARYAN, MERY MANUKYAN, MAYA GRIGORYAN

<i>Bibliographical Searches</i> .....	110
---------------------------------------	-----

Հայերեն բաժնի խմբագիր  
Հայերեն բաժնի սրբագրիչ  
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝  
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան  
Գոհար Սարգսյան  
Նունե Շահումյան  
Ռուզաննա Թումանյան

Editor of Armenian section  
Proofreader for Armenian section  
Editor and proofreader of English  
Computer design and pagination

Nelly Hayrapetyan  
Gohar Sargsyan  
Nune Shahumyan  
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,  
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝  
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal  
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

